# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**Ներածություն** ..... 5

**Գնաճի զարգացումներ** ..... 7

**Գնաճի գործոններ** ..... 11
Արտաքին միջավայր ..... 11
Տոկոսադրույքներ և փոխարժեք ..... 15
Վճարային հաշվեկշիռ ..... 20
Դրամավարկային զարգացումներ ..... 23
Համախառն պահանջարկ և առաջարկ ..... 27
Աշխատանքի շուկա ..... 31
Ներմուծման և ներքին արտադրանքի գներ ..... 32

**Մակրոտնտեսական կանխատեսումներ** ..... 36
Արտաքին միջավայրի զարգացումներ ..... 36
Ներքին տնտեսության զարգացումներ ..... 37
Գնաճի կանխատեսումներ ..... 38

**ՀՀ ԿԲ խորհրդի նիստի արձանագրություններ** ..... 40

**Ֆինանսական համակարգի զարգացումներ** ..... 48

**Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ** ..... 60

**Մակրոտնտեսական ցուցանիշները**
**2006 թ. հունվար – հունիսին** ..... 66

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ** ..... 80

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*Մ. Բարսեղյան, Տ. Սարգսյան*
ՀՀ արտաքին պարտքը 2005 թվականին ..... 81

*Կ.Կարապետյան, Ա.Դավթյան, Տ.Սարգսյան*
Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը 2005 թվականին ..... 89

# Ներածություն

2006 թվականի հունիսին 12-ամսյա գնաճը կազմել է 2.7%՝ կանխատեսված 3.4%-ի փոխարեն, որին համապատասխանում է հունիսին, դեկտեմբերի համեմատ, 4.3% գնաճի ցուցանիշը: Ընդ որում՝ սպառողական գների զամբյուղի երեք խոշոր բաղադրիչների՝ պարենային, ոչ պարենային ապրանքատեսակների և ծառայությունների գները բարձրացել են համապատասխանաբար 3.4%, 5.1% և 2.2%-ով:

Նախորդ եռամսյակի համեմատ տնտեսական աճի տեմպերն արագացել են, իսկ երկրորդ եռամսյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, տնտեսական աճը կազմել է 14.1%: Տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը, ինչպես և նախորդ եռամսյակում, եղել է շինարարության և ծառայությունների ոլորտը: Նշված ոլորտների տարեկան աճը երկրորդ եռամսյակում կազմել է համապատասխանաբար 38.1% և 11.0%: Ճյուղում եկամուտների հավասարաչափ բաշխմամբ պայմանավորված կապիտալ շինարարության աճի շարունակական բարձր տեմպերը սպառողական շուկայում խթանել են պահանջարկը, որի արդյունքում գնաճային ճնշումներ են առաջացել:

Տնտեսության իրական հատվածի մյուս երկու ճյուղերում՝ արդյունաբերությունում և գյուղատնտեսությունում, երկրորդ եռամսյակում համապատասխանաբար արձանագրվել է իրական ծավալների 1.1% և 8.5% տարեկան աճ: Ընդ որում, եթե արդյունաբերության աճի տեմպի նվազումը սպառողական շուկայում չեզոք ազդեցություն է ունեցել, ապա գյուղատնտեսությունում արձանագրված բարձր իրական աճը որոշակիորեն զսպել է գնաճի ցուցանիշը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ գյուղատնտեսության աճը պայմանավորվել էր սովորականից շոգ եղանակի պայմաններում որոշ գյուղմթերքների վաղաժամկետ հասունացմամբ, ակնկալվում է, որ տարվա հաջորդ եռամսյակներում իրական աճի տեմպը նվազելու է՝ ընդլայնողական ազդեցություն ունենալով գնաճի վրա:

2006 թվականի երկրորդ եռամսյակում շարունակվել է համախառն պահանջարկի արագացված աճի տեմպերի դրսևորումը՝ պայմանավորված ինչպես բնակչության եկամուտների ավելացմամբ, այնպես էլ արտաքին ֆինանսական միջոցների շարունակական ներհոսքով: Ամբողջական պահանջարկի աճին էապես նպաստել է ներքին պահանջարկի աճը, իսկ վերջինիս կառուցվածքում արձանագրվել է մասնավոր հատվածի ծախսումների առաջանցիկ աճ. 2006 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, մասնավոր հատվածի ծախսումների իրական աճը կազմել է 11.2%՝ պետական հատվածի ծախսերի մոտ 4% աճի պարագայում: Պահանջարկի անընդհատ աճող տեմպերը նույնպես գնաճը խթանող գործոններ են:

Վերջին տարիներին արձանագրվող բարձր տնտեսական աճը, որը շարունակվել է նաև 2006 թվականի առաջին վեց ամիսներին, անմիջական ազդեցություն է ունեցել աշխատանքի շուկայի վրա՝ հետզհետե նվազեցնելով գործազրկության մակարդակը և հանգեցնելով աշխատավարձի աստիճանաբար ավելացմանը: Արդյունքում բարձրացել է միջին ամսական աշխատավարձը, որը 2006 թվականի մայիսի դրությամբ կազմել է 63.5 հազար դրամ՝ նախորդ տարվա մայիսի համեմատ իրական արտահայտությամբ ավելանալով 27.6%-ով: Միևնույն ժամանակ, 2006 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, աշխատուժի արտադրողականությունը ավելացել է 13.1%-ով: Վերջինս, զիջելով իրական աշխատավարձի աճի ցուցանիշին, սպառողական շուկայում որոշակի գնաճային ճնշումներ է առաջացրել:

2006 թ. երկրորդ եռամսյակում արտաքին հատվածի զարգացումները գնաճի վրա ունեցել են երկակի ազդեցություն՝ գնաճի զսպման և նպաստման: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է ներմուծման դոլարային գների աճի տեմպերի արագացումը. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 20%-ով: Ու թեև դրամի արժևորումը և Կառավարության կողմից գազի սակագների ավելացման սուբսիդավորումը մասամբ չեզոքացրել են ներմուծման գների աճի բացասական հետևանքները, այնուամենայնիվ դրամային արտահայտությամբ դրանք բարձրացել են 13%-ով՝ նպաստելով ներքին գների աճին: Մյուս կողմից, 2006 թ. երկրորդ եռամսյակում խորացել է ընթացիկ հաշվի պակասուրդը (33.8 մլն ԱՄՆ դոլարով)՝ հիմնականում պայմանավորված առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճով (77.9 մլն ԱՄՆ դոլարով): Ներմուծման միջոցով սպառողական ապրանքների իրական ծավալների լրացուցիչ առաջարկի ապահովման և եկամուտների արտահոսքի ավելացման արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդի ավելացումը գնաճի վրա ունեցել է զսպող ազդեցություն:

Վճարային հաշվեկշիռը 2006 թ. երկրորդ եռամսյակում հավելուրդով է եղել, ինչը ընթացիկ հաշվի պակասուրդի նկատմամբ կապիտալ և ֆինանսական զուտ ներհոսքի զգալի գերազանցման արդյունք է: Վերջինս, համակցվելով դրամի նկատմամբ սեզոնային պահանջարկի աճի հետ, հանգեցրել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 2.7% արժևորման: Իսկ դա էլ, ինչպես արդեն նշվեց, զսպել է գնաճը՝ ներմուծման դոլարային գների բարձր աճի մի մասի չեզոքացման միջոցով:

Հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ազդեցության առումով սպասվածից ավելի քիչ ընդլայնողական է եղել. հարկաբյուջետային ազդակը երկրորդ եռամսյակում եղել է 1.1% ընդլայնող՝ ծրագրված 2.0%-ի փոխարեն: Դա հիմնականում պայմանավորվել է պետական ծախսերի՝ ծրագրվածի համեմատ թերի կատարումով:

Դրամավարկային հատվածի ցուցանիշների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի ցածր է եղել, քան 2006 թվականի առաջին եռամսյակում: Փողի զանգվածը երկրորդ եռամսյակի վերջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 26.2%-ով (առաջին եռամսյակում՝ 30.8%), իսկ դրամային զանգվածը նույն ժամանակահատվածում ավելացել է 40.6%-ով (առաջին եռամսյակում՝ 54.6%): Փողի առաջարկի կառավարման նման մոտեցումը տնտեսության մյուս հատվածներում առաջին եռամսյակի միտումների պահպանման և գնաճային ռիսկերի դրսևորման պայմաններում գնաճը նպատակային ցուցանիշի շուրջ կառավարելու նպատակ է ունեցել:

Ընդհանուր առմամբ, երկրորդ եռամսյակում իրականացված դրամավարկային քաղաքականությունը կարելի է համարել արդյունավետ: Դրան մեծապես նպաստել են ԿԲ գործիքակազմի կիրառման մեխանիզմների փոփոխությունները. ռեպո գործառնությունները ընդունվել են որպես դրամավարկային քաղաքականության հիմնական գործիք, և ավելացել է դրանց կնքման հաճախականությունը: Կապված ԿԲ գործիքակազմի կիրառման մեխանիզմների փոփոխությունների հետ՝ էական առաջընթաց է արձանագրվել երկու ուղղություններով. 1. հնարավոր է դարձել ԿԲ վերաֆինանսավորման (ռեպո) տոկոսադրույքի միջոցով ազդակների փոխանցումը ֆինանսական շուկային, որն աստիճանաբար հանգեցնելու է տոկոսադրույքների փոխանցման լծակի ակտիվացմանը, 2. առևտրային բանկերն ավելի արդյունավետ են կառավարել ԿԲ-ում թղթակցային հաշիվները, որի արդյունքում բանկային համակարգում էապես նվազել է ավելցուկային իրացվելիությունը: Վերջինս հիմնականում ուղղվել է տնտեսության վարկավորմանը, որի աճին նպաստել է նաև արտաքին ակտիվների փոխարկումը ներքին վարկավորման:

Գնաճի հաշվետվությունը եզրափակվում է 2007 թ. երկրորդ եռամսյակի գնաճի կանխատեսումների ներկայացմամբ (ներառյալ նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ ԿԲ խորհրդի նիստերի արձանագրությունները): Կանխատեսվում է, որ 2007 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում թեև որոշակի կդանդաղեն տնտեսական աճի տեմպերը, այնուհանդերձ կմնան բարձր մակարդակի վրա, իսկ վերջինիս շարժիչ ուժը կշարունակեն մնալ ծառայությունների և շինարարության ոլորտները: Կանխատեսվում է, որ ի հաշիվ ներքին պահանջարկի աճի, ամբողջական պահանջարկի բարձր աճ կգրանցվի նաև 2007թ. առաջին և երկրորդ եռամսյակներում: Կդրսևորվի ներմուծվող ապրանքների, այդ թվում՝ վառելիքի և ցորենի միջազգային գների աճի միտում: Ակնկալվում է, որ նշված պայմաններում 2007 թ. երկրորդ եռամսյակի գնաճը կգերազանցի 3% ծրագրային մակարդակը: Ընդ որում՝ բարձր գնաճի միջավայր ձևավորել են գնաճի և՛ առաջարկի, և՛ պահանջարկի գործոնները: Գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու և գնաճային ճնշումները զսպելու համար ԿԲ-ն կշարունակի նախորդ եռամսյակների համեմատությամբ ավելի քիչ ընդլայնողական քաղաքականության իրականացումը, որի արդյունքում հնարավոր է փողի ագրեգատների աճի տեմպերը վերանայվեն, իսկ տոկոսադրույքները՝ բարձրացվեն:

# Գնաճի զարգացումներ

## ԳՆԱՁՆ ԸՍՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ, ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ

Սույն թվականի ապրիլից ՀՀ ԱՎԾ-ը կատարել է ՍԳԻ հաշվարկման մեթոդաբանության մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ հաշվի առնելով ՀՀ-ում 2004 թ. (2004 թ. ապրիլի 1-ից 2005 թ. մարտի 31-ը) տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքները և 2005 թ. գնային փոփոխությունները, իրականացրել է սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանք-ծառայությունների տեսակարար կշիռների վերահաշվարկ, ինչպես նաև սպառողական զամբյուղում լրացուցիչ ներառել է 70 ապրանք-ծառայություններ՝ դիտարկվող ապրանք-ծառայությունների քանակը 400-ից հասցնելով 470-ի: Արդյունքում՝ սպառողական զամբյուղում նվազել է պարենային ապրանքների տեսակարար կշիռը (մոտ 12.1%-ով) և ավելացել ծառայությունների (մոտ 11.5%-ով) ու ոչ պարենային (մոտ 0.64%-ով) ապրանքներինը, իսկ որպես բազիսային տարի՝ 2002 թվականի փոխարեն ընդունվել է 2005 թվականը: Միաժամանակ, միջին հանրապետական ցուցանիշների հաշվարկներում ներառվել է Արարատի մարզը (Արտաշատ քաղաքը): Սպառողական գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության փոփոխություններով պայմանավորված՝ վերահաշվարկվել են 2006 թվականի հունվար-մարտ ամիսների ինդեքսները:

*Գնաճի վերահաշվարկված մակարդակները*

| 2006 | Նախորդ ամսվա համեմատ | 2005 թ. դեկտեմբերի համեմատ | Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ | Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կուտակային |
|---|---|---|---|---|
| Հունվար | 2.5 | 2.5 | -3.1 | -3.0 |
| Փետրվար | 0.2 | 2.7 | -2.2 | -2.5 |
| Մարտ | 0.1 | 2.8 | -1.1 | -2.0 |
| Ապրիլ | 0.3 | 3.1 | 0.1 | -1.5 |
| Մայիս | 2.4 | 5.6 | 2.4 | -0.7 |
| Հունիս | -1.2 | 4.3 | 2.7 | -0.2 |

2006 թ. հունիսին, 2005 թ. հունիսի համեմատ, գրանցվել է 2.7% գնաճ, ընդ որում՝ պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) և ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունը համապատասխանաբար կազմել է 3.4%, 5.1% և 2.2%: Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 3.4% գնաճը հիմնականում պայմանավորվել է «Բանջարեղեն» (27.9%), «Շաքարավազ» (36.6%), «Միս և մսամթերք» (5.1%) և «Ձկնամթերք» (36.9%) ենթաապրանքախմբերի գնաճով, որոնք ապրանքախմբի գնաճին նպաստել են համապատասխանաբար 2.4, 1.0, 0.9 և 0.4 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, «Հացամթերք» (-1.8%), «Միրգ» (-1.8%) և «Ձու» (-1.8%) ենթաապրանքախմբերում գրանցված գնանկումները մեղմել են ապրանքախմբի գնաճը համապատասխանաբար -0.5, -0.5 և -0.3 տոկոսային կետով: «Ոչ պարենային ապրանքներ» ապրանքախմբում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է «Ոսկերչական ապրանքներ» (38.9%) ենթաապրանքախմբում, իսկ «Ծառայություններ» ապրանքախմբում՝ «Կապի ծառայություններ» (12.39%) և «Կրթության համակարգի ծառայություններ» (8.7%) ենթաապրանքախմբերում: Գնանկում գրանցվել է միայն «Հանգստի կազմակերպման ծառայություններ» (-3.8%) ենթաապրանքախմբում:


2006 թ. 2-րդ եռամսյակի գնաճը նախորդ եռամսյակի վերջի համեմատ կազմել է 1.5%, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 1.9%, ոչ պարենային ապրանքների գների 2.3% և ծառայությունների սակագների 0.3% աճով՝ նպաստելով գնաճին համապատասխանաբար 1.0, 0.4, և 0.3 տոկոսային կետով:

2006 թ. 1-ին կիսամյակում, 2005 թվականի դեկտեմբերի համեմատ, գրանցվել է 4.3% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է սպառողական զամբյուղի 53.9%-ը կազմող պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 6.7% աճով: Վերջինս գնաճի կիսամյակային ցուցանիշի ձևավորմանը նպաստել է 3.6 տոկոսային կետով:

*2006 թ. առաջին կիսամյակի գնաճը պայմանավորող հիմնական ապրանքախմբերը*

| Անվանում | Գնի ինդեքսը նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, % |
|---|---|
| **ՍԳԻ** | **104.3** |
| **Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝** | **106.7** |
| բանջարեղեն և կարտոֆիլ | 144.6 |
| միրգ | 138.3 |
| շաքարավազ | 134.3 |
| մսամթերք | 102.5 |
| ձկնամթերք | 117.5 |
| հացամթերք | 100.4 |
| **Ոչ պարենային ապրանքներ, որից՝** | **102.3** |
| շինանյութեր | 105.7 |
| լվացող միջոցներ | 106.7 |
| հագուստեղեն, գործվածք | 100.9 |
| անձնական օգտագործման մեքենաներ և բենզին | 106.3 |
| ոսկերչական ապրանքներ | 129.9 |
| **Ծառայություններ, որից՝** | **101.3** |
| կապ | 111.0 |
| բնակարանային, կոմունալ | 101.7 |
| տրանսպորտի | 100.7 |
| բուժսպասարկման | 100.3 |

*ՍԳԻ փոփոխությունները ըստ հիմնական ապրանքային խմբերի և ծառայությունների (2005 թ. դեկտեմբերի համեմատ)*




2006 թ. 2-րդ եռամսյակում, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ, գրանցվել է 1.7% գնաճ, իսկ 2006 թ. հունվար-հունիսի գնաճը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, նվազել է 0.2%-ով: Միաժամանակ, 2006 թ. 1-ին կիսամյակում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 0.6%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գները բարձրացել են համապատասխանաբար 2.9%-ով և 3.1%-ով: 2005 թ. համանման ցուցանիշները լրիվ հակառակ միտումն են դրսևորել և համապատասխանաբար կազմել են 3.4%, -0.3% և -0.2%, իսկ գնաճի ցուցանիշը կազմել է 2.3%:

Գնաճի ծրագրված տարեկան ցուցանիշի մակարդակի ապահովման առումով կարևորվում է գների բնականոն փոփոխությունների գնահատումը, ինչն էական ազդեցություն է թողնում դրամավարկային


քաղաքականության իրականացման վրա: 2004 թվականի հունիսից ՀՀ ԿԲ-ն որպես բնականոն գնաճի պաշտոնական ցուցանիշ հրապարակում է 15 տոկոսով հատած միջինի մեթոդով հաշվարկված ցուցանիշը[1]:

*Գնաճը և բնականոն գնաճը ըստ տարիների*

| Տարի | Ցուցանիշ | Նախորդ ամսվա համեմատ | Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ | Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ | Նախորդ տարվա համապատասխան ժամանակշրջանի համեմատ |
|---|---|---|---|---|---|
| 2004 | Գնաճ | -0.10 | 6.2 | 4.5 | 7.6 |
| | Բնականոն գնաճ | 0.0 | 0.0 | -0.1 | 0.4 |
| 2005 | Գնաճ | -1.4 | -1.0 | 1.4 | 2.3 |
| | Բնականոն գնաճ | -0.1 | -0.6 | -0.1 | 0.4 |
| 2006 | Գնաճ | -1.2 | 2.7 | 4.3 | -0.2 |
| | Բնականոն գնաճ | 0.0 | 2.3 | 0.6 | 1.9 |

2006 թ. հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, բնականոն գնաճը կազմել է 1.9%՝ հիմնականում պայմանավորված «Տավարի միս» (7.8%), «Դիզելային վառելիք» (8.3%), «Ախտորոշման կենտրոնների ծառայություններ» (2.8%), «Հավի բուդ» (6.6%) և «Բնական գազ» (4.5%) ապրանքատեսակների գների աճով, որոնք բնականոն գնաճին նպաստել են համապատասխանաբար 0.4, 0.3, 0.2, 0.1 և 0.1 տոկոսային կետով:

*ՍԳԻ և բնականոն ՍԳԻ փոփոխությունները, % (նախորդ տարվա դեկտեմբեր = 100)*




[1] *Ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է «ՀՀ ԿԲ բանբեր, 2004 թ. 1-ին եռամսյակ» պարբերականում:*

### *Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն*

*Սպառողական գների ինդեքսի և սպառողական զամբյուղի առանձին ապրանքախմբերի գների ինդեքսների փոփոխությունների ուսումնասիրման և դրանց տատանումները պայմանավորող գործոնների բացահայտման նպատակով 2003 թվականի հունիսից մինչև 2006 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածի համար տարանջատվել և գնահատվել է վիճակագրության տեսության մեջ ընդունված երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը:*

**Գների ամսական ինդեքսների տատանումները պայմանավորող բաղադրատարրերի տեսակարար կշիռները (2003 թ. հուլիս - 2006թ. հունիս) (%)**

| | Տրենդ | Սեզոնայնություն | Պատահական տարր | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| ՍԳԻ | 0.2 | 82.1 | 17.7 | 100.0 |
| 1. Հացամթերք | 9.1 | 27.7 | 63.2 | 100.0 |
| 2. Մսամթերք | 2.3 | 63.5 | 34.3 | 100.0 |
| 3. Ձկնամթերք | 0.0 | 53.7 | 46.2 | 100.0 |
| 4. Կաթնամթերք և յուղեր | 3.2 | 52.8 | 44.0 | 100.0 |
| 5. Միրգ և բանջարեղեն | 2.2 | 86.1 | 11.7 | 100.0 |
| 6. Այլ մթերք | 0.0 | 77.7 | 22.3 | 100.0 |
| 7. Ոչ ոգելից խմիչք | 3.0 | 37.5 | 59.5 | 100.0 |
| 8. Ոգելից խմիչք և ծխախոտ | 2.1 | 25.0 | 72.8 | 100.0 |
| 9. Հագուստ և կոշկեղեն | 4.8 | 32.4 | 62.7 | 100.0 |
| 10. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք | 0.2 | 40.4 | 59.4 | 100.0 |
| 11. Տնայինն գույք | 27.1 | 15.9 | 57.0 | 100.0 |
| 12. Բուժսպասարկում և դեղորայք | 2.3 | 31.4 | 66.3 | 100.0 |
| 13. Տրանսպորտ և կապ | 1.3 | 17.9 | 80.9 | 100.0 |
| 14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառ.-ներ | 2.6 | 26.8 | 70.6 | 100.0 |
| 15. Այլ ապրանքներ և ծառայություններ | 13.4 | 36.0 | 50.6 | 100.0 |

*Հաշվարկները ցույց են տալիս, որ 2002 թ. հուլիս – 2005 թ. հունիս ժամանակահատվածի համեմատ 2003 թ. հուլիս – 2006 թ. հունիս ժամանակահատվածում գնաճի ամփոփ ցուցանիշի վրա մի փոքր նվազել է տրենդի (1.2 տոկոսային կետ) ու սեզոնայնության բաղադրատարրերի (1.2 տոկոսային կետ) և մեծացել պատահական տարրի (2.4 տոկոսային կետ) ազդեցությունը: Ըստ ապրանքախմբերի երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը փոփոխվել է տարբեր կերպ: Տրենդի ազդեցությունը գրեթե բոլոր ապրանքախմբերի վրա ամենափոքր տեսակարար կշիռն ունի և շարունակում է նվազել, մասնավորապես՝ առավելագույն նվազումը գրանցվել է «Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ» (10.8 տոկոսային կետ) ապրանքախմբում, իսկ «Այլ մթերք» ապրանքախմբում տրենդի ազդեցությունը 1.9 տոկոսից իջել է զրոյի: Այնուամենայնիվ, որոշ ապրանքախմբերում գրանցվել է տրենդի բաղադրատարրի զգալի աճ. «Կաթնամթերք» ապրանքախմբի տրենդի տեսակարար կշռը զրոյից աճել է մինչև 3.2 տոկոսային կետ: «Տնայինն գույք» ապրանքախմբի վրա տրենդի ազդեցությունը ավելացել է 18, իսկ «Այլ ապրանքներ և ծառայություններ» ապրանքախմբի վրա՝ 13.2 տոկոսային կետով:*

*Սեզոնայնության բաղադրատարրի ամենամեծ աճը դրսևորել է «Բուժսպասարկում և դեղորայք» ապրանքախմբում (15 տոկոսային կետ) և ամենաշատը նվազել է «Տրանսպորտ և կապ» ապրանքախմբում (13 տոկոսային կետ):*

*Պատահական տարրի ազդեցությունը ամենից ավելի աճել է «Հագուստ և կոշկեղեն» (9 տոկոսային կետ), «Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ» (8 տոկոսային կետ) և «Միրգ և բանջարեղեն» (2.9 տոկոսային կետ) ապրանքախմբերում:*

*Սպառողական գների ինդեքսների տատանողականությունն ուսումնասիրվել է նաև յուրաքանչյուր ապրանքախմբի ամսական գների ինդեքսների վարիացիայի գործակիցների օգնությամբ:*

**Գների ամսական ինդեքսների վարիացիայի գործակիցները 2004, 2005 և 2006 թթ. 1-ին կիսամյակում (%)**


| | 2004 թ. | 2005 թ. | 2006 թ. |
|---|---|---|---|
| ՍԳԻ | 1.12 | 2.56 | 1.43 |
| 1. Հացամթերք | 0.65 | 0.30 | 0.11 |
| 2. Մսամթերք | 0.80 | 2.25 | 0.81 |
| 3. Ձկնամթերք | 27.69 | 20.49 | 17.86 |
| 3. Կաթնամթերք և յուղեր | 1.93 | 0.78 | 0.21 |
| 4. Միրգ և բանջարեղեն | 9.20 | 18.33 | 15.84 |
| 5. Այլ մթերքներ | 1.02 | 0.95 | 0.64 |
| 6. Ոչ ոգելից խմիչք | 0.90 | 0.61 | 0.14 |
| 7. Ոգելից խմիչք և ծխախոտ | 0.32 | 0.08 | 0.05 |
| 8. Հագուստ և կոշիկ | 0.32 | 0.41 | 0.29 |
| 9. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք | 1.03 | 0.92 | 0.49 |
| 10. Տնայինն գույք | 0.07 | 0.18 | 0.73 |
| 11. Բուժսպասարկում և դեղորայք | 0.59 | 0.47 | 0.15 |
| 12. Տրանսպորտ և կապ | 0.90 | 2.07 | 1.46 |
| 14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ | 0.29 | 0.76 | 0.42 |
| Այլ ապրանքներ և ծառայություններ | 0.14 | 0.22 | 0.18 |

*Ըստ աղյուսակի տվյալների՝ գրեթե բոլոր ապրանքախմբերում 2005 թ. նկատվել է տատանողականության աճ, այնուհետև՝ 2006 թ., նվազում, ինչն էլ պայմանավորել է ՍԳԻ համանման վարքագիծը: ՍԳԻ տատանողականությունը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների գների բարձր տատանողականությամբ, որոնցից առավել տատանողական վարքագիծ են դրսևորել «Հացամթերք», «Ձկնամթերք», «Մսամթերք», «Միրգ և բանջարեղեն» ապրանքախմբերը:*


## Արտաքին միջավայր

2006 թվականի երկրորդ եռամսյակում ԱՄՆ տնտեսությունում դրսևորվել են աճի նվազման միտումներ, մինչդեռ Եվրոգոտում շարունակվել են աճի նույն բարձր տեմպերը: Եվրոյի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է եռամսյակի սկզբին, իսկ եռամսյակի վերջին՝ կրկին փոքր-ինչ արժեզրկվել (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 0.2 տոկոս արժեզրկում): ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխությունները հիմնականում արտահայտում են շուկայի մասնակիցների սպասումները Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից նպատակային տոկոսադրույքների բարձրացման վերաբերյալ՝ կախված հրապարակված տնտեսական ցուցանիշներից: Բարենպաստ ցուցանիշների հրապարակումները (բարձր տնտեսական աճ, բարձր գնաճ, ցածր գործազրկություն) հանգեցնում են «բազեների»[2] գերակշռության, տոկոսադրույքների աճի սպասումների ավելացման և դոլարի ուժեղացման, մինչդեռ անբարենպաստ ցուցանիշների դեպքում (ցածր տնտեսական աճ, ցածր գնաճ, բարձր գործազրկություն) «աղավնիների» գերակշռությունը հանգեցնում է տոկոսադրույքների աճի տեմպերի կանգնեցման սպասումների և ԱՄՆ դոլարի արժեզրկման:

***2005 թվականին գրանցված ԱՄՆ դոլարի ուժեղացման միտումը 2006 թվականից դրսևորվեց հակառակ ուղղությամբ***




***Պահպանվում են նավթի գների բարձր աճի տեմպերը***





Նավթի միջազգային գները էապես բարձրացել են երկրորդ եռամսյակի սկզբին՝ հասնելով 75 ԱՄՆ դոլարի՝ բարելի դիմաց: Պատճառը Մերձավոր Արևելքում իրավիճակի շարունակական սրումն էր և միջազգային արժութային շուկաներում ԱՄՆ դոլարի թուլացումը: Այս գործոններով, ինչպես նաև վառելիքի առաջարկի սղությամբ և պահանջարկի շարունակական աճով պայմանավորված՝ երկրորդ եռամսյակում գրանցվել են վառելիքի, ինչպես նաև մյուս հումքային ապրանքների գների ամենաբարձր անվանական արժեքները:


---

*[2] Այսպես են անվանում այն տնտեսագետներին, ովքեր ավելի պահպանողական են գնաճի զսպման հարցում և կողմ են տոկոսադրույքների բարձրացմանը գնաճի նույնիսկ փոքր ռիսկերի դեպքում: Ի տարբերություն «բազեների», «աղավնիները» ավելի մեղմ են վերաբերվում գնաճի ռիսկերին և կողմ են ավելի խթանող քաղաքականությանը՝ ցածր տոկոսադրույքների միջոցով:*

*ԱՄՆ տնտեսական աճը նվազում է, սակայն գնաճը դեռ մնում է բարձր*




*Եվրոգոտու տնտեսական աճը և գնաճը մնում են բարձր մակարդակի վրա*




***ԱՄՆ*** տնտեսական աճը, 2006 թ. առաջին եռամսյակի 5.6 տոկոս բարձր աճի տեմպերի համեմատ, երկրորդ եռամսյակում էապես նվազել է՝ կազմելով 2.9 տոկոս: Ընդ որում՝ մասնավոր սպառումն աճելով 2.6 տոկոսով՝ ունեցել է ամենամեծ ազդեցությունը (1.8 տոկոսային կետ):

ԱՄՆ առևտրային պակասուրդը պահպանել է առաջին եռամսյակի բարձր ցուցանիշը՝ երկրորդում նույնպես կազմելով 5.9 տոկոս ՀՆԱ-ում: Այս ցուցանիշի մեծությունը արդեն մտահոգություններ է առաջացնում, քանի որ, ըստ ամսական վիճակագրական տվյալների, ոչ ռեզիդենտների կողմից ԱՄՆ արժեթղթերում ներդրումները որոշակիորեն նվազում են:

Ամեն դեպքում, ընթացիկ հաշվի պակասուրդի նման բարձր մակարդակի պարագայում գնաճային ճնշումները շարունակվում են ամբողջ աշխարհում, քանի որ ԱՄՆ տնտեսության պահանջարկը ներմուծման միջոցով տեղափոխվում է մյուս երկրներ: Բնականաբար այս ամենի պատճառը խնայողությունների բացասական մակարդակն է ԱՄՆ-ում, որը, վերջին հաշվով, արդեն գլոբալ հիմնախնդիր է:

Նույն բարձր պահանջարկը հանգեցնում է նաև հենց ԱՄՆ-ում սպառողական գների ինդեքսի տարեկան բավականին բարձր աճի ցուցանիշների, որը 2006 թվականի հունիսին կազմել է 4.3 տոկոս: Ֆեդերալ պահուստային համակարգը երկրորդ եռամսյակում շարունակել է «քայլ առ քայլ զսպող քաղաքականությունը»՝ իր ամեն նիստից հետո ավելացնելով նպատակային տոկոսադրույքները 0.25 բազիսային կետով և հասցնելով 5.25 տոկոսի: Սակայն տնտեսական աճի տեմպերի դանդաղումը արդեն իսկ գնաճի որոշակի նվազման հիմքեր է ստեղծում, որը ստիպում է դրամավարկային կարգավորման մարմիններին ավելի զգույշ վերաբերվել տոկոսադրույքների բարձրացման հարցերին, առավել ևս, որ դրանք արդեն ավելի բարձր մակարդակի վրա են:

***Եվրոգոտում*** պահպանվել են առաջին եռամսյակում գրանցված տնտեսական աճի բարձր տեմպերը, սակայն հիմնարար ցուցանիշները դեռևս կայուն չեն: Տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը ներդրումներն են (3.6 տոկոս աճ), որը բավականին դրական միտում է երկարաժամկետ կայուն տնտեսական աճի համար: Այնուամենայնիվ, բարձր կառուցվածքային գործազրկությունը և պետական ֆինանսների անհավասարակշիռ վիճակը որոշակի խնդիրներ են առաջացնում երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի հեռանկարների առումով:

Փոքր-ինչ վատացել է Եվրոգոտու ընթացիկ հաշվի պակասուրդը, որը 2006 թվականի երկրորդ եռամսյակում կազմել է 13.3 մլրդ եվրո (նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածում՝ 11.2 մլրդ եվրո): Առևտրային հաշվեկշռի ավելցուկի կրճատումը միայն մասամբ է փոխհատուցվել գործոնային եկամուտների պակասուրդի կրճատմամբ, մինչդեռ մյուս հոդվածները մնացել են անփոփոխ:

Սպառողական գների ինդեքսի տասներկուամսյա աճը Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած առավելագույն մակարդակից բարձր է՝ 2006 թվականի հունիսի դրությամբ՝ 2.5 տոկոս, որը ստիպում է ԵԿԲ-ին ձեռնարկել տոկոսադրույքների աստիճանական բարձրացման քայլեր: Արդյունքում՝ 2005 թվականի հունիսի վերջի դրությամբ Եվրոբանկի նպատակային տոկոսադրույքը կազմել է 2.75 տոկոս, որը շարունակում է էականորեն ցածր համարվել «չեզոք տոկոսադրույքից»[3]:

***Թուրքիայի*** ՀՆԱ իրական աճը 2006 թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, կազմել է 6.4%: Տնտեսական աճի նման բարձր ցուցանիշը հիմնականում ապահովվել է շինարարության ճյուղի բարձր՝ 25.9% աճի արդյունքում: Ընդ որում՝ վերջինիս էապես նպաստել են նաև Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման շինարարական աշխատանքները: Նույն ժամանակահատվածում առևտրի և արդյունաբերության աճի ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 7.4% և 4.5%:

Թուրքիայում գնաճը դեռևս մնում է բարձր մակարդակի վրա: Ավելին՝ 2006 թ. սկզբից սկսած՝ գնաճի տեմպերի փոքր-ինչ արագացման միտումներ են նկատվել. գնաճը 2006 թ. երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, կազմել է 9.6% (2005 թ. նույն ժամանակահատվածում՝ 8.6%): Միևնույն ժամանակ, 2006 թ. մայիսից արձանագրվել են թուրքական լիրայի արժեզրկման միտումներ, և երկրորդ եռամսյակում փոխարժեքի տարեկան արժեզրկումը կազմել է 6.3%:

### *Թուրքիայի տնտեսությունը անակնկալի է եկել*[*]

*Պատմության ընթացքում տեղի ունեցած ֆինանսական ճգնաժամերից դաս քաղած երկրները, կարծես թե չեն էլ սպասում, որ ճգնաժամային դասական նախադրյալներից բացի, կարող են անակնկալի գալ գերտերությունների վարած քաղաքականություններից՝ չհասցնելով անգամ կիրառել մեղմացնող միջոցառումներ: Ներկայումս նման «նախաճգնաժամային» իրավիճակում է հայտնվել Թուրքիայի տնտեսությունը, որը դեռ չի հասցրել սթափվել իրար հետևից կրկնվող ֆինանսական ճգնաժամերից: Սակայն, ի տարբերություն նախորդ ճգնաժամերի, այս անգամ «նախաճգնաժամային» իրավիճակի[**] պատճառը ոչ թե երկրում ձևավորված տնտեսական թույլ կողմերն են, ինչպես նաև անարդյունավետ քաղաքականությունները, այլև ԱՄՆ կողմից վարվող կոշտ դրամավարկային քաղաքականությունը, ինչն արտահայտվեց տոկոսադրույքների բարձրացմամբ: Եվ երբ վերջերս ակնհայտ դարձավ Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքների հետագա բարձրացման մտադրությունը, ներդրողները սկսեցին ձերբազատվել զարգացող երկրների առավել ռիսկային ակտիվներից: Կապիտալի վերադարձը ԱՄՆ հանգեցրեց տասնյակ երկրներում՝ Հնդկաստանից Կոլումբիա, Հարավաֆրիկյան հանրապետությունից Ռուսաստան, ակտիվների գների կտրուկ նվազման: Սակայն ամենից շատ տուժեց Թուրքիան, որը բազմաթիվ վերլուծաբանների կարծիքով համարվում է զարգացող շուկաների թույլ օղակ: Նշված իրավիճակի հետևանքով կապիտալի ցայտուն «փախուստ» նկատվեց 2006 թ. մայիսից սկսած (պորտֆելային ներդրումների զուտ արտահոսքը մայիսին կազմեց 3.1 մլրդ ԱՄՆ դոլար), ինչը հանգեցրեց լիրայի փոխարժեքի բարձր արժեզրկման՝ բարդացնելով դրամավարկային մարմինների առջև դրված խնդիրները (հունիսի վերջին, ապրիլի վերջի համեմատ, լիրան արժեզրկվեց 19.3%-ով): Սակայն չի բացառվում նաև, որ ՖԴՀ (Ֆեդերալ պահուստային համակարգ) կողմից տոկոսադրույքների բարձրացումը միայն առիթ է կապիտալի արտահոսքի համար, և պետք է հաշվի առնել նաև այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են՝ հարևան երկրներում քաղաքական բախումները, անորոշ վիճակը Եվրոմիությանը անդամակցելու հարցում (սա կարող է նոր քաղաքական ճգնաժամի առջև կանգնեցնել երկիրը), ինչպես նաև գալիք ընտրությունները:*

*Հունիսի ընթացքում Թուրքիայի կենտրոնական բանկը ստիպված եղավ մի քանի անգամ բարձրացնել տոկոսադրույքները՝ գնաճը զսպելու (հունիսին գների աճը, նախորդ տարվա հունիսի համեմատ, կազմեց 10.1%), ինչպես նաև կապիտալի փախուստը կանխելու համար: Մի քանի օրվա ընթացքում ավելի քան 600 մլն ԱՄՆ դոլարի ինտերվենցիաներ իրականացվեցին՝ փոխարժեքի բարձր արժեզրկման տեմպերը զսպելու համար:*

*Ձևավորված իրավիճակը ներդրողներին ստիպեց ուշադրություն դարձնել երկրի տնտեսության հիմնախնդիրներին, այն է՝ չնայած տնտեսական աճի բավարար տեմպերին, այնուամենայնիվ, գործազրկությունը պահպանվում է բարձր մակարդակի վրա, իսկ ընթացիկ հաշվի պակասուրդը հունվար-մայիսի դրությամբ հասել է 16.5 մլրդ ԱՄՆ դոլարի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 11.1 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն: Բացի այդ, Թուրքիայի տնտեսության հիմնական հիմնախնդիրն այն է, որ երկրի ներսում գործում են երկու զուգահեռ տնտեսություններ. մեկը արդյունավետ շուկայական ճյուղ՝ ինտեգրված միջազգային շուկաներին, մյուսը՝ բարեփոխումների կարիք ունեցող անարդյունավետ կիսապետական ճյուղ, որը սպասարկում է ներքին շուկայի գերակշռող մասը:*

---

[*] *Թուրքիայի տնտեսությունում տեղի ունեցող շարժերը կարևորվում են այն առումով, որ նախ՝ այն մեր տարածաշրջանի երկրներից է, և, բացի այդ, ՀՀ-ն ապրանքներ է ներմուծում Թուրքիայից:*

[**] *Վերջին երկու ամիսներին թուրքական թերթերը բազմիցս օգտագործում են ճգնաժամ բառը:*

---

[3] *«Չեզոք» է համարվում այն տոկոսադրույքը, որը ո՛չ զսպում է տնտեսական աճը, ո՛չ էլ խթանում:*

***Ռուսաստանի*** տնտեսությունում արդյունաբերության, մասնավորապես՝ վերամշակող արդյունաբերության աճի տեմպերի՝ առաջին եռամսյակից դրսևորված դանդաղման միտումները 2006 թ. երկրորդ եռամսյակում վերականգնվել են: Արդյունաբերության աճի տեմպը երկրորդ եռամսյակում կազմել է 6.0%՝ նախորդ տարվա 3.6%-ի փոխարեն (առաջին կիսամյակում աճը կազմել է 4.4%): Վերամշակող արդյունաբերությունում երկրորդ եռամսյակում գրանցվել է բարձր՝ 7.0% աճ (նախորդ տարի՝ 5.4%): Ոչ արտահանելի ճյուղում աճի տեմպերը շարունակել են բարձր մնալ նաև երկրորդ եռամսյակում, ինչը կանխատեսելի էր[4]: Առաջին կիսամյակում, ըստ նախնական տվյալների, ՀՆԱ իրական աճը կկազմի 6.3%:

2006 թ. երկրորդ եռամսյակում հերթական անգամ գրանցվել է ընթացիկ հաշվի ավելցուկի աննախադեպ ցուցանիշ՝ 27.3 մլրդ ԱՄՆ դոլար (ըստ գնահատականի): Վերջինիս նպաստել է նավթի միջազգային գների 34.0% աճը: Արտարժութային միջոցների հսկայածավալ ներհոսքը նպաստել է նաև համախառն պահուստների կուտակման աճին, և հունիսի վերջի դրությամբ համախառն պահուստները կազմել են 250.56 մլրդ ԱՄՆ դոլար: Նշված ցուցանիշով Ռուսաստանն այժմ զիջում է երեք առաջատարներին՝ Չինաստանին (հուլիսի 1-ի դրությամբ՝ ավելի քան 940 մլրդ ԱՄՆ դոլար), Ճապոնիային (հուլիսի 1-ի դրությամբ՝ ավելի քան 860 մլրդ ԱՄՆ դոլար) և Թայվանին (հունիսի վերջի դրությամբ՝ 260.35 մլրդ ԱՄՆ դոլար):

Նշված իրավիճակը, ֆինանսական շուկաների աշխուժացմանը զուգընթաց, այնուամենայնիվ խնդիրներ է առաջացնում դրամավարկային քաղաքականության արդյունավետ իրագործման տեսանկյունից: Բացի այդ, հունիսից սկսած՝ կապիտալի հոսքերի լրիվ ազատականացումը, փոխարժեքի անվանական խարսխի պարագայում, էլ ավելի կբարդացնի գնաճի մակարդակի ապահովման խնդիրը (անհնարինության եռանկյունի): 2006 թ. առաջին կիսամյակում գների աճը, նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, կազմել է 10.1% (հունիսը դեկտեմբերի նկատմամբ՝ 6.2%), իսկ ռուբլու իրական արժևորումը՝ 7.2%:

***Ադրբեջանի*** տնտեսության աճի տեմպերը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ԱՊՀ երկրների թվում համարվում է ամենաբարձրը: 2006 թ. առաջին կիսամյակում ՀՆԱ աճը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, կազմել է 36.3%: Ինչպես 2004-2005 թթ., այնպես էլ 2006 թ. առաջին կիսամյակում տնտեսական աճի այսպիսի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորվել են վառելիքի (նավթ, բնական գազ և այլ ածխաջրեր) արդյունահանմամբ և դրա հետ կապված՝ շինարարության և տրանսպորտի հատվածների աճով: Արդյունաբերական արտադրանքի աճը կազմել է 56.1%, շինարարության աճը՝ 8.9%, գյուղատնտեսության աճը՝ 4.5%, իսկ ծառայությունների ոլորտում ավելացված արժեքի աճը կազմել է 24.1%: 2006 թ. արդյունքներով սպասվում է շուրջ 30% ՀՆԱ իրական աճ:

2006 թ. առաջին կիսամյակում Ադրբեջանում տարեկան գնաճը կազմել է 6.0%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 5.6%: Հունվար-մայիսին գնաճին հիմնականում նպաստել է պարենային ապրանքների գների աճը: Ի տարբերություն հունվար-մայիս ամիսների, հունիսին գրանցվել է 0.1% գնանկում, ընդ որում՝ պարենային ապրանքների գները նվազել են 0.3%-ով, իսկ նախորդ տարվա հունիսի համեմատ աճել են 7.7%-ով: 2006 թ. հունիսին գրանցված 0.1% գնանկումը բավականին ցածր է 2005 թ. հունիսին գրանցված 1.8% և 2004 թ. հունիսին գրանցված 1.5% գնանկումների համեմատ: Հունիսին գնանկումը կարող էր լինել ավելի բարձր, եթե տեղի չունենար որոշ սննդամթերքների գների բարձրացում[5]:

2006 թ. առաջին կիսամյակում արտահանման-ներմուծման գործարքների արդյունքում Ադրբեջանում ձևավորվել է դրական հաշվեմնացորդ՝ 802.42 մլն դոլարի չափով[6]: Օտարերկրյա ներդրումների ծավալները կազմել են շուրջ 1.74 մլրդ դոլար[7]: Կապիտալի ներհոսքի նման ծավալների պայմաններում ստեղծվել է որոշակի ճնշում գների մակարդակի և մանաթի փոխարժեքի վրա: Ներկայումս Ադրբեջանի դրամավարկային մարմինների համար գերխնդիր է բարձր գնաճի տեմպերի զսպումը, որը իրականացնելու նպատակով թույլ է տրվում մանաթի աստիճանական արժևորում: 2006 թ. առաջին կիսամյակում, տարեսկզբի համեմատ, մանաթի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 2.5%-ով, իսկ մանաթի տարեկան արժևորումը կազմել է 5.26%:

---

*[4] Նավթային եկամուտների շարունակվող բումը հանգեցնում է ոչ արտահանելի ապրանքների գների աճի, քանի որ վերջինիս պահանջարկի առածգականությունը եկամուտներից շատ ավելի բարձր է (Բաումոլ-Բոուենի էֆեկտ):*

*[5] Հունիսին Ադրբեջանում բարձրացել են մսի և մսամթերքների (22-25%), ձվի (15%) շաքարի (33%), սոխի (41%), կարտոֆիլի (16%) գները: Ոչ պարենային ապրանքների գները հունիսին բարձրացել են 0.3%-ով, կիսամյակի ընթացքում՝ 3.5%-ով, իսկ նախորդ տարվա հունիսի համեմատ՝ 4.7%-ով:*

*[6] Ապրանքների արտահանման ծավալներն ավելացել են 123.02%-ով և կազմել 2924.059 մլն դոլար, իսկ ներմուծման ծավալները՝ 0.81%-ով և կազմել 2117.640 մլն դոլար:*

*[7] 2006 թ. առաջին կիսամյակում միայն «Բրիտիշ Պետրոլիումը» (British Petrolium) իր մատակարար-ընկերությունների միջոցով Ադրբեջանում իրականացրել է 778 մլն դոլարի ներդրումներ:*

**Վրաստանում** տնտեսական աճի ցուցանիշը տարածաշրջանում ամենացածրն է, սակայն բարձրերից մեկն է ԱՊՀ և զարգացող երկրների շրջանակում: Տնտեսական աճը 2006 թ. առաջին եռամսյակում կազմել է 8.4%[8]: Ընդ որում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ գյուղատնտեսության ճյուղի, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի և ջրամատակարարման աճի տեմպերի համապատասխանաբար 8.3% և 8.7%-ով նվազումը փոխհատուցվել է ֆինանսական ծառայությունների՝ 56.4%, տրանսպորտի ծառայությունների՝ 37.7% և շինարարության՝ 25.9% աճով:

2006 թ. առաջին կիսամյակում ինչպես Ադրբեջանում, Վրաստանում նույնպես շարունակվել է գրանցվել բարձր գնաճ: 2006 թ. առաջին կիսամյակում տարեկան գնաճը Վրաստանում կազմել է 7.1%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 5.6%: Ի տարբերություն հունվար-մայիս ամիսների, հունիսին գրանցվել է 0.2% գնանկում, որը 2005 թ. հունիսին գրանցված 1.4% և 2004 թ. հունիսին գրանցված 1.6% գնանկումների համեմատ բավականին ցածր է: Հունիսին դրսևորված գնաճային ճնշումը պայմանավորվել է այն հանգամանքով, որ այդ ամսին Վրաստանում բարձրացվել են էլեկտրաէներգիայի, գազի և ջրի գները՝ 3.9%-ով, աճել են մսի և մսամթերքների, ձկնամթերքների և շաքարի գները: Գնաճի վարքագծի վրա շարունակում են հիմնական ազդեցություն թողնել պարենային ապրանքների գները, որոնց աճը հունվար-մայիսին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, կազմել է 8.9%: Առաջին կիսամյակում արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը կազմել է 13.8%, որը հիմնականում պայմանավորվել է լեռնահանքային արդյունաբերության արտադրանքի, հատկապես մետաղի հանքաքարի գների 98.8% աճով:

2006 թ. հունվար-հունիսին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, վրացական լարին ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 1.14%-ով, իսկ առաջին կիսամյակում լարիի փոխարժեքի տարեկան արժևորումը կազմել է 1.73%: Վրացական լարիի արժևորումը կարող էր լինել ավելի բարձր, եթե Վրաստանի ազգային բանկը Թբիլիսիի միջբանկային արժութային բորսայում հունվար-հունիսին չիրականացներ շուրջ 63 մլն դոլարի զուտ առք:

## Տոկոսադրույքներ և փոխարժեք

**ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ**


2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ԿԲ կողմից իրականացված գործառնությունների տոկոսադրույքները հիմնականում անփոփոխ են մնացել, բացառությամբ լոմբարդային վարկի տոկոսադրույքի, որն իջեցվել է 1 տոկոսային կետով և սահմանվել 7%: ՀՀ ԿԲ գործիքակազմի փոփոխությամբ պայմանավորված՝ երկրորդ եռամսյակում ԿԲ-ն ֆինանսական շուկայում ավելի ակտիվ է գործել. իրականացված ռեպո գործառնությունների ծավալը կազմել է 20 մլրդ դրամ:

Միջբանկային ռեպո շուկայում ևս նկատվել է զգալի աշխուժացում: Հատկապես ոչ բանկ ներդրողների կողմից ռեպո գործարքների նկատմամբ ներկայացված բարձր պահանջարկով պայմանավորված՝ դրսևորվել է միջբանկային ռեպո տոկոսադրույքի աճի միտում. հունիսին կազմել է 5.03%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 1.75 տոկոսային կետով:

Բանկերի կողմից ավելցուկային միջոցների օպտիմալ կառավարման արդյունքում այս եռամսյակի ընթացքում ԿԲ ներքաշող գործառնությունների ծավալները զգալիորեն կրճատվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Մասնավորապես՝ իրականացվել է 0.5 մլրդ դրամի հակադարձ ռեպո գործառնություն, իսկ առևտրային բանկերի կողմից Կենտրոնական բանկում ներդրված ավանդի ծավալը կազմել է ընդամենը 1.3 մլրդ դրամ: Տեղաբաշխված ԿԲ պարտատոմսերի ծավալը կազմել է 9.2 մլրդ դրամ:

*[8] Վրաստանում ՀՆԱ ցուցանիշները հրապարակվում են հաշվետու ժամանակահատվածից հետո 83 օրվա ընթացքում: Այսինքն՝ 2006 թ. առաջին կիսամյակի տնտեսական աճի պաշտոնական ցուցանիշները կպարզվեն սեպտեմբերի երկրորդ տասնօրյակում: Նշենք նաև, որ 2005 թ. տնտեսական աճի տարեկան ցուցանիշը Վրաստանում կազմել է 9.3%:*


*Շուկայական ռեպո տոկոսադրույքը փոքր-ինչ բարձրացել է*




Պետական պարտատոմսերի շուկայում 2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում տոկոսադրույքները բարձրացել են՝ ինչը հիմնականում բանկերի կողմից ավելցուկ միջոցները տնտեսության վարկավորմանը ուղղելու և դրանց ծավալների աճի արդյունք է: ՊՊ առաջնային շուկայում 2006 թ. հունիսին պետական կարճաժամկետ պարտատոմսերի[9] միջին եկամտաբերությունը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 5.3%, միջնաժամկետ հատվածում պարտատոմսերի եկամտաբերություններն աճել են 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 6.1%, երկարաժամկետ հատվածում՝ 1.8 տոկոսային կետով և կազմել 9.9%:

Ինչպես ցույց է տալիս եկամտաբերության կորի ուսումնասիրությունը, եկամտաբերությունները ՊՊ երկրորդային շուկայում աճել են հիմնականում երկարաժամկետ հատվածում: Եկամտաբերության միջին աճը կորի ամբողջ երկայնքով կազմել է 0.24 տոկոսային կետ: 51.5%-ով փոփոխվել է կորի գոգավածությունը (0.037-ից 0.056), ինչը խոսում է երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների միջև տարբերության աճի մասին:


*Տոկոսադրույքների աճ՝ եկամտաբերության կորի ամբողջ երկայնքով*




ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի և ավանդների տոկոսադրույքների նվազումը շարունակվել է 2006 թվականի երկրորդ եռամսյակում: Այսպես, ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները 2006 թվականի հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 3.05 տոկոսային կետով և կազմել 5.57%, իսկ դոլարային ավանդների տոկոսադրույքները նվազել են 1.67 տոկոսային կետով և կազմել 5.27%: Արդյունքում՝ ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 0.3 տոկոսային կետ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 1.68):


[9] *Ներառված են նաև ԿԲ պարտատոմսերը:*

*Բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով տրամադրված ավանդների տոկոսադրույքները գրեթե հավասարվել են*




Առևտրային բանկերի կողմից ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները նույնպես դրսևորել են նվազման միտումներ. ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքները 2006 թ. հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 2.02 և 1.20 տոկոսային կետերով՝ համապատասխանաբար կազմելով 15.56% և 17.96%: ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունները համապատասխանաբար կազմել են 12.69 և 9.99 տոկոսային կետ:

*Բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի տոկոսադրույքները նվազել են*





Ամփոփելով կարելի է փաստել, որ ֆինանսական համակարգում աստիճանաբար կրճատվում է կարճաժամկետ (միջբանկային ռեպոներ) և երկարաժամկետ (վարկեր, ավանդներ) «փողերի» միջև տոկոսադրույքների բավական մեծ տարբերությունը: Այլ կերպ ասած՝ տեղի է ունենում այս երկու շուկաների միջև խզվածության հաղթահարում, ինչը աստիճանաբար հանգեցնելու է տոկոսադրույքի փոխանցման մեխանիզմի ակտիվացմանը: Նշվածը հիմնականում արդյունք է ԿԲ կողմից նոր գործիքակազմի ներդրման և միջբանկային շուկայում ԿԲ ակտիվության ավելացման:

## ՓՈԽԱՐԺԵՔ


ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 2006 թվականի երկրորդ եռամսյակում և նախորդ տարվա դեկտեմբերի և նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ դրսևորել է արժևորման միտում: Փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորվել է ինչպես տնտեսության արտաքին հատվածի, մասնավորապես՝ վճարային հաշվեկշռի ավելցուկով, ի հաշիվ ֆինանսական ներհոսքի աճի, այնպես էլ դրամի նկատմամբ սեզոնային պահանջարկի աճով: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին եռամսյակային փոխարժեքը երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արժևորվել է 2.73%-ով՝ 448.70 դրամից հասնելով 436.78 դրամի: Նախորդ տարվա երկրորդ եռամսյակում գրեթե նույն պատկերն է եղել՝ տեղի է ունեցել արժևորում 3.57%-ով, որը, սակայն, ձևավորվել է ավելի մեծ տատանումների պայմաններում (վարիացիա՝ 32.99 դրամ):

*ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի դինամիկան 2006թ. II եռամսյակում*




Եռամսյակի ընթացքում միջբանկային շուկայում իրականացված գործառնությունների համախառն ծավալը կազմել է 1,070.20 մլն ԱՄՆ դոլար[10], որը 46.8%-ով մեծ է նախորդ տարվա երկրորդ եռամսյակի գործառնությունների ծավալի համեմատ: Վերջինս արտացոլում է արտաքին առևտրաշրջանառության ծավալների, արտաքին ֆինանսական ներհոսքի և ներքին տնտեսության բարձր աճի միտումները:


*ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները*




Եվրո/դրամ գործառնությունների շուկայում նույնպես տեղի է ունեցել ծավալների աճ՝ 67.99%-ով: Համախառն ծավալը կազմել է 89.01 մլն եվրո՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում գրանցված 52.98 մլն եվրոյի փոխարեն:

ՀՀ տնտեսություն ներհոսած ավելցուկ արտարժույթի բացասական հետևանքները չեզոքացնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը երկրորդ եռամսյակում ՀՀ բանկերից զուտ գնել է 20.765 մլն ԱՄՆ դոլար:

*ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի դինամիկան 2004-2006թթ.*





[10] *Ներառված են նաև բորսայում իրականացված առք ու վաճառքի ծավալները՝ 87.8 մլն ԱՄՆ դոլար: Բորսայում իրականացված գործարքների ծավալները նախորդ եռամսյակի համեմատ ավելացել են 106.38%-ով:*

Երկրորդ եռամսյակում շարունակվել է անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորման տեմպերի դանդաղումը, որը տարեկան կտրվածքով կազմել է 2.9 տոկոս: Այն ամբողջապես տեղի է ունեցել ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի արժևորման պատճառով, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 2.8 տոկոս: Գործընկեր երկրների փոխարժեքների միջին կշռված ազդեցությունը եղել է շատ փոքր, քանի որ Թուրքիայի և Իրանի փոխարժեքների 0.3-ական տոկոսային կետ ազդեցությամբ արժեզրկումը չեզոքացվել է ռուսական ռուբլու արժևորման 0.6 տոկոսային կետ ազդեցությամբ հիմնական արժույթների կայուն վարքագծի պայմաններում:


Ի տարբերություն անվանական փոխարժեքի, իրական փոխարժեքը երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նույնիսկ փոքր-ինչ արժեզրկվել է՝ 1.4 տոկոսով: Արժեզրկումը ամբողջությամբ պայմանավորվել է գործընկեր երկրների գնաճով (5.8 տոկոսային կետ), ընդ որում՝ հումքային ապրանքատեսակների գների թանկացման հետևանքով գնաճը արագացել է նաև զարգացած երկրներում (ԱՄՆ, Եվրոմիություն, Միացյալ Թագավորություն):

***Շարունակել են նվազել անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորման տեմպերը, իսկ իրական արդյունավետ փոխարժեքը նույնիսկ փոքր-ինչ արժեզրկվել է***




Արտահանելի հատվածը մրցունակություն է ձեռք բերել նաև ոչ արտահանելի հատվածի նկատմամբ, որն արտահայտվել է ներքին իրական փոխարժեքի արժեզրկմամբ՝ 4.5 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ: Ոչ արտահանելի ապրանքների գները տարեկան կտրվածքով նվազել են 0.9 տոկոսով, մինչդեռ արտահանելի ապրանքների գներն աճել են 3.7 տոկոսով: Վերջինիս պատճառը, ինչպես նշվեց, և՛ հումքային, և՛ սպառողական ապրանքների միջազգային գների բարձր աճի տեմպերի պարագայում ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման տեմպերի դանդաղումն է:

***Ներքին իրական փոխարժեքը երկրորդ եռամսյակում շարունակել է արժեզրկվել, սակայն առաջին եռամսյակի համեմատ ավելի փոքր տեմպերով***



## Վճարային հաշվեկշիռ[11]

2006 թ. երկրորդ եռամսյակում շարունակվել է նավթի, մետաղների միջազգային գների, ինչպես նաև տրանսֆերտների՝ նախորդ եռամսյակի վերջերից նկատված տարեկան բարձր աճի դրսևորումը (նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ): Նշված արտաքին միջավայրը, ներքին անհաշվեկշռվածության խորացման հետ մեկտեղ, հանգեցրել են երկրորդ եռամսյակի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի ավելացման[12]: Մասնավորապես՝ արտահանման անվանական ծավալները նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել են 5.8%-ով՝ ի տարբերություն ներմուծման ծավալների բարձր՝ 24.5% աճի: Չնայած դրան, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է, ինչը մի կողմից՝ դրամի նկատմամբ սեզոնային պահանջարկի աճի և մյուս կողմից՝ արտարժութային ֆինանսական ներհոսքի արդյունք էր:

2006 թ. երկրորդ եռամսյակում արտաքին աշխարհը գնաճի վրա ունեցել է երկակի ազդեցություն՝ գնաճի զսպման և նպաստման: Միջազգային շուկաներում տարեսկզբից նկատվող ներմուծման գների բարձր աճը թեև մասամբ չեզոքացվել է անվանական փոխարժեքի արժևորմամբ, այնուամենայնիվ գնաճի վրա[13] ունեցել է ընդլայնողական ազդեցություն: Մյուս կողմից՝ ներքին տնտեսությունում եկամուտների, ինչպես նաև ներդրումային ապրանքների նկատմամբ պահանջարկի աճը բավարարվել է սպառողական և կապիտալ ապրանքների ներմուծման իրական ծավալների աճի հաշվին[14]: Վերջինս երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, զգալիորեն խորացրել է առևտրային հաշվեկշռի պակասուրդը, ինչն էլ դրսևորվել է տնօրինվող եկամուտների արտահոսքի աճով՝ զսպելով գնաճը:

***Ընթացիկ հաշիվ***. Ի տարբերություն նախորդ տարիներին ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատման, 2006 թ. առաջին եռամսյակից պակասուրդը սկսել է ավելանալ, ինչը և շարունակվել է երկրորդ եռամսյակում: 2006 թ. երկրորդ եռամսյակն ավարտվել է ընթացիկ հաշվի պակասուրդի 42.6 մլն ԱՄՆ դոլարով ավելացմամբ (մոտ 1.9 անգամ) և կազմել 92.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ վերջինիս կշիռը ՀՆԱ-ում կազմել է 7.4% (նախորդ տարվա նույն եռամսյակում՝ 4.8%): Այս եռամսյակում նույնպես առևտրային հաշվեկշռի նշանակալի աճն էապես նպաստել է ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմանը, չնայած մասնավոր տրանսֆերտների և եկամուտների բարձր աճ է գրանցվել:

2006 թ. երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, առևտրային հաշվեկշռի պակասուրդն ավելացել է 77.9 մլն ԱՄՆ դոլարով (60.0%-ով) և կազմել 207.8 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման ծավալները, ի տարբերություն նախորդ եռամսյակում գրանցված նվազման, երկրորդ եռամսյակում ավելացել են 5.8%-ով (արտահանումը կազմել է 260.5 մլն ԱՄՆ դոլար): Արտահանման մեջ մեծ կշիռ կազմող երեք ապրանքախմբերի[15] արտահանման ծավալների նվազումը փոխհատուցվել է «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի ծավալների արտահանման աճով (վերջինիս ծավալներն ավելացել են մոտ 2.3 անգամ): Նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ներմուծման ծավալներն ավելացել են 24.5%-ով (ներմուծումը կազմել է 468.4 մլն ԱՄՆ դոլար): Ներմուծման և արտահանման ցուցանիշների վրա էական ազդեցություն է ունեցել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի ապրանքների ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալների նվազումը (համապատասխանաբար՝ 10.7% և 13.4%-ով): Նշված ապրանքախմբերի արտահանման և ներմուծման ծավալների նվազումը, նախորդ եռամսյակում գրանցված ավելի խորը նվազման համեմատ, դանդաղել է: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալներն ավելացել են[16]:

2006 թ. երկրորդ եռամսյակում ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալները փոքր-ինչ՝ 0.9%-ով աճել են[17] (նախորդ տարի՝ 15.5%-ով), մինչդեռ ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները 5.7%-ով նվազել են:

Գնաճի վրա ազդեցության տեսանկյունից առավել նպատակահարմար է արտահանման և ներմուծման ծավալները դիտարկել առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և

---

*[11] 2006թ. առաջին եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են:*

*[12] Ընթացիկ հաշվի պակասուրդի ավելացումը ներքին անհաշվեկշռվածության արտացոլման մի մասն է: Այլ խոսքով՝ ապրանքների և ծառայությունների իրական պահանջարկի և առաջարկի միջև ճեղքվածքի խորացումը պետք է ճշգրտվի կամ գնային գործոնով, կամ ներմուծման միջոցով լրացուցիչ ապրանքների և ծառայությունների առաջարկով:*

*[13] Ավելի մանրամասն տե՛ս «Ներմուծման գներ» բաժնում:*

*[14] Փոքր երկրներում կապիտալ ապրանքների փոխարինիչները քիչ են կամ չկան, այդ իսկ պատճառով վերջիններիս պահանջարկի աճը կարող է բավարարվել միայն ներմուծման աճի հաշվին:*

*[15] «Պատրաստի սննդի արտադրանք», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»:*


*[16] Նվազել են երկու ապրանքախմբերի ներմուծման ծավալները, որոնց կշիռը փոքր է ընդհանուր ներմուծման մեջ:*

*[17] Ապրանքային ներմուծման իրական ծավալներն ավելացել են 3.4%-ով:*


դրանցից իրեր» ապրանքախմբի ցուցանիշը հաշվի առնելու, որի դեպքում արտահանման և ներմուծման ծավալների աճը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ համապատասխանաբար 15.3% և 36.7% է: Արդյունքում՝ առևտրային հաշվեկշռի պակասուրդը, առանց նշված հոդվածի, ավելացել է 80.1 մլն ԱՄՆ դոլարով (62.3%-ով) և կազմել 208.6 մլն ԱՄՆ դոլար:

Արտաքին առևտրի աշխարհագրական առումով, ապրանքային հաշվեկշռի պակասուրդի խորացումը պայմանավորվել է ԱՊՀ, Եվրոմիության, ԱՄՆ, Թուրքիայի և Չինաստանի հետ ապրանքային հաշվեկշռի պակասուրդների՝ համապատասխանաբար 69.5%, 7.5 անգամ (Եվրոմիության հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդի նման խորացումը հիմնականում պայմանավորվել է Հունաստանի, Իտալիայի հետ ապրանքային հաշվեկշիռների պակասուրդների աճով), 34.3%, 52.8% և 80.4% խորացմամբ[18]:

***2006թ. II եռամսյակում արտահանման հիմնական ապրանքախմբերից 3-ի ծավալները նվազել են***




***2006թ. երկրորդ եռամսյակում ներմուծման գրեթե բոլոր հոդվածների ցուցանիշների աճ է արձանագրվել***




[18] *Ներմուծման վիճակագրությունն այժմ կատարվում է «ըստ ծագման վայրի» սկզբունքի՝ նախկինում գործող «ըստ առևտուր անող երկրի» սկզբունքի փոխարեն:*

2006 թ. երկրորդ եռամսյակում գրանցվել է ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի խորացում 10.0%-ով (պակասուրդը կազմել է 16.4 մլն ԱՄՆ դոլար), ինչը նպաստել է ընթացիկ հաշվի պակասուրդի ավելացմանը:

Հակառակ վերը նշվածի, մասնավոր տրանսֆերտները և գործոնային եկամուտները նպաստել են ընթացիկ հաշվի պակասուրդի նվազմանը: Մասնավոր տրանսֆերտների աճը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ կազմել է 25.8 մլն ԱՄՆ դոլար, իսկ եկամուտների աճը՝ 8.5 մլն ԱՄՆ դոլար[19]: Պաշտոնական տրանսֆերտները նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել են 2.5 մլն ԱՄՆ դոլարով (22.4%-ով):

Արդյունքում՝ ընթացիկ հաշվի պակասուրդի ավելացումը գնաճի վրա ունեցել է զսպող ազդեցություն՝ ներմուծման միջոցով սպառողական ապրանքների իրական ծավալների լրացուցիչ առաջարկի[20] ապահովմամբ, մյուս կողմից հանգեցրել է եկամուտների դուրս հոսման չափի ավելացման:


*մլն ԱՄՆ դոլար*

| | II եռ. 03 | II եռ. 04 | II եռ. 05 | II եռ. 06 |
|---|---|---|---|---|
| Ընթացիկ հաշիվ | -62.5 | -47.1 | -49.5 | -92.1 |
| Առևտրային հաշվեկշիռ | -127.1 | -111.3 | -129.9 | -207.8 |
| Ծառայություններ (զուտ) | -14.0 | -18.9 | -14.9 | -16.4 |
| Եկամուտներ (զուտ) | 23.9 | 5.7 | 4.8 | 13.3 |
| Մասնավոր տրանսֆերտներ (զուտ) | 39.5 | 65.0 | 79.3 | 105.0 |
| Պաշտոնական տրանսֆերտներ (զուտ) | 15.2 | 12.4 | 11.4 | 13.9 |

***Կապիտալի և ֆինանսական հաշիվ.*** 2006 թ. երկրորդ եռամսյակում արտաքին աշխարհի խնայողությունների՝ կապիտալի և ֆինանսական հաշվի զուտ ներհոսքը, կազմել է 171.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելանալով 62.8 մլն ԱՄՆ դոլարով: Վերջինիս աճը պայմանավորվել է գրեթե բոլոր հոդվածների գծով զուտ ներհոսքի աճով: Նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ կապիտալ տրանսֆերտները փոքր-ինչ նվազել են:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները ֆինանսավորել են ընթացիկ հաշվի պակասուրդի 76.0%-ը (70.0 մլն ԱՄՆ դոլար), այլ կապիտալի ներհոսքը՝ 63.9%-ը (58.8 մլն ԱՄՆ դոլար): Կապիտալ տրանսֆերտների մասնաբաժինը ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորմանը կազմել է 10.9% (10.0 մլն ԱՄՆ դոլար), իսկ պետական հատվածի վարկերի զուտ տեղաբաշխման ֆինանսավորումը կազմել է 35.3% (32.5 մլն ԱՄՆ դոլար): Ընթացիկ հաշվի ու կապիտալ և ֆինանսական հաշվի վերը նշված հոսքերի պայմաններում, վճարային հաշվեկշիռը ավելցուկով է եղել, որի արդյունքում ԿԲ ՁԱԱ-ը աճել է 79.2 մլն ԱՄՆ դոլարով:

***2006թ. II եռամսյակում կապիտալի ներհոսքը զգալի գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը***




*[19] 2006 թ. երկրորդ եռամսյակում մասնավոր տրանսֆերտների և աշխատուժից եկամուտների (գործոնային եկամուտների մի մասի) տարեկան աճը կազմել է 40.5%:*

*[20] Չնայած ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալների աճը ցածր է եղել, այնուամենայնիվ գնաճի վրա ազդեցության տեսանկյունից անհրաժեշտ է դիտարկել սպառողական ապրանքների ներմուծման իրական ծավալները, որոնք ավելացել են 10.2%-ով:*


Կապիտալի և ֆինանսական ներհոսքի աճը նպաստել է փոխարժեքի արժևորմանը, վերջինս էլ գնաճի վրա ունեցել է զսպող ազդեցություն:

## Դրամավարկային զարգացումներ

2006 թվականի առաջին եռամսյակի Գնաճի հաշվետվության «Գնաճի կանխատեսումներ» բաժնում նշվել էր, որ երկրորդ եռամսյակի համար տնտեսության մյուս հատվածների զարգացումների ներքո գնահատված փողի պահանջարկին համապատասխան փողի առաջարկի ապահովումը կհանգեցնի նպատակային ցուցանիշի համեմատ գնաճի բարձր մակարդակի: Այդ իսկ պատճառով, 2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ԿԲ իրականացրած քաղաքականությունը կլինի ավելի քիչ ընդլայնողական, քան առաջին եռամսյակում: Հետևելով գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու գերխնդրին, ինչպես նաև հաշվի առնելով տնտեսության տարբեր հատվածների՝ գնաճին նպաստող ռիսկերի դրսևորման հավանականության աճը՝ ԿԲ-ն 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ իրականացրել է ավելի քիչ ընդլայնողական քաղաքականություն: Արդյունքում՝ չնայած երկրորդ եռամսյակի ընթացքում տնտեսության մյուս հատվածներում շարունակվել են տարեսկզբի զարգացումները, արձանագրվել է դրամավարկային ցուցանիշների (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ) աճի տեմպերի դանդաղում: Փողի զանգվածը երկրորդ եռամսյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է միջինը 26.2%-ով (նախորդ եռամսյակում՝ 30.8%-ով)՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմելով մոտ 370.8 մլրդ դրամ: Դրամային զանգվածը նույն ժամանակահատվածում ավելացել է միջինը 40.6%-ով (առաջին եռամսյակում՝ 54.6%-ով), իսկ փողի բազան՝ միջինը 38.9%-ով (առաջին եռամսյակում՝ 58.6%-ով)՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմելով համապատասխանաբար 229.5 մլրդ և 199 մլրդ դրամ: Դրամավարկային ցուցանիշների նշված մակարդակների արձանագրումը պայմանավորվել է նաև դրամի նկատմամբ պահանջարկի կայունացմամբ, ինչն էլ բացատրվում է 2006 թվականի առաջին կեսին, նախորդ տարվա համեմատ, ապադոլարայնացման տեմպերի ավելի դանդաղ նվազմամբ, դրամի փոխարժեքի համեմատաբար կայունացմամբ:


2006 թվականի առաջին եռամսյակից շարունակվող դրամայնացման գործընթացի տեմպերի դանդաղումը փողի զանգվածի կառուցվածքում արտացոլվել է հետևյալ համամասնություններով. շրջանառությունում կանխիկը 2006 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 37%-ով, որն ավելի ցածր է, քան առաջին եռամսյակի 43% աճը և վկայում է ոչ թե փողի պահանջարկի կառուցվածքային փոփոխության մասին, այլ հիմնականում դրսևորել է մինչև 2005 թ. նկատված սեզոնայնությունը: Դրամային ավանդները 2006 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել են 44.5%-ով և կազմել 85.2 մլրդ՝ զիջելով առաջին եռամսյակի 48.8% ցուցանիշին:

*Փողի զանգվածի կառուցվածքում էական տեղաշարժեր չեն արձանագրվել*




Արտարժութային ավանդները երկրորդ եռամսյակի ընթացքում դրամային արտահայտությամբ ավելացել են 2.2%-ով (արտարժութային արտահայտությամբ՝ մոտ 6%-ով, ինչպես և ակնկալվում էր) և կազմել 141.3 մլրդ դրամ՝ զիջելով առաջին եռամսյակի 16.3% աճի ցուցանիշին:

*Դրամով և արտարժույթով ավանդների վարքագիծը՝ ըստ ժամկետայնության*




Դրամի արժևորման պայմաններում արտարժութային ավանդների դրամային արտահայտությամբ ոչ բարձր աճի հիման վրա հաշվարկված դոլարայնացման տեմպերի նվազումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 16.6%: Սակայն դրամավարկային ցուցանիշների զարգացումները, այնուամենայնիվ, վկայում են ապադոլարայնացման տեմպերի դանդաղման մասին:

*Ապադոլարայնացումը արտացոլված է նաև տնտեսությանը ըստ արժույթների տրված վարկերի ծավալներում*





2006 թվականի երկրորդ եռամսյակում բանկերի կողմից տնտեսության վարկավորման աճի տեմպերը արագացել են. վարկավորման աճը կազմել է 43.2% (առաջին եռամսյակում՝ 44.7%)՝ 2005 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, իսկ ընդհանուր ծավալը՝ 219 մլրդ դրամ: Նման աճը պայմանավորվել է առևտրային բանկերի կողմից ԿԲ-ում իրենց թղթակցային հաշիվների միջոցների, ինչպես նաև արտաքին ակտիվների հաշվին ներքին վարկավորման ծավալների ավելացմամբ: Ընդ որում, վարկավորման աճի շուրջ 60%-ը կամ շուրջ 34 մլրդ դրամը բաժին է ընկել դրամով վարկավորմանը:

ԿԲ-ում թղթակցային հաշիվները վարկավորմանը ուղղելուն նպաստել է ԿԲ գործիքակազմի կիրառման մեխանիզմների փոփոխությունը, որի արդյունքում առևտրային բանկերն արդյունավետ են կառավարել իրենց ավելցուկային միջոցները: Սա նպաստել է բանկային համակարգում ավելցուկային իրացվելիության նվազմանը, որն իր ազդեցությունն է թողել բազմարկիչների մակարդակի վրա:

Փողի բազմարկիչը եռամսյակի ընթացքում նվազել է 9.1%-ով, իսկ դրամային բազմարկիչն ավելացել է 1.2%-ով: Այս ցուցանիշներն ավելի բարձր են սպասվածից՝ պայմանավորված ինչպես վերը նշված

ավելցուկային իրացվելիության նվազման գործոնով, այնպես էլ փողի բազայի քիչ ընդլայնողական լինելու հանգամանքով:


*Տնտեսության փողայնացման մակարդակը*




Տնտեսության փողայնացման և դրամայնացման գործակիցները զիջել են նախորդ եռամսյակի համապատասխան գործակիցներին, ինչը բացատրվում է նախորդ եռամսյակի 8%-ի փոխարեն 13.9% իրական տնտեսական աճի արձանագրմամբ և փողի նկատմամբ պահանջարկի կայունացմամբ:


***ՓՈՂԻ ԲԱԶԱ:*** ԿԲ կողմից իր գլխավոր խնդրի ապահովման նպատակով փողի առաջարկի կարգավորումն արտահայտվել է փողի բազայի 12-ամսյա 32% աճով: Սակայն, եթե անդրադառնանք փողի բազայի եռամսյակային վարքագծին, ապա, ինչպես նշվեց, այս տարվա երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ԿԲ-ն վարել է համեմատաբար քիչ ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն (նախորդ տարվա երկրորդ եռամսյակի 22%-ի կամ 27.2 մլրդ դրամի փոխարեն՝ 5.3% կամ 10.0 մլրդ դրամի աճ)՝ պայմանավորված տարեսկզբից ձևավորված գնաճային ռիսկերի չեզոքացման խնդրով: Տարեսկզբի համեմատ փողի բազան նվազել է 0.5%-ով: Փողի բազայի 12-ամսյա աճի՝ նախորդ եռամսյակի նկատմամբ ցածր տեմպերի արձանագրումը հիմնականում պայմանավորվել է ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի աճի տեմպերի դանդաղմամբ, որն էլ, իր հերթին, պայմանավորվել է դրամայնացման գործընթացի ակնկալվող տեմպերի որոշակի դանդաղմամբ:

*Կանխիկի աճը վկայում է ազգային արժույթի նկատմամբ պահանջարկի աճի մասին*




Փողի բազայի աճը եռամսյակի ընթացքում ամբողջությամբ տեղի է ունեցել ԿԲ ԶԱԱ-ի աճի հաշվին՝ 35.8 մլրդ դրամ կամ 16.8%, ինչն ուղեկցվել է ԿԲ ԶՆԱ-ի 25.0 մլրդ դրամով կամ ավելի քան 2 անգամ նվազմամբ: Նշված ցուցանիշների 12- ամսյա միտումներն արտահայտվել են ԿԲ ԶԱԱ-ի 23.9% և ԶՆԱ-ի՝ 0.3% աճով:


*Փողի բազայի վարքագիծը ըստ ՁԱԱ-ի և ՁՆԱ-ի*




Դրամայնացման գործընթացի տեմպերի զգալի դանդաղումն արտահայտվել է շրջանառությունում գտնվող կանխիկի, հետևաբար և ԿԲ-ից դուրս շրջանառվող կանխիկի վարքագծում: Եռամսյակի ընթացքում ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկն ավելացել է 9.3%-ով (նախորդ տարվա երկրորդ եռամսյակում՝ 14.7%-ով), իսկ կիսամյակի ընթացքում նվազել է 0.6%-ով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ավելացել էր 7.4%-ով): Այսինքն՝ կանխիկի վարքագծի՝ 2005 թ. դրսևորված առանձնահատկությունն այս տարի չի պահպանվել, այլ հիմնականում կրկնվել է 2003-04 թթ. սեզոնայնությունը:

Երկրորդ կիսամյակում ԿԲ փոխհարաբերությունները բանկերի հետ ընթացել են դրամավարկային քաղաքականության՝ գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո ԿԲ գործիքակազմում իրականացված փոփոխությունների պայմաններում: Այսպես, տոկոսադրույքի փոխանցման լծակի գործունեության ակտիվացման և կարճաժամկետ տոկոսադրույքի դերի բարձրացման նպատակով ապրիլից ԿԲ-ն փոփոխել է դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառման մոտեցումները: Ինչպես նշվել է, դրանք հիմնականում հանգել են դրամավարկային գործիքների ժամկետների կրճատմանն ու դրանց ճկունության բարձրացմանը, մասնավորապես՝ ԿԲ ռեպո գործիքի ժամկետների կրճատման պարագայում այն առավել հասանելի էր դարձել բանկերի համար:

*Կանխիկի աճի ինդեքսները*




Մյուս կողմից, առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության արդյունքում բանկերի ավելցուկային իրացվելիության մակարդակը զգալի նվազել էր, ինչպես նաև որոշակիորեն զսպվել էին տարեսկզբից առկա գնաճային ճնշումները:

Ստեղծված իրավիճակում, իրենց իրացվելիության կարճաժամկետ խնդիրների լուծման նպատակով, բանկերը երկրորդ եռամսյակի ընթացքում ակտիվորեն օգտվել են ռեպո գործիքից, որի միջոցով զուտ ներարկվել է 1.7 մլրդ դրամի իրացվելիություն: Դրան հակառակ, առաջին եռամսյակի համեմատ երկրորդում բավականին պասիվացել են ներքաշող գործիքները, որոնք հիմնականում զուտով մարվել են:

Ինչպես արդեն նշվել է, երկրորդ եռամսյակում գնաճային ճնշումները որոշ չափով մեղմվել են, որի արդյունքում հունիսին գնաճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ (12-ամսյա), կազմել է 2.7%՝ կանխատեսված 3.4%-ի փոխարեն (տե՛ս ԿԲ խորհրդի մարտի 31-ի արձանագրությունը), իսկ տարեսկզբի համեմատ՝ 4.3%: Չնայած դրան, ԿԲ-ն, դեռևս հավանական համարելով գնաճային ռիսկերը հետագա մեկ տարվա կտրվածքով, հիմնական գործիքի՝ ռեպո գործառնության տոկոսադրույքը եռամսյակի ընթացքում թողել է անփոփոխ՝ 4%: Միևնույն ժամանակ, պահպանվել է այն դրույթը, որ մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքները պետք է հավասարաչափ հեռացված լինեն ռեպո գործառնության տոկոսադրույքից, հետևաբար դրանք սահմանվել են. լոմբարդային վարկերինը՝ 7%, իսկ ավանդներինը՝ 1%:

## Համախառն պահանջարկ և առաջարկ

**ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ[20] *ՆԵՐՔԻՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ***

***Մասնավոր սպառում և ներդրումներ.*** 2006 թվականի երկրորդ եռամսյակում համախառն պահանջարկի արագացված աճի տեմպերը շարունակվել են՝ պայմանավորված ինչպես բնակչության եկամուտների ավելացմամբ, այնպես էլ արտաքին ֆինանսական ներհոսքով:

Ընդ որում, ինչպես և նախորդ տարվա ընթացքում, հաշվետու ժամանակահատվածում ևս համախառն պահանջարկի աճին մեծապես նպաստել է ներքին պահանջարկի աճը, որը 2006 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, կազմել է 10.1%: Այնուհանդերձ, ի տարբերություն նախորդ տարվա, երբ պետական ծախսումների իրական աճը գերազանցում էր մասնավոր հատվածի համապատասխան ցուցանիշը (2005 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, պետական հատվածի ծախսերը իրական արտահայտությամբ ավելացել են 26.6%-ով՝ մասնավոր հատվածի ծախսերի 8.9% աճի պարագայում), այս տարի ներքին պահանջարկի կառուցվածքում արձանագրվում է մասնավոր հատվածի ծախսումների առաջանցիկ աճ, որը 2006 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, կազմել է 11.2%՝ պետական հատվածի ծախսերի մոտ 4% աճի պարագայում:

Վերջին չորս տարիներին դրսևորվող տևական բարձր տնտեսական աճի արդյունքում բնակչության եկամուտների շարունակական աճը, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածում մասնավոր տրանսֆերտների ներհոսքի ավելացումը հանգեցրել են նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ մասնավոր սպառման աճի տեմպի որոշակի արագացման: Արդյունքում՝ 2006 թվականի երկրորդ եռամսյակում մասնավոր սպառման աճը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ կազմել է 11.0%՝ ՀՆԱ 72%-ը: Մասնավոր սպառման աճի տեմպի արագացումը հաշվետու ժամանակահատվածում գնաճային որոշակի ճնշումներ է ձևավորել սպառողական շուկայում:

2006 թվականի երկրորդ եռամսյակում արձանագրվել է մասնավոր ներդրումների իրական աճի բավականին բարձր՝ 11.6% ցուցանիշ, իսկ կշիռը ՀՆԱ-ում կազմել է 27%: Նշված աճը արտահայտվելով կապիտալ շինարարության ծավալներում, պայմանավորվել է հիմնականում էներգետիկայի, կապի, մշակող արդյունաբերության, բնակարանային շինարարության և ծառայությունների ճյուղերում տնտեսության մասնավոր հատվածի կողմից խոշոր ներդրումային ծրագրերի իրագործմամբ, որոնց մեծ մասը երկարաժամկետ բնույթ ունի:


***Պետական սպառում և ներդրումներ.*** 2006 թվականի երկրորդ եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է 1.1 տոկոս ընդլայնող ազդեցություն՝ ծրագրված 2.0 տոկոսի փոխարեն: Ընդ որում, եկամուտների ազդակը կազմել է 0.2 տոկոս զսպող, իսկ ծախսերինը՝ 1.3 տոկոս ընդլայնող: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության գնահատման տեսանկյունից նշենք, որ ծախսերի կատարման ծրագրված ցուցանիշի համեմատ առաջին եռամսյակում արձանագրված խնայողությունների միտումը մասամբ պահպանվել է նաև երկրորդ եռամսյակում: Իսկ ծախսերի ընդլայնող ազդակի ցուցանիշը ձևավորվել է նախորդ տարվա երկրորդ եռամսյակի ծախսերի համեմատ 2006 թ. նույն ժամանակահատվածում ծախսերի աճի հետևանքով:

[21] *Համախառն պահանջարկի բաղադրատարրերի իրական աճերը ՀՀ ԿԲ գնահատումներն են:*

2006 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արձանագրվել է ծախսերի 21.6 տոկոս աճ, իսկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշն աճել է 0.8 տոկոսային կետով: Ընթացիկ ծախսերն ավելացել են 17 տոկոսով, ընդ որում՝ պետական սպառումը՝ 15.3 տոկոսով, իսկ տրանսֆերտները՝ 25.3 տոկոսով: Պետական սպառումը կազմել է ընթացիկ ծախսերի 58.5 տոկոսը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 0.8 տոկոսային կետով: Պետական սպառում/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 0.2 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 11.2 տոկոսը:

Ընթացիկ ծախսերում նվազել են պետական պարտքի տոկոսավճարները, իսկ սուբսիդիաների մակարդակը մնացել է գրեթե անփոփոխ:

*2006 թ. երկրորդ եռամսյակում հարկաբյուջետային ազդակը ընդլայնող ազդեցություն է ունեցել*




2006 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կապիտալ ծախսերն ավելացել են 40.5 տոկոսով: Հատկանշական է, որ ինչպես և նախորդ տարի, արձանագրվել է ներքին ֆինանսավորման հաշվին իրականացված ծախսերի աճի միտում: Այսպես, կապիտալ ծախսերի 83.5 տոկոսն իրականացվել է ներքին աղբյուրների հաշվին, իսկ 16.5 տոկոսը՝ արտաքին աղբյուրների՝ նախորդ տարվա համապատասխանաբար 79.8 և 20.2 տոկոսի փոխարեն: Ընդհանուր առմամբ, ՀՆԱ-ում պետական ներդրումները նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել են 0.9 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 5.7 տոկոսը: Կապիտալ ներդրումների աճի միտումն իր դրական ազդեցությունը կունենա տնտեսական աճի վրա նաև երկարաժամկետ հատվածում:

Ինչպես տարվա առաջին եռամսյակում, այնպես էլ երկրորդում, համախմբված բյուջեի եկամուտներն ունեցել են զսպողական ազդեցություն՝ պայմանավորված հարկային և ոչ հարկային եկամուտների գերակատարումներով: Այսպես, եկամուտների գերակատարումը կազմել է մոտ 15 մլրդ դրամ. 8.0 մլրդ դրամը կազմել է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից ստացված ոչ հարկային եկամուտը[22] (այն ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին օրենքում նախատեսված չէր), իսկ 7.0 մլրդ դրամը գրանցվել է հարկային և կապիտալ եկամուտների գերակատարման հաշվին: Եկամուտների զսպող ազդակի մեծությունը մեղմվել է անվանական ՀՆԱ-ի փաստացի բարձր մակարդակի գրանցման հաշվին:

2006 թվականի երկրորդ եռամսյակում համախմբված բյուջեի եկամուտները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել են 27.7 տոկոսով. հարկային եկամուտների աճը կազմել է 20 տոկոս, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտներինը՝ 136.8 տոկոս: 2006 թվականի երկրորդ եռամսյակի համախմբված բյուջեի եկամուտները ՀՆԱ-ում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 2.3 տոկոսային կետով. հարկեր/ՀՆԱ ցուցանիշը աճել է 0.4 տոկոսային կետով: Հատկանշական է, որ ինչպես առաջին եռամսյակում, երկրորդում նույնպես պահպանվել է ծրագրվածի համեմատ եկամուտների ավել հավաքագրման միտումը, որը հավանաբար կպահպանվի մինչև տարեվերջ, և տարվա արդյունքում եկամուտները կունենան զսպողական ազդեցություն:

Հարկային եկամուտների կառուցվածքում անուղղակի հարկերի կշիռը նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել հարկային եկամուտների 45.2 տոկոսը: Իսկ ուղղակի հարկերի կշիռն ավելացել է 0.3 տոկոսային կետով և կազմել հարկերի 45.3 տոկոսը: Նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ անուղղակի և ուղղակի հարկերի աճը կազմել է համապատասխանաբար 19.4 տոկոս և 22 տոկոս:

Հարկային եկամուտների գերակատարումները եռամսյակի ընթացքում չեն ուղեկցվել ծախսերի ծրագրված ցուցանիշի ապահովմամբ: Ավելին, ծախսերի գծով երկրորդ եռամսյակում արձանագրվել են


[22] *Եկամուտների ազդակի գնահատման ժամանակ 2006 թվականի երկրորդ եռամսյակի եկամուտները դիտարկվել են առանց ոչ հարկային եկամուտների մեջ ներառված՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից ստացված մուտքերի (ենթադրելով, որ դրանք տնտեսությունից հավաքագրված գումարներ չեն), և այդ պարագայում եկամուտների մասով ստացվում է ավելի փոքր զսպողական ազդեցություն:*

տնտեսումներ, և միասնական հաշվից նախատեսված ծախսի դիմաց փաստացի առաջացել են խնայողություններ մոտ 12.0 մլրդ դրամի չափով:

Եռամսյակի արդյունքում բյուջեի պակասուրդը զգալիորեն զիջել է ծրագրված մակարդակը և կազմել է 2.3 մլրդ դրամ: Ընդ որում, արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է 13.1 մլրդ դրամ՝ պայմանավորված Աղքատության կրճատման աջակցության վարկի 2005 թվականի մասնաբաժնի ստացմամբ, իսկ ներքին աղբյուրների գծով ձևավորվել են խնայողություններ՝ 10.8 մլրդ դրամի չափով: Ներքին աղբյուրների ցուցանիշների՝ ծրագրվածից շեղման հիմնական պատճառը սեփականաշնորհման արտարժութային հաշվից երկրորդ եռամսյակում նախատեսված գումարների փոխարկումը և, հետևաբար, ծախսումը երրորդ եռամսյակ տեղափոխելն է, ինչպես նաև ՀՀ գանձապետարանի միասնական հաշվում միջոցների կուտակումը:


Պետական արժեթղթերից զուտ ֆինանսավորումը կազմել է 2.9 մլրդ դրամ՝ ծրագրվածին համապատասխան:

***Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում ներքին այլ աղբյուրների գծով արձանագրված խնայողությունների ածը***




Ամփոփելով երկրորդ եռամսյակի հարկաբյուջետային քաղաքականության ընթացքը՝ նշենք, որ բյուջեի ծախսերի և եկամուտների ներկայացված միտումների պարագայում փողի բազայի փոփոխությունները մասամբ են պայմանավորված եղել Կառավարության միջոցների փոփոխություններով:

***Փողի բազայի փոփոխությունները 2006թ. երկրորդ եռամսյակում մասամբ են պայմանավորվել ՀՀ ԿԲ-ում Կառավարության միջոցների փոփոխություններով***




***Զուտ արտաքին պահանջարկ*** 2006 թվականի երկրորդ եռամսյակում արձանագրվել է արտահանման ապրանքների և ծառայությունների ծավալների իրական նվազում՝ 5.7%-ով, իսկ ներմուծման ծավալների փոքր-ինչ աճ՝ 0.9%-ով: Դա հիմնականում տեղի է ունեցել արտաքին առևտրի գերակշիռ մասը կազմող թանկարժեք քարերի ներմուծման և արտահանման կրճատման հետևանքով: Վերջինս պայմանավորվել է ադամանդի միջազգային գների նվազմամբ և պահանջարկի կառուցվածքի փոփոխությամբ:

Արտահանման ծավալների նվազմանը նպաստել է նաև կոնյակի արտահանման ծավալների աճի դանդաղումը՝ պայմանավորված տեխնիկական հանգամանքներով (Ռուսաստանից ակցիզային դրոշմանիշերի ստացման երկարաձգմամբ):

Ջուտ արտաքին պահանջարկի ազդեցությունը գնաճի վրա դրսևորվել է սպառողական ապրանքների ներմուծման իրական ծավալների 10.2% աճի միջոցով, ինչը որոշակի չափով զսպել է ձևավորվող գնաճի ցուցանիշը՝ ապրանքային շուկայում լրացուցիչ սպառողական ապրանքների առաջարկի ապահովմամբ:

*Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների իրական աճը*
*2003-2006 թվականների երկրորդ եռամսյակներում*

| Ցուցանիշներ | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---|---|---|---|---|
| Իրական ՀՆԱ | 17.1 | 10.1 | 11.5 | 13.9 |
| Ներքին պահանջարկ | 16.2 | 9.4 | 11.0 | 10.1 |
| Սպառում | 9.5 | 8.0 | 8.9 | 8.8 |
| Պետական | 31.3 | 6.3 | 25.9 | -3.6 |
| Մասնավոր | 7.0 | 8.3 | 6.7 | 11.0 |
| Կապիտալ ներդրումներ | 54.1 | 14.9 | 18.6 | 14.3 |
| Պետական | 52.8 | -49.9 | 29.6 | 33.7 |
| Մասնավոր | 54.6 | 36.8 | 17.2 | 11.6 |
| Արտահանում [23] | 56.0 | 2.6 | 1.6 | -5.7 |
| Ներմուծում | 60.0 | -4.5 | 15.4 | 0.9 |

## ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ

2006 թվականի երկրորդ եռամսյակում շարունակվել են տնտեսական աշխուժացման միտումները, որոնց արդյունքում տնտեսական աճը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ կազմել է 14.1%: Ընդ որում, ինչպես և առաջին եռամսյակում, այն ապահովվել է հիմնականում շինարարության և ծառայությունների ավելացված արժեքի բարձր իրական աճի հաշվին:

2006 թվականի երկրորդ եռամսյակում կապիտալ շինարարության իրական աճը, նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ, կազմել է 38.1%՝ հանգեցնելով նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ 2006 թվականի առաջին կիսամյակում 31.8% իրական աճի ձևավորմանը: Վերջինս հիմնականում պայմանավորվել է ձեռնարկությունների կողմից ֆինանսավորված կապիտալ շինարարության ծավալների 85.3% աճով. միջոցներն ուղղվել են գազի մատակարարման, գունավոր մետաղագործության, կապի և այլ ծառայությունների, ինչպես նաև բնակարանային շինարարության ճյուղեր: Ըստ կիսամյակի արդյունքների՝ 14.3%-ով ավելացել են նաև բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալները. ֆինանսավորումը հիմնականում ուղղվել է բնակարանային շինարարության ոլորտ:

Նշենք, որ կապիտալ շինարարության աճի շարունակական բարձր տեմպերը՝ ճյուղում եկամուտների հավասարաչափ բաշխման միջոցով, սպառողական շուկայում խթանում են պահանջարկը, որի արդյունքում գնաճային ճնշումներ են առաջանում:

Հաշվետու ժամանակահատվածում բարձր աճ է արձանագրվել նաև գյուղատնտեսության ոլորտում: 2006 թվականի երկրորդ եռամսյակում ավելացված արժեքի աճը կազմել է 8.5%, կիսամյակային աճը՝ 7.2%: Ընդ որում, անասնապահության կայուն աճի պարագայում գյուղատնտեսության համախառն արտադրանքի բարձր աճին նպաստել է բուսաբուծության ենթաճյուղի աննախադեպ բարձր՝ 12.6% իրական աճը: Վերջինս պայմանավորվել է ոչ այնքան բերքատվության ավելացմամբ, որքան բանջարեղենի ցանքատարածությունների ավելացմամբ և սովորականից տաք եղանակի արդյունքում բերքի մի մասի՝ ժամկետից շուտ հասունացմամբ:

Այդ իսկ պատճառով գնաճի վրա բուսաբուծության բերքի աճի զսպող ազդեցությունը ժամանակավոր բնույթ ունի և մեղմվելու է տարվա հաջորդ ամիսներին բուսաբուծության իրական աճի դանդաղմանը զուգահեռ:

Ծառայությունների ոլորտում շարունակվել են տարվա սկզբից դրսևորված աճի բարձր տեմպերը՝ հանգեցնելով նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ավելացված արժեքի 21.1% աճի: Ծառա-

[23] *Վերաբերում է ապրանքների և ծառայությունների արտահանմանն ու ներմուծմանը:*

յությունների ծավալների առավել բարձր՝ 38.3% աճ է արձանագրվել կապի ոլորտում՝ պայմանավորված բջջային հեռախոսակապի ոլորտում մրցակցության բարձրացման արդյունքում սակագների որոշակի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում մատուցված ծառայությունների ծավալի աճին նպաստել է նաև վերջին երեք տարիներին զբոսաշրջության աճի տեմպի ավելացումը՝ պայմանավորված ինչպես երկրում համեմատաբար կայուն քաղաքական իրավիճակով, այնպես էլ վերջին տարիներին զբոսաշրջության ենթակառուցվածքների առաջանցիկ զարգացմամբ: Զբոսաշրջության աճի ուղղակի ազդեցությամբ աճ է արձանագրվել հյուրանոցային և ռեստորանային (3.8%-ով), ինչպես նաև զբոսաշրջության գործակալությունների (5.8%-ով) ծառայությունների ոլորտում: Ծառայությունների ծավալները 2.6%-ով նվազել են տրանսպորտի ոլորտում՝ պայմանավորված դիզելային վառելիքի և բենզինի գների թանկացմամբ:

Ծառայությունների ճյուղի՝ գնաճի վրա ունեցած ազդեցությանը ուղղակիորեն չի արտահայտվում: Մասնավորապես՝ ծառայությունների ոլորտի աճը համախառն պահանջարկի աճի արդյունք է և վկայում է բնակչության բարեկեցության աճի մասին: Վերջինս ենթադրում է, որ սպառողը պատրաստ է վճարել ավելի բարձր գին՝ բարձր որակի համար: Հետևաբար, ծառայությունների ոլորտի աճը պետք է որ զուգակցվի գների աճով:

Արդյունաբերության ոլորտում 2006 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ, արձանագրվել է ավելացված արժեքի 1.1% իրական աճ՝ առաջին եռամսյակում գրանցված 5.1% անկման համեմատ: Արդյունքում՝ արդյունաբերական արտադրանքի կիսամյակային աճը կազմել է -1.0%: Նշենք, որ շարունակվել է թանկարժեք մետաղների արտադրության ծավալների նվազումը, որը առաջին եռամսյակում արդյունաբերության ֆիզիկական ծավալի անկման հիմնական պատճառն էր: Միևնույն ժամանակ, իրական անկման դանդաղում է արձանագրվել էլեկտրաէներգիայի արտադրության և քիմիական արդյունաբերության ենթաճյուղերում, որին զուգընթաց, դանդաղել է նաև գունավոր մետաղագործության իրական աճի տեմպը: Դրա հետ մեկտեղ, արագացել է շինանյութերի արտադրության աճի տեմպը՝ պայմանավորված կապիտալ շինարարության ծավալների ավելացմամբ: Աննշան աճի տեմպեր են արձանագրվել սննդամթերքի արտադրության ոլորտում: Ըստ կիսամյակային արդյունքների՝ ավելացել են մսամթերքի, կաթնամթերքի, ոչ ալկոհոլային խմիչքների և բնական հյութերի արտադրության ծավալները, մինչդեռ նվազել է ալյուրի, պահածոների և ալկոհոլային խմիչքների արտադրությունը:

Պահանջարկի առաջանցիկ աճի պայմաններում արդյունաբերական արտադրանքի ծավալների աճի ցածր տեմպերը որոշակի գնաճային ճնշումներ են առաջացրել սպառողական շուկայում:

## Աշխատանքի շուկա

Վերջին չորս տարիներին արձանագրվող բարձր տնտեսական աճը, որը շարունակվել է նաև 2006 թվականի առաջին վեց ամիսներին, անմիջական ազդեցություն է ունեցել աշխատանքի շուկայի վրա՝ հետզհետե նվազեցնելով գործազրկության մակարդակը և հանգեցնելով աշխատավարձի աստիճանաբար ավելացման:

2006 թվականի երկրորդ եռամսյակում գործազրկության մակարդակը կազմել է 7.5% և նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ նվազել է 1 տոկոսային կետով: Հատկանշական է այն փաստը, որ, ինչպես և վերջին երկու տարիներին, հաշվետու ժամանակահատվածում ևս աշխատուժի նկատմամբ պաշտոնապես ներկայացված պահանջարկի մեծ մասը՝ 78%-ը, կազմել է բանվորական մասնագիտության նկատմամբ պահանջարկը: Վերջինս համահունչ է տնտեսական զարգացումներին՝ հաշվի առնելով հանրապետությունում արագ տեմպերով աճող շինարարական աշխատանքները, որոնք հիմնականում բարձր որակավորում չեն պահանջում:

Աշխատուժի նկատմամբ պահանջարկի ավելացման հետ մեկտեղ, շարունակաբար ավելանում է միջին ամսական աշխատավարձը, որը 2006 թվականի հունիսի դրությամբ կազմել է 64.8 հազար դրամ՝ նախորդ տարվա հունիսի համեմատ իրական արտահայտությամբ ավելանալով 22.0%-ով:

Աշխատավարձի աճ է արձանագրվել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում: Մասնավորապես՝ արդյունաբերության և շինարարության ճյուղերում միջին ամսական անվանական աշխատավարձն ավելացել է համապատասխանաբար 21.5% և 19.9%-ով, որի արդյունքում դրանց մակարդակը մոտ 30%-ով գերազանցել է ընդհանուր միջին աշխատավարձը: Ծառայությունների ճյուղում բարձր է եղել առևտրի և հանրային սննդի ենթաճյուղի աշխատավարձի (1.9 անգամ), ինչպես նաև կապի ենթաճյուղի աշխատավարձի (47.5%) աճը: Արդյունքում՝ ծառայությունների ոլորտի աշխատավարձը գերազանցել է ընդհանուր միջին աշխատավարձի մակարդակը: Անհամեմատելի բարձր է մնում վարկավորման և ապահովագրության ոլորտում աշխատավարձի մակարդակը, որը դիտարկվող ժամանակահատվածում մոտ 3.1 անգամ գերազանցել է ընդհանուր միջին աշխատավարձի ցուցանիշը՝ աճելով 12.6%-ով:

Աշխատանքի շուկան նկարագրող կարևորագույն ցուցանիշներից մեկը՝ աշխատուժի արտադրողականությունը, 2006 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, ավելացել է 13.1%-ով: Վերջինս, զիջելով իրական աշխատավարձի աճի ցուցանիշին, սպառողական շուկայում որոշակի գնաճային ճնշումներ է առաջացրել:

Արտադրողականության նկատմամբ իրական աշխատավարձի առաջանցիկ աճի շարունակման պարագայում, տարվա հաջորդ ամիսներին ևս կարելի է ակնկալել աշխատուժի շուկայի կողմից որոշակի գնաճային ճնշումների դրսևորում:

## Ներմուծման և ներքին արտադրանքի գներ

Երկրորդ եռամսյակում շարունակվել է ներմուծման գների աճը՝ հիմնականում կապված բնական գազի և նավթամթերքների միջազգային գների աճի հետ: Այնուամենայնիվ, դրամի փոխարժեքի արժևորումը և Կառավարության կողմից գազի սակագների ավելացման սուբսիդավորումը չեզոքացրել են ներմուծման գների աճի բացասական հետևանքները ներքին տնտեսության վրա: Արդյունքում, պայմանավորված որոշ չափով նաև մետաղների գների փոքր-ինչ նվազմամբ, դիտարկվել է արդյունաբերողների գների որոշակի գնանկում:

**ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՆԵՐ**


Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների՝ 2006 թվականի երկրորդ եռամսյակում ներմուծման դոլարային գները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 20.4 տոկոսով:

| Ցուցանիշներ | II եռ. 05 | III եռ. 05 | IV եռ. 05 | I եռ. 06 | II եռ. 06 | Կշիռներ |
|---|---|---|---|---|---|---|
| Ներմուծում | 6.0 | 7.6 | 7.1 | 11.7 | 20.4 | |
| Կապիտալ ապրանքներ[24] | -0.6 | 0.2 | 0.0 | 0.0 | 0.0 | 8.0% |
| Սպառողական ապրանքներ | 10.1 | 8.0 | 3.4 | 2.4 | 5.3 | 24.0% |
| Հումքային ապրանքներ | -5.0 | 0.0 | 9.7 | 23.1 | 33.4 | 35.0% |
| Ադամանդ[24] | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 17.0% |
| Նավթամթերք | 45.4 | 48.0 | 28.9 | 30.0 | 34.0 | 10.0% |
| Բնական գազ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 100.0 | 6.0% |

Ամենամեծ ազդեցությունը ունեցել է Ռուսաստանի Դաշնության կողմից 2 անգամ բնական գազի արտահանման գների թանկացումը, որը 6 տոկոսային կետի չափով ավելացրել է ներմուծման գները: Մյուս նավթամթերքների գները ևս դրսևորել են աճի արագացման միտումներ՝ հասնելով աննախադեպ անվանական մակարդակի՝ 75 ԱՄՆ դոլար՝ 1 բարել նավթի դիմաց:


*[24] Կապիտալ ապրանքների և ադամանդի գների գնահատումների բացակայությունը պայմանավորված է դրանց փաստացի խիստ մեծ տատանողականությամբ, այդ իսկ պատճառով նշված ապրանքների գների փոփոխությունը գնահատվում է զրոյական:*

*Ներմուծման գների աճը պայմանավորված է եղել հումքային ապրանքների և բնական գազի գների բանկացմամբ*




Երկրորդ եռամսյակի սկզբին արձանագրվել է հումքային ապրանքատեսակների գների աննախադեպ կտրուկ աճ (մայիսի 12-ին ոսկու գինը հասել է 714.8 ԱՄՆ դոլար՝ տրոյական ունցիայի դիմաց, իսկ պղնձի գինը՝ 8788.0 դոլար՝ տոննայի դիմաց): Դա պայմանավորվել է ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացմամբ, որի պարագայում ներդրողները լրացուցիչ պահանջարկ են ներկայացրել իրական ակտիվների նկատմամբ: Չնայած եռամսյակի երկրորդ կեսին գները որոշակի ճշգրտվել են, այնուամենայնիվ դրանք դեռևս մնում են բավականին բարձր մակարդակների վրա: Երկրորդ եռամսյակում շաքարի միջազգային գները կայունացել են, որը չեզոք ազդեցություն է ունեցել ներմուծման գների վրա:

*Նավթամթերքների դրամային գների աճը զսպվել է փոխարժեքի արժևորման արդյունքում*




Ներմուծված ապրանքների սպառողական գների աճը, որը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ կազմել է 5.3 տոկոս, գործընկեր երկրների գնաճի ազդեցության հետևանք էր: Եվրոպական արժույթների 12-ամսյա փոքր-ինչ արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ (մասնավորապես՝ եվրոյի փոխարժեքի արժեզրկումը կազմել է 0.2 տոկոս) ամբողջովին փոխհատուցվել է Ռուսաստանի Դաշնության ռուբլու արժևորմամբ, որը կազմել է 3.1 տոկոս: Այս ամենը դրսևորվել է սպասված սցենարի շրջանակներում:

Արտաքին աշխարհի գնաճային ճնշումները մասամբ չեզոքացվել են Կառավարության կողմից բնական գազի գների աճի սուբսիդավորմամբ և ՀՀ դրամի փոխարժեքի շարունակական արժևորմամբ: Երկրորդ եռամսյակում ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը կազմել է 2.7 տոկոս, չնայած նախորդ եռամսյակի համեմատ դիտարկվել է արժևորման տեմպերի նվազում (նախորդ եռամսյակում գրանցվել էր 5.8 տոկոս): Չնայած դրան, ներմուծման դոլարային գների աճը այնուամենայնիվ իր ընդլայնող արտահայտությունն է ստացել ՀՀ գնաճի ցուցանիշում, քանի որ ներմուծման դրամային գների աճը կազմել է 13.0 տոկոս:

## ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆԵՐ

2006 թվականի երկրորդ եռամսյակում տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է գների ինդեքսների աճ, որի արդյունքում ՀՆԱ դեֆլյատորը, մոտ 3 տոկոսային կետով զիջելով նախորդ տարվա համապատաս-

խան ցուցանիշին, կազմել է 103.1%: Հաշվետու ժամանակահատվածում դեֆլյատորի վրա առավել ընդլայնող ազդեցություն է ունեցել հիմնականում գյուղատնտեսության և բեռնափոխադրումների գների զգալի աճը՝ արդյունաբերության և շինարարության գների ինդեքսների համեմատաբար ցածր ավելացման պարագայում:


Գյուղատնտեսական մթերք արտադրողների գները բարձրացել են 14.3%-ով՝ նախորդ տարվա համապատասխան 1.9% նվազման պարագայում: Գյուղատնտեսական մթերքների մեծածախ գների նման բարձր աճը առավելապես պայմանավորվել է վերամշակող ձեռնարկությունների կողմից գյուղմթերքների նկատմամբ ներկայացված պահանջարկի աճով[25], ինչպես նաև գյուղմթերքների արտահանման ծավալների ավելացմամբ[26]:

2006 թվականի երկրորդ եռամսյակում գների զգալի աճ է արձանագրվել նաև բեռնաշրջանառության ոլորտում՝ կազմելով 23.2% (նախորդ երկու տարիների երկրորդ եռամսյակներում արձանագրվել էր նվազում): Բեռնափոխադրումների սակագների աճը պայմանավորվել է ապրիլից խողովակաշարային տրանսպորտով գազի բեռնափոխադրումների սակագների մոտ 40% ավելացմամբ: Այնուամենայնիվ, սպառողական գների վրա դրա ազդեցությունը չեզոքացվել է ՀՀ կառավարության նախաձեռնած՝ գազի գների թանկացման փոխհատուցման հատուկ ծրագրի շնորհիվ[27]:

Արդյունաբերության ոլորտում արտադրողների գների աճը կազմել է 2.8%՝ զիջելով նախորդ երկու տարիների նույն եռամսյակի ցուցանիշներին: Ընդ որում, գները նվազել են միայն էներգետիկայի և քիմիական արդյունաբերության ենթաճյուղերում՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագների որոշակի նվազմամբ:

Գունավոր մետաղագործության ենթաճյուղում հաշվետու եռամսյակի ընթացքում արձանագրվել է գների մոտ 31% աճ՝ հանգեցնելով առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ենթաճյուղի արտադրանքի գների մոտ 11% ավելացման՝ առաջին եռամսյակում գրանցված մոտ 15% նվազման պարագայում:

*2006թ. երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, բոլոր ճյուղային գների ինդեքսներն աճել են՝ առավելապես գյուղատնտեսության և բեռնափոխադրումների ճյուղերում*




Արդյունաբերության մյուս ճյուղերում շարունակվել է դեռ տարվա սկզբից արձանագրվող գների աճը, որը, ինչպես և նախորդ եռամսյակում, հատկապես բարձր է եղել շինանյութերի արտադրության (2006 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն կիսամյակի համեմատ, 27% աճ) և ոսկերչական արդյունաբերության (2006 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն կիսամյակի համեմատ, 15.8% աճ) ենթաճյուղերում: Ընդ որում, եթե ոսկերչական իրերի արտադրության գների աճը պայմանավորվել է միջազգային շուկայում թանկարժեք մետաղների և քարերի գների աճով, ապա շինա-

*[25] Հաշվետու ժամանակահատվածում գյուղմթերքներ վերամշակող ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրատեսակների աճ է արձանագրվել, մասնավորապես՝ բնական հյութերի արտադրությունը ավելացել է 14.6%-ով, կաթնամթերքինը՝ 8.9%-ով, մսամթերքինը՝ 33.8%-ով:*

*[26] Արտահանման կառուցվածքում գրանցվել է բուսական ծագման արտադրանքի 49.8% աճ:*

*[27] Համաձայն այս ծրագրի՝ ՀՀ ներքին սպառողների համար գազի գների մակարդակը մնալու է անփոփոխ մինչև 2008 թվականի դեկտեմբերը:*

նյութերի արտադրության ենթաճյուղում գների ավելացումը առավելապես պայմանավորվել է հաշվետու եռամսյակում կապիտալ շինարարության աճի տեմպերի արագացման արդյունքում շինանյութերի նկատմամբ պահանջարկի աճով:

Այնուհանդերձ, քանի որ արդյունաբերության ճյուղում գների վերը նշված փոփոխությունները տեղի են ունեցել ոչ սպառողական ապրանքների արտադրության ենթաճյուղերում, ճյուղի գների ազդեցությունը գնաճի մակարդակի ձևավորման վրա թույլ է եղել:

Շինարարության ոլորտում գների՝ նախորդ տարիներից արձանագրվող աճի միտումները որոշակի դանդաղել են, որի արդյունքում 2006 թվականի երկրորդ եռամսյակում ճյուղի գներն ավելացել են 5.4%-ով՝ 2005 թվականի համապատասխան 22.4% աճի դիմաց: Ճյուղում գների շարունակական բարձրացումը պայմանավորվել է կապիտալ շինարարության ծավալների պահպանվող բարձր աճով, որն ավելացնում է պահանջարկը շինմոնտաժային աշխատանքների և շինանյութերի շուկաներում՝ հանգեցնելով գների մշտական ավելացման: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության գների ինդեքսի կազմի մեջ մտնող շինմոնտաժային աշխատանքների և շինարարական ապրանքների գները սպառողական գների ինդեքսում չնչին կշիռ են կազմում (մոտ 0.3%), շինարարության գների ինդեքսն ուղղակի ազդեցություն չի թողնում գնաճի վրա:

## Արտաքին միջավայրի զարգացումներ

Արտաքին միջավայրի զարգացումների վերաբերյալ սպասումները տնտեսության իրավիճակի նկարագրության գնահատումից բխող հետևություններ են: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի 2006թ. սեպտեմբերի World Economic Outlook պարբերականի՝ տնտեսական աճը, հիմնականում պահպանելով 2006 թվականի բարձր մակարդակը, որոշակիորեն կնվազի 2007 թվականին:

| Ցուցանիշներ | 2005 | 2006 | 2007 |
|---|---|---|---|
| Համաշխարհային տնտեսություն | | | |
| Տնտեսական աճ | 4.8 | 5.1 | 4.9 |
| ԱՄՆ | | | |
| Տնտեսական աճ | 3.2 | 3.4 | 2.9 |
| Գնաճ | 3.4 | 3.6 | 2.9 |
| Եվրոգոտի | | | |
| Տնտեսական աճ | 1.3 | 2.4 | 2.0 |
| Գնաճ | 2.2 | 2.3 | 2.4 |
| Ռուսաստանի Դաշնություն | | | |
| Տնտեսական աճ | 6.4 | 6.5 | 6.5 |
| Գնաճ | 12.6 | 9.7 | 8.5 |

Եվրոմիության տնտեսական աճը 2006 թվականի համար վերանայվել է 0.4 տոկոսային կետով՝ ավելացման ուղղությամբ (կազմել է 2.4 տոկոս), մինչդեռ ԱՄՆ տնտեսական աճի կանխատեսված մակարդակը չի փոփոխվել: Հումքային ապրանքների գների բարձր աճի տեմպերը, ինչպես նաև եկամուտների և պահանջարկի աճը հանգեցնում են գնաճի ցուցանիշի ավելացմանը համաշխարհային կտրվածքով, չնայած այդ ցուցանիշը դեռևս մնում է բավականին ցածր պատմական շարքերի տեսանկյունից:

| | I-06 | II-06 | III-06 | IV-06 | I-07[28] | II-07[28] |
|---|---|---|---|---|---|---|
| LIBOR 3-ամսյա տոկոսադրույք | 4.8 | 5.3 | 5.6 | 5.6 | 5.5 | 5.4 |
| USD/EUR փոխարժեք | 1.20 | 1.26 | 1.28 | 1.30 | 1.30 | 1.30 |
| RUR/USD փոխարժեք | 28.2 | 27.2 | 26.9 | 26.7 | 26.7 | 26.7 |
| | | | | | | |
| Brent տեսակի նավթի գին (ԱՄՆ դոլար/1 բարել) | 61.9 | 71.1 | 74.5 | 79.0 | 80.6 | 80.6 |
| Ոսկու գին (ԱՄՆ դոլար /1 ունցիա) | 554.0 | 620.2 | 631.7 | 645.0 | 650.0 | 650.0 |
| Պղնձի գին (ԱՄՆ դոլար/1 տոննա) | 4947.5 | 6800.0 | 7546.7 | 7360.0 | 7180.0 | 7000.0 |

Միջազգային ֆինանսական շուկաներում ազդեցություն ունեցող գործոնները շարունակում են մնալ զսպող՝ պայմանավորված ԱՄՆ Ֆեդերալ պահուստային համակարգի և Եվրոպական կենտրոնական բանկի վարած տոկոսադրույքների շարունակական բարձրացման քաղաքականությամբ: Դեռևս պահպանվում են ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացման որոշակի սպասումները՝ պայմանավորված ԱՄՆ ընթացիկ հաշվի պակասուրդի մեծ չափերով և Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքների բարձրացման քաղաքականության սպասվող դադարեցմամբ: Աշխարհաքաղաքական զարգացումները, բարձր տնտեսական աճը և ԱՄՆ դոլարի կանխատեսվող արժեզրկումը հումքային ապրանքների գները ուղղորդում են դեպի վեր՝ առաջին հերթին արտահայտվելով նավթամթերքների և մետաղների գներում: Միևնույն ժամանակ, բնակլիմայական պայմանների որոշակի վատթարացման պարագայում մեծանում է նաև գյուղատնտեսական ապրանքների, մասնավորապես՝ հացահատիկի գների աճի հավանականությունը:

[28] *Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների:*

# Ներքին տնտեսության զարգացումներ

## ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ

2006 թվականի առաջին կիսամյակում տնտեսության ճյուղային զարգացումները իրատեսական են դարձնում տարվա վերջի դրությամբ տարեկան երկնիշ տնտեսական աճի ապահովումը: Ընդ որում, տնտեսական աճին նպաստման առումով առանձնանալու են հիմնականում կապիտալ շինարարության և ծառայությունների ճյուղերը: Միևնույն ժամանակ, ակնկալվում է արդյունաբերության աճի տեմպերի դանդաղ վերականգնում և գյուղատնտեսության աճի տեմպի որոշակի դանդաղում:

Ակնկալվում է նաև տնտեսության զարգացման վերը նկարագրված միտումների պահպանում 2007 թվականի առաջին կեսին, որի պարագայում երկրորդ եռամսյակում կանխատեսվում է տնտեսական աճի շուրջ 8.0% մակարդակ: Դրան առավելապես նպաստելու են ծառայությունների (մոտ 3.3 տոկոսային կետով) և շինարարության (մոտ 2.5 տոկոսային կետով) ճյուղերը:

Նշված ժամանակահատվածում կանխատեսվում է արդյունաբերության աճի տեմպերի վերականգնում, որը կդրսևորվի 2006 թվականի երրորդ եռամսյակից սկսած՝ պայմանավորված, մասնավորապես, գունավոր մետաղագործության ենթաճյուղում նոր արտադրական հզորությունների գործարկման համար իրականացվող ներդրումներով: Արդյունաբերության ոլորտի աճի միտումը կպահպանվի նաև 2007 թվականի երկրորդ եռամսյակում:

Գյուղատնտեսության ոլորտում, ըստ 2006 թվականի արդյունքների, կանխատեսվում է մոտ 6.5% տարեկան աճի տեմպ, որը պայմանավորված կլինի անասնապահության ենթաճյուղի կայուն աճով և բուսաբուծությունում ակնկալվող՝ բանջարեղենի և մրգի բերքի ավելացմամբ: Այնուամենայնիվ, ճյուղի արտադրողականության աճի էական տեղաշարժեր չեն ենթադրվում, որի հետևանքով 2007 թվականի առաջին կիսամյակում գյուղատնտեսությունում կպահպանվի ավելացված արժեքի աճի փոքր (մոտ 3%) ցուցանիշը:

Ինչպես 2006 թվականի տարեկան արդյունքներով, այնպես էլ 2007 թվականի առաջին կիսամյակում ակնկալվում է կապիտալ շինարարության աճի բարձր տեմպերի պահպանում, որը, մասնավորապես, կպայմանավորվի ընթացիկ շինարարական նախագծերի երկարաժամկետ բնույթով, ինչպես նաև նոր ներդրումային ծրագրերի իրագործմամբ:

Նշված ժամանակահատվածում ծառայությունների ոլորտում նույնպես պահպանվելու են աճի բարձր տեմպեր՝ պայմանավորված բնակչության եկամուտների շարունակվող աճով: Միևնույն ժամանակ, կապի ոլորտում սպասվում է զգալի աշխուժացում՝ կապված Հայաստանի հեռախոսակապի շուկա նոր օպերատորների ակնկալվող մուտքի և ներդրումների հետ, իսկ տրանսպորտի ոլորտում կանխատեսվող աճը կապված է երկաթգծի նոր ուղղության (Երևան-Բաթում) ակտիվ շահագործման, ինչպես նաև Իրան-Հայաստան նոր գազամուղի շահագործման հետ:

## ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Ինչպես 2006 թվականի առաջին կիսամյակի ընթացքում, այնպես էլ մինչև տարեվերջ տնտեսական աճի սպասվող բարձր մակարդակը կապահովվի ներքին պահանջարկի աճի հաշվին: Ներքին պահանջարկի կառուցվածքում պահպանվելու են մասնավորապես մասնավոր ներդրումների աճի տեմպերը, թեև ակնկալվում է մասնավոր սպառման աճի տեմպի որոշակի նվազում:

Համախառն պահանջարկի կառուցվածքում 2007 թվականի առաջին կիսամյակում կանխատեսվում է մասնավոր ծախսերի 9%-ից ավելի աճ: Մասնավորապես՝ առաջին եռամսյակում այն ապահովվելու է հիմնականում 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ մասնավոր սպառման շուրջ 10% ավելացմամբ, իսկ երկրորդ եռամսյակում՝ նաև մասնավոր ներդրումների ակնկալվող աճի տեմպի ավելացմամբ (2007 թվականի երկրորդ եռամսյակում, 2006 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, ենթադրվում է մասնավոր ներդրումների 10%-ից ավելի իրական աճ):

## ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Ելնելով տարվա առաջին և երկրորդ եռամսյակներում պետական բյուջեի կատարման արդյունքներից՝ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը 2006 թվականին կլինի փոքր-ինչ ընդլայնող, ինչպես և ծրագրված էր: Ծախսերի մասով դեռևս առկա են որոշակի անորոշություններ՝ կապված սեփականաշնորհման արտարժութային հաշվից նախատեսված միջոցների փոխարկման և ծախսման, ինչպես նաև առաջին կիսամյակում ընթացիկ ծախսերից ձևավորված խնայողությունները երկրորդ կիսամյակ տեղափոխելու հետ: Չնայած դրան, ենթադրվում է, որ Կառավարությունը կկատարի բյուջեով նախատեսված ծախսերի ծրագիրը: Տարվա

առաջին կեսին արձանագրված գերակատարումների միտումի պահպանման պարագայում տարվա արդյունքում եկամուտները կունենան զսպող ազդեցություն:

ՀՀ 2007-2009 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախնական ցուցանիշների և ՀՆԱ նախնական կանխատեսումների հիման վրա կատարված հաշվարկների համաձայն՝ 2007 թվականի երկրորդ եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա զսպող ազդեցություն:

## Գնաճի կանխատեսումներ

**ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ**

Գնաճի կանխատեսումներում կատարվել են արտաքին հատվածին առնչվող հետևյալ ենթադրությունները: Հումքային ապրանքների՝ նավթամթերքների և մետաղների գները հնարավոր է ավելի արագ աճեն, քան նախատեսված է ծրագրով՝ կախված աշխարհաքաղաքական և տնտեսական զարգացումներից: Բացի դրանից, հացահատիկի գների աճը, որը նախորդ եռամսյակում գնահատվել էր որպես չեզոքացված, նորից դարձել է հավանական՝ կապված Ռուսաստանում համեմատաբար չորային հունիս ամսվա հետ: Շաքարավազի միջազգային գները արդեն կայունացել են, և նոր ռիսկեր այս ուղղությամբ չեն ակնկալվում: Բացի դրանից, քանի որ առկա են հիմնական արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի հետագա արժեզրկման որոշակի սպասումներ, ապա կան գործընկեր երկրներից ներմուծվող ապրանքների դոլարային գների հետագա աճի մտավախություններ: Ամեն դեպքում, արտաքին հատվածից եկող բոլոր ռիսկերը գնաճի ցուցանիշի վրա ունեն ընդլայնողական ազդեցություն:

**ՆԵՐՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ**

Ներքին տնտեսությանն առնչվող հիմնական ենթադրությունները հետևյալն են.

- Իրատեսական է 2006 թվականին երկնիշ տնտեսական աճի արձանագրումը: Ընդ որում՝ 2007 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում թեև որոշակի կդանդաղեն տնտեսական աճի տեմպերը, այնուհանդերձ կմնան բարձր մակարդակի վրա: Տնտեսական աճի ակնկալվող բարձր մակարդակի մասին են վկայում նաև տնտեսավարող սուբյեկտների դրական սպասումները՝ ըստ ԿԲ բաղադրյալ ինդեքսների (գործարար միջավայրի, տնտեսական ակտիվության, սպառողների վստահության ինդեքսներ):
- Տնտեսական աճի շարժիչ ուժը կշարունակեն մնալ ծառայությունների և շինարարության ոլորտները, թեև ակնկալվում է արդյունաբերության ճյուղի աճի տեմպերի փոքր-ինչ արագացում: Ընդ որում, շինարարության և ծառայությունների ոլորտների աճը, արտադրողականության աճի սահմանափակության պարագայում, պահանջարկի բարձր աճի շարունակական դրսևորման արդյունք կլինի[29]:
- Հիմնականում շինարարության և ծառայությունների աճի հաշվին ակնկալվող տնտեսական աճի բարձր տեմպերը ճնշումներ կառաջացնեն աշխատուժի շուկայում: Իսկ աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճը կհանգեցնի աշխատավարձերի բարձրացման: Ակնկալվում է, որ 2007 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում կդրսևորվեն աշխատավարձերի աճի՝ նախորդ տարվա միտումները:
- Ամբողջական պահանջարկի աճի բարձր մակարդակը, ի հաշիվ ներքին պահանջարկի աճի, կշարունակի դրսևորվել նաև 2007 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում: Իսկ մասնավոր հատվածի ծախսերի աճը կգերազանցի պետական հատվածի կողմից կատարվող ծախսերի աճը, ինչը կարտացոլի նախորդ տարիներին բնակչության եկամուտների աճը և ֆինանսական ներհոսքը:
- Հաշվի առնելով ՀՀ 2007-2009 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախնական ցուցանիշները և ՀՆԱ նախնական կանխատեսումները՝ հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա կլինի չեզոք:

---

*[29] Տնտեսագիտության տեսության մեջ տարանջատվում է տնտեսական աճի երկու մոտեցում՝ առաջարկով (Supply Push) և պահանջարկով (Demand Pull) պայմանավորված տնտեսական աճեր: Սովորաբար տնտեսության ոչ արտահանելի ճյուղը (շինարարություն, ծառայություններ, բացառությամբ ֆինանսական ծառայությունների), որտեղ արտադրողականության աճը սահմանափակ է, արձագանքում է պահանջարկի վարքագծին: Իսկ արտահանելի ճյուղի ցուցանիշը (արդյունաբերություն) կարող է աճել նաև արտադրողականության աճի հաշվին՝ պահանջարկի անփոփոխ լինելու պարագայում:*

Վերը նշված ներքին և արտաքին միջավայրերի ներկայացված սցենարի պայմաններում ակնկալվում է, որ 2007 թ. երկրորդ եռամսյակի գնաճը կգերազանցի 3% ծրագրային մակարդակը: Ընդ որում, բարձր գնաճի միջավայր կձևավորեն և՛ առաջարկի, և՛ պահանջարկի գործոնները: Արտաքին հատվածի՝ վերը նշված սցենարի դեպքում, մասնավորապես վառելիքի և ցորենի համաշխարհային գների ակնկալվող աճի պայմաններում, կարձանագրվի առաջարկի գնաճ՝ կապված ներմուծվող ապրանքների դոլարային գների աճի հետ: Ավելացող պահանջարկի և գյուղատնտեսության առաջարկի աճի կանխատեսվող ցածր տեմպերի պայմաններում առաջարկի գնաճի կիանգեցնեն գյուղմթերքների գները:

Միաժամանակ, ներքին միջավայրի նշված սցենարը ենթադրում է նաև համախառն պահանջարկի աճ, որը կպայմանավորվի տնտեսության աճի բարձր տեմպերի շարունակմամբ, ինչպես նաև արտաքին ֆինանսական ներհոսքի աճով:

Գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու համար ԿԲ-ն երրորդ եռամսյակում կշարունակի նախորդ եռամսյակների համեմատությամբ իրականացնել ավելի քիչ ընդլայնողական քաղաքականություն: Հնարավոր է՝ եռամսյակի ընթացքում փողի ագրեգատների աճի տեմպերը վերանայվեն, իսկ տոկոսադրույքները՝ բարձրացվեն:

Առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածի կանխատեսումներն առավել մանրամասն ներկայացված են 2006 թվականի երրորդ եռամսյակի կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հուլիսի 4-ի նիստի արձանագրությունում:

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(04.05.2006)

### 2006 թվականի մայիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

**2006 թվականի մայիսի 4-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Ա. Նորեկյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը:**

**ՀՀ ԿԲ խորհրդի կողմից մայիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչև մայիսն ընկած ժամանակահատվածում ձևավորված մակրոտնտեսական իրավիճակի՝ ներառյալ գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ցուցանիշների ներկայացումը, ինչպես նաև ապագայի հավանական ռիսկերը:**

*Գնաճ.* 2006 թվականի ապրիլին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 0.3% գնաճ:

*Արտաքին հատված.* Արտաքին հատվածի առաջին եռամսյակի վարքագիծն ամբողջովին համընկել է կանխատեսումներին. նավթամթերքի և այլ հումքային ապրանքների գները, ինչպես նաև եվրոյի փոխարժեքը և միջազգային տոկոսադրույքները կանխատեսվածի շրջանակում են:

Երկրորդ եռամսյակի սկզբին նավթամթերքի գների և եվրոյի փոխարժեքի զարգացումներն ապագա ժամանակահատվածի համար գնաճային ճնշումների առկայության բավականին մեծ ռիսկեր են առաջացրել:

*Իրական հատված*. Տնտեսության իրական հատվածում առաջին եռամսյակում արձանագրվել է 7.9% իրական աճ, որը կանխատեսումների շրջանակում է: Սակայն որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել տնտեսության ճյուղային կառուցվածքում. արդյունաբերության ոլորտում արձանագրվել է իրական նվազում՝ հիմնականում ի հաշիվ գազի, ջրի և էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման ոլորտներում արձանագրված անկման՝ պայմանավորված հունվարին գազամուղի խափանմամբ: Բացի այդ, իրական արտահանման ծավալների նվազում է գրանցվել նաև ադամանդագործության և ոչ թանկարժեք մետաղների արտադրության ծավալների կրճատման արդյունքում:

Գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտներում արձանագրված իրական աճի ցուցանիշները փոքր-ինչ գերազանցել են սպասումները և, հնարավոր է, որ այդ միտումը կշարունակվի հաջորդ եռամսյակներում: Միաժամանակ, շինարարության ոլորտում գրանցվել է բավականին մեծ աճ, որն, ամենայն հավանականությամբ, կպահպանվի տարվա ընթացքում: Վերջինս կարող է փոխհատուցել արդյունաբերության ոլորտում արձանագրված աճի տեմպերի անկումը:

Ընդհանուր առմամբ, թեև ճյուղային ոլորտների միտումները սպասվածից որոշակի շեղվել են, այնուամենայնիվ ակնկալվում է, որ երկրորդ եռամսյակում տնտեսության իրական աճը կձևավորվի կանխատեսված 9.3%-ի շրջանակում:

*Համախմբված բյուջե.* 2006 թվականի առաջին եռամսյակում հարկաբյուջետային հատվածը գնաճի վրա ունեցել է փոքր-ինչ զսպող ազդեցություն, թեև ծրագրված էր ընդլայնողական ազդեցություն:

2006 թվականի ապրիլին, 2005 թվականի նույն ամսվա համեմատությամբ, արձանագրվել է եկամուտների՝ 16.8% և ծախսերի 24.5% աճ: Ընդհանուր առմամբ, գնաճի նպատակային ցուցանիշի ապահովման առումով հարկաբյուջետային հատվածում էական ռիսկեր չկան:

*Փող և վարկ.* Տնտեսության դրամավարկային հատվածի զարգացումները (փողի և դրամային զանգվածները, փողի բազան և կանխիկը) հիմնականում համահունչ էին կանխատեսումներին: Երկրորդ եռամ-

սյակի կանխատեսումներում հաշվի է առնվել դրամայնացման գործընթացի տեմպերի նվազման միտումը, և, ըստ նախնական տվյալների, կանխատեսվածից ավելի արագ են աճել արտարժութային ավանդները և ավելի դանդաղ՝ դրամային ավանդները: Նմանապես, թեև տնտեսության վարկավորումը համապատասխանել է կանխատեսվածին, սակայն դրամով վարկավորման տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ կազմելով 35.1%, զիջել է տարեսկզբի ցուցանիշը:

Խորհուրդն արձանագրել է, որ 2006 թվականի ապրիլի զարգացումներն ընդհանուր առմամբ համահունչ են երկրորդ եռամսյակի և տարեկան կանխատեսումներին: Հետևելով 2006 թվականի առաջին ամիսներին մակրոտնտեսական միջավայրի զարգացումներին՝ Կենտրոնական բանկի խորհուրդը կրկին հաստատել է տարվա ընթացքում երկնիշ տնտեսական աճի արձանագրման հնարավորությունը: Երկնիշ տնտեսական աճը, զուգակցվելով համաշխարհային շուկայում էներգակիրների անկանխատեսելի աճող գների հետ, շարունակում է ստեղծել գնաճային ճնշումներ: Միաժամանակ, պայմանավորված բնական գազի սակագների՝ տարեսկզբին սպասվածից էականորեն ավելի ցածր աճով, բնակչության շրջանում աստիճանաբար չեզոքանում են գնաճային սպասումները:

Կենտրոնական բանկի խորհրդի գնահատմամբ՝ գնաճային ճնշումների՝ տարեկան առավելագույնը 3% նպատակային ցուցանիշի գերազանցման ռիսկերը դեռևս առկա են, և Կենտրոնական բանկը շարունակելու է աստիճանաբար չեզոքացնել գնաճային ճնշումները:

ԿԲ խորհուրդը որոշել է անփոփոխ թողնել ԿԲ ռեպո (վերաֆինանսավորման) տոկոսադրույքը՝ 4%, և ավանդների տոկոսադրույքը՝ 1%, իսկ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը նվազեցրել է մինչև 7%:

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(31.05.2006)

### 2006 թվականի հունիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

**2006 թվականի մայիսի 31-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Ա. Նորեկյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը:**

**ՀՀ ԿԲ խորհրդի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչև մայիս ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ցուցանիշների, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի ռիսկերի ներկայացումը:**

***Գնաճ.*** 2006 թվականի մայիսին, նախորդ ամսվա համեմատ, արձանագրվել է 2.4% գնաճ:

12-ամսյա գնաճը կազմել է 2.4%, ընդ որում՝ պարենային ապրանքներինը՝ 3.4% գնանկում, ոչ պարենային ապրանքներինը՝ 4.6%, ծառայություններինը՝ 2.9% գնաճ: 2006 թվականի հունվար-մայիսին, 2005 թվականի դեկտեմբերի համեմատ, գրանցվել է 5.6% գնաճ:

2005 թվականի դեկտեմբերի համեմատ 2006 թվականին առաջին եռամսյակի ընթացքում, ինչպես արդեն հրապարակվել է, գրանցվել է 4.2% գնաճ, որը բավականին մոտ է եղել կանխատեսված 4.4% ցուցանիշին: 2006 թվականի ապրիլից սկսած՝ Ազգային վիճակագրական ծառայությունը գնաճի ցուցանիշը հաշվարկում է ըստ նոր սպառողական զամբյուղի (վերահաշվարկել են նաև անցած ամիսների գնաճի ցուցանիշները), ըստ որի՝ սպառողական զամբյուղում ծառայությունների տեսակարար կշիռն ավելացել է 11 տոկոսային կետով՝ ի հաշիվ պարենային ապրանքների տեսակարար կշռի: Ըստ նորացված հաշվարկների՝ առաջին եռամսյակի ընթացքում, 2005 թվականի դեկտեմբերի համեմատ, արձանագրվել է 2.8% գնաճ: ԿԲ-ում գնաճի եռամսյակային կանխատեսումներն իրականացվել էին հին սպառողական զամբյուղի հիման վրա, այդ իսկ պատճառով առաջին եռամսյակի նոր ցուցանիշի հետ համեմատություններ անել հնարավոր չէ: 2006 թվականի երկրորդ եռամսյակում (ապրիլ-հունիսը՝ մարտի վերջի համեմատ) կանխատեսվել է առավելագույնը 1.9% գնաճ: Ապրիլ-մայիսին արձանագրված գնաճը նույնպես սպասվածի շրջանակներում է: Ըստ էության, գնաճի ցուցանիշները համապատասխանում են ոչ միայն կանխատեսումներին, այլ նաև տարեկան առավելագույն 3% նպատակային ցուցանիշի ապահովման սցենարին:

***Արտաքին միջավայր.*** 2006 թվականի երկրորդ եռամսյակի սկզբից արտաքին ֆինանսական շուկաներում դրսևորվեցին էական տատանումներ՝ կապված և՛ արժույթների փոխարժեքների, և՛ հումքային ապրանքատեսակների գների հետ: Ապրիլից նկատվեց հիմնական արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի դիրքերի սպասվածից շատ թուլացում. մասնավորապես՝ եվրոյի նկատմամբ ԱՄՆ դոլարը արժեզրկվեց մոտ 4-5 տոկոսով: Բացի այդ, վերսկսվեց հումքային ապրանքների (նավթամթերքների, թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղների) գների աճը: Ոչ թանկարժեք և թանկարժեք մետաղների գների բարձրացումը հանգեցրեց արտահանումից ստացվող արտարժութային մուտքերի մեծացման, որը շարունակելու է առաջացնել ճնշումներ արժևորման ուղղությամբ: Միաժամանակ, նավթամթերքի միջազգային գների աճը կարող է Հայաստանի սպառողական գների վրա ընդլայնող ազդեցություն ունենալ:

***Իրական հատված.*** 2006 թվականի առաջին չորս ամիսներին ՀՆԱ իրական աճը եղել է կանխատեսվածի շրջանակներում: Այնուամենայնիվ, դրա ճյուղային կառուցվածքում շարունակվել են նկատվել որոշակի տեղաշարժեր. հունվար-ապրիլին շինարարության ոլորտում շարունակաբար արձանագրվել է իրական աճի արագացման միտում, որին զուգահեռ, արդյունաբերության ոլորտում մեղմվել է տարվա սկզբից դրսևորված անկումը:

Գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտներում զարգացումները համահունչ են կանխատեսվածին:

ՀՀ արտահանման ու ներմուծման առումով հարկ է նշել, որ, թեև արտահանման ցուցանիշները մոտ են կանխատեսվածին, սակայն որոշակիորեն մեծանում է ներմուծման ծավալների՝ ակնկալվածից բարձր աճի դրսևորման ռիսկը:

***Համախմբված բյուջե.*** 2006 թվականի երկրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը գնաճի վրա, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, գնահատվում է չեզոք:

***Փող և վարկ.*** Դրամավարկային հատվածի գրեթե բոլոր ցուցանիշների շարժը վկայում է ազգային արժույթի նկատմամբ պահանջարկի աճի տեմպերի նվազման մասին, հետևաբար նաև՝ տնտեսության դոլարայնացման նվազման տեմպերի դանդաղման մասին: Սա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է 2006 թվականի առաջին ամիսներին դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի, դրամի արժևորման տեմպերի հարաբերականորեն կայունացմամբ: Դրամի նկատմամբ պահանջարկի աճի տեմպերի նվազումն արտացոլվել է դրամավարկային հատվածի գրեթե բոլոր ցուցանիշներում, որի արդյունքում արձանագրվել են կանխատեսումներից դրանց շեղումներ: Նմանապես, արտարժութային ավանդների աճը մոտ կրկնակի գերազանցել է կանխատեսվածը, իսկ դրամային ավանդներինը՝ զիջել: Չնայած նշված միտումներին, տնտեսության վարկավորման ծավալներում 0.6 տոկոսային կետով ավելացել է դրամով վարկավորման տեսակարար կշիռը:

***Արծանագրեցին.*** ԿԲ խորհուրդը շարունակում է իրատեսական համարել տարվա ընթացքում երկնիշ տնտեսական աճի արձանագրումը: Թեև գնաճի վրա ազդեցության առումով դեռևս մտահոգիչ է համաշխարհային շուկայում էներգակիրների գների անկանխատեսելի աճը, ԿԲ խորհուրդը համակարծիք է, որ էապես մեղմվել են գնաճի՝ նպատակային ցուցանիշից գերազանցման տարեսկզբի սպասումները, ինչին զգալիորեն նպաստել է բնական գազի սակագների՝ կանխատեսվածից էականորեն ցածր աճը:

Հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտում սպասվող բարձր աճի հետ զուգակցվող սեզոնային գնանկման՝ արտաքին միջավայրից եկող և ներքին տնտեսության ռիսկերի դրսևորման արդյունքում ակնկալվող գնաճը չեզոքացնելու ներուժը՝ ԿԲ խորհուրդը հավանական է համարում 2006 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճի՝ նպատակային առավելագույնը 3% ցուցանիշի սահմաններում արձանագրումը:

Տնտեսության զարգացման առկա միտումների պահպանման դեպքում ԿԲ խորհուրդը չի բացառում առաջիկա ամիսների ընթացքում տոկոսադրույքի ճշգրտման հավանականությունը:

***Որոշեցին.*** 2006 թվականի հունիս ամսվա ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ 4%, ավանդների տոկոսադրույքը՝ 1%, լոմբարդային վարկի տոկոսադրույքը՝ 7%:

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(4.07.2006)

**2006 թվականի երրորդ եռամսյակի կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ**

**2006 թվականի հուլիսի 4-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Կ. Մինասյանը, Ա. Նորեկյանը, Վ. Գաբրիելյանը:**

**ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2006 թվականի երրորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց երկրորդ եռամսյակի տնտեսական իրավիճակի և փաստացի գնաճի վերլուծության և 2006 թվականի հուլիսից 2007 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածի կանխատեսումների ներկայացումը: Փաստացի տվյալները և կանխատեսումները ներառում են տնտեսության իրական, արտաքին, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները, ինչպես նաև ապագայի հավանական ռիսկերը:**

**Ըստ ԿԲ կանխատեսումների՝ շուկայի սպասումների ներքո ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման պայմաններում 2006 թվականի երրորդ եռամսյակի վերջին 12-ամսյա գնաճը կկազմի 3.05%, 2007 թվականի հունիսին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ՝ 4.1%, իսկ 2006 թվականի վերջի դրությամբ գնաճի կանխատեսումները տարեկան 3%-ի շրջանակում են: Գնահատվել է տնտեսության առանձին հատվածների ազդեցությունը գնաճի կանխատեսված ցուցանիշի վրա:**

### 2006 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

2006 թվականի հունիսին 12-ամսյա գնաճը կազմել է 2.7%՝ կանխատեսված 3.4%-ի փոխարեն (տե՛ս ԿԲ խորհրդի նիստի ս.թ. ապրիլի 10-ի արձանագրությունը), որին համապատասխանում է հունիսի՝ դեկտեմբերի համեմատությամբ 4.3% գնաճի ցուցանիշը: Ընդ որում, պարենային ապրանքների գների 12-ամսյա աճը կազմել է 3.4%, ոչ պարենային ապրանքներինը՝ 5.1% և ծառայությունների սակագներինը՝ 2.2%: Երկրորդ եռամսյակի ընթացքում դրսևորվել են արտաքին միջավայրին վերաբերող՝ նախօրոք մատնանշված որոշակի ռիսկեր. 1. նավթի միջազգային գների աճն էապես գերազանցել է սպասումները. երկրորդ եռամսյակում նավթի միջազգային գների տարեկան աճը, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ, կազմել է 32.4%, 2. ԱՄՆ դոլարը երկրորդ եռամսյակի սկզբից կտրուկ արժեզրկվել է միջազգային շուկայում, սակայն մայիսի կեսից դրսևորել է որոշակի արժևորման վարքագիծ: Երկրորդ եռամսյակում ԱՄՆ դոլարի տարեկան արժևորումը եվրոյի նկատմամբ կազմել է 0.4%, թեև տարվա սկզբի համեմատ միտումն արժեզրկման ուղղությամբ է:

Իրական հատվածում հունվար-մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արձանագրվել է արդյունաբերության ոլորտի արտադրության ծավալների 1.9%-ով անկում և գյուղատնտեսության ոլորտի սպասվածից ավելի ցածր՝ 2% աճ՝ պայմանավորված բուսաբուծության՝ կանխատեսվածից ցածր աճով, որի հետևանքով սեզոնային գնանկումը որոշակիորեն մեղմվել է: Ինչ վերաբերում է շինարարության և ծառայությունների ոլորտներին, դրանց աճը մայիսին կազմել է համապատասխանաբար 35.1% և 15.5%, որոնք էլ հիմնականում պայմանավորել են ՀՆԱ-ի 10.6%-ով աճը: Կապիտալ շինարարության ծավալների աճը խթանել է համախառն պահանջարկը, մասնավորապես՝ եկամուտների ավելացման միջոցով, սակայն քանի որ այս ոլորտը սպասարկվել է մեծամասամբ կապիտալի ներհոսքով, դա նպաստել է դրամի արժևորմանը և չեզոքացրել գնաճային ճնշումները:

Ներմուծումն ավելացել է 17.4%-ով՝ հիմնականում սարքավորումների ներկրման հաշվին, իսկ արտահանումը նվազել է 4.6%-ով՝ արտացոլելով արդյունաբերության ոլորտի զարգացումները:

Հարկաբյուջետային քաղաքականությունը, գնաճի վրա ազդեցության առումով, կանխատեսվածից պակաս ընդլայնողական է եղել: Տնտեսության իրական, արտաքին և հարկաբյուջետային հատվածների զարգացումների ներքո դրամավարկային հատվածի ցուցանիշները մոտ են եղել կանխատեսումներին, սակայն երկրորդ եռամսյակում ևս շարունակվել են տարեսկզբի միտումները, և կանխատեսումներից արձանագրված շեղումները հիմնականում պայմանավորվել են դրամայնացման գործընթացի դանդաղմամբ: Ընդհանուր առմամբ, 2006 թվականի երկրորդ եռամսյակում իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքում ևս բավարարվել է տնտեսության փողի պահանջարկը՝ առաջնայնու-

թյունը տալով գների կայունության ապահովմանը: Դրամավարկային քաղաքականության արդյունավետությանը մեծապես նպաստել են ԿԲ գործիքակազմի կիրառման մեխանիզմների փոփոխությունները, ըստ որոնց՝ ռեպո գործառնությունները դրամավարկային քաղաքականության հիմնական գործիք են, և ավելացել է դրանց կնքման հաճախականությունը (տե՛ս «ՀՀ կենտրոնական բանկի բանբեր», 2006 թվականի 1-ին եռամսյակ): Կապված ԿԲ գործիքակազմի կիրառման մեխանիզմների փոփոխությունների հետ՝ էական առաջընթաց է արձանագրվել մի քանի ուղղություններով. 1. այս պայմաններում առևտրային բանկերը լավագույն ձևով են կառավարել ԿԲ-ում թղթակցային հաշիվները, որի արդյունքում բանկային համակարգում էապես նվազել է ավելցուկային իրացվելիությունը, ինչն ուղղվել է հիմնականում տնտեսության վարկավորմանը (վերջինիս աճին նպաստել է նաև արտաքին ակտիվների փոխարկումը ներքին վարկավորման), 2. որոշակիորեն հնարավոր է դարձել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի միջոցով ազդակների փոխանցումը ֆինանսական շուկային, որն աստիճանաբար կհանգեցնի տոկոսադրույքների փոխանցման լծակի ակտիվացմանը:

2006 թվականի առանձնահատկություններից է տարեսկզբին տնտեսության վարկավորման զգալի աճը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ հունիսի վերջին՝ 41.2%, որի շուրջ 60%-ը բաժին է ընկել դրամով վարկավորմանը:

Սպասվածից բարձր է եղել մասնավոր տրանսֆերտների զուտ ներհոսքը, որի տարեկան աճը, ըստ Կենտրոնական բանկի գնահատումների, երկրորդ եռամսյակում կազմել է 36.5%: Վերջինս, զուգակցվելով հիմնականում կապիտալ շինարարության նպատակով ստացված արտարժութային ներհոսքի և ԱՄՆ դոլարի միջազգային դիրքերի թուլացման հետ, երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հանգեցրել է ՀՀ դրամի 6.54%-ով արժևորման:

Վերը նկարագրված զարգացումներն ավելի ծավալուն կներկայացվեն 2006 թվականի երկրորդ եռամսյակի գնաճի հաշվետվությունում:

## 2006 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՈՒ ՉՈՐՐՈՐԴ ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՃՇԳՐՏՎԱԾ ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

*Արտաքին հատված.* Ակնկալվում է, որ ԱՄՆ դոլարի տարեկան արժեզրկման միտումները կպահպանվեն ինչպես 2006 թվականի երկրորդ, այնպես էլ 2007 թվականի առաջին կիսամյակներում: Ենթադրվում է նաև, որ նավթի միջազգային գները կպահպանվեն արդեն ձևավորված մակարդակի վրա, և գների լրացուցիչ աճի ռիսկեր չեն ակնկալվում: Իսկ 2007 թ. երկրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատությամբ, կանխատեսվում է նավթի միջազգային գների որոշակի ճշգրտում՝ նվազման ուղղությամբ:

Ակնկալվում է հացահատիկի միջազգային գների աճ, ինչպես նաև հացահատիկի՝ Ռուսաստանից և Ուկրաինայից արտահանման ծավալների զգալի կրճատում: Նշված պայմաններում ՀՀ-ում հավանական է հացահատիկի գների որոշակի աճ:

*Իրական հատված.* 2006 թվականի վերջին երկու եռամսյակներում ակնկալվում է տարվա առաջին կեսին դրսևորված տնտեսության ճյուղային զարգացումների միտումների շարունակում, ինչի արդյունքում տարվա կտրվածքով տնտեսական աճը կգերազանցի կանխատեսված 10% ցուցանիշը: Տնտեսական ակտիվության աճի մասին են վկայում նաև տնտեսավարող սուբյեկտների դրական սպասումները, որոնք արտացոլված են ԿԲ կողմից հաշվարկվող բաղադրյալ ինդեքսներում (գործարար միջավայրի, տնտեսական ակտիվության և սպառողների վստահության ինդեքսներ):

2006 թվականի երկրորդ կեսին ակնկալվում է կապիտալ շինարարության և ծառայությունների ոլորտի աճի տեմպերի պահպանում, ինչը կշարունակվի նաև 2007 թվականի առաջին կիսամյակում՝ սակայն ավելի դանդաղ տեմպերով: Արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում 2006 թվականի երկրորդ կեսին կարձանագրվեն աճի ցածր տեմպեր, իսկ 2007 թվականի առաջին կեսին՝ աճի տեմպերի արագացում:

2006 թվականի երկրորդ կեսին կարձանագրվեն համախառն ներդրումների աճի բարձր տեմպեր՝ ի հաշիվ ինչպես մասնավոր, այնպես էլ պետական ներդրումների ավելացման: Այնուհետև՝ 2007 թվականի առաջին կեսին, որոշակիորեն կնվազեն ներդրումների աճի տեմպերը՝ հիմնականում պայմանավորված 2006 թվականի առաջին կիսամյակում դրանց մեծ ծավալով: Ինչ վերաբերում է համախառն սպառմանը, 2006 թվականի երկրորդ կիսամյակում, ինչպես նաև 2007 թվականի առաջին երկու եռամսյակներում, կշարունակվեն տարվա առաջին կեսին արձանագրված կայուն աճի միտումները:

2006 թվականի հաջորդ եռամսյակներում կանխատեսվում է ապրանքների և ծառայությունների արտահանման աճ: Ընդ որում, ակնկալվում է, որ տարվա առաջին կեսին ադամանդագործության ծավալ-

ների կտրուկ անկումը կվերականգնվի տարվա երկրորդ կիսամյակում: Ինչ վերաբերում է 2007 թվականի առաջին և երկրորդ եռամսյակների կանխատեսումներին, ապա ակնկալվում է արտահանման ծավալների տարեկան կտրվածքով աճ: 2006 թվականի չորրորդ եռամսյակում ներմուծման աճի տեմպերը ճշգրտվել են և ավելացել՝ հիմնականում պայմանավորված փոխարժեքի արժևորման իներցիայով, ինչպես նաև մինչև տարեվերջ ադամանդագործության ճյուղի թողարկման ծավալների ակնկալվող վերականգնմամբ և դրա արդյունքում՝ հումքի ներմուծմամբ: Միաժամանակ կշարունակվի մեքենասարքավորումների ներմուծման աճի բարձր տեմպերի պահպանումը՝ կապված ՀՀ-ում կատարվող ուղղակի ներդրումների ծավալների աճի հետ:

***Աշխատուժի շուկա.*** Աշխատուժի շուկայում կշարունակվի արձանագրվել աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճ՝ պայմանավորված տնտեսության ճյուղերի զարգացմամբ, ինչի արդյունքում կավելանա իրական աշխատավարձը, իսկ գործազրկության մակարդակը աստիճանաբար կկրճատվի: Այնուամենայնիվ, չնայած տնտեսությունում ակնկալվող ներդրումների բարձր մակարդակին, արտադրողականության աճը դեռևս կզիջի իրական աշխատավարձի աճին՝ առաջացնելով որոշակի գնաճային ճնշումներ:

***Համախմբված բյուջե.*** 2006 թ. երրորդ եռամսյակում սպասվում է գնաճի վրա հարկաբյուջետային հատվածի չեզոք ազդեցություն:

Հաշվի առնելով նախորդ տարիների բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման սեզոնայնությունը, ինչպես նաև 2006 թ. չորրորդ եռամսյակում Լինսի դրամաշնորհից նախատեսվող մեծածավալ ծախսումները՝ ակնկալվում է հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնող ազդեցություն համախառն պահանջարկի, հետևաբար նաև գնաճի վրա՝ սկսած 2006 թ. չորրորդ եռամսյակից: Արդյունքում, 2006 թ. հարկաբյուջետային քաղաքականությունն ընդհանուր առմամբ կունենա ընդլայնող ազդեցություն, որը, եկամուտների գերակատարման միտման պահպանմանը զուգահեռ, կմեղմի ծախսերի ընդլայնող ազդեցությունը: 2007 թ. առաջին երկու եռամսյակների գնաճն իր վրա կկրի 2006 թ. հարկաբյուջետային քաղաքականության լագային ազդեցությունը:

***Փող և վարկ.*** Պայմանավորված 2006 թ. առաջին կիսամյակի զարգացումներով՝ որոշակիորեն ճշգրտվել են դրամավարկային հատվածի երկրորդ կիսամյակի և 2007 թ. առաջին եռամսյակի կանխատեսումները: Հաշվի առնելով հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունները, ինչպես նաև դրամայնացման գործընթացի տեմպերի դանդաղումը տարվա առաջին կեսին՝ երրորդ եռամսյակի համար կանխատեսվել են փողի, հատկապես դրամային բաղադրատարրերի ավելի փոքր, իսկ չորրորդ եռամսյակի համար՝ ավելի մեծ աճի տեմպեր: 2007 թ. առաջին կեսին կրկին, ելնելով հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկություններից, մասնավորապես՝ զսպողական բնույթից, անհրաժեշտ կլինի ավելացնել փողի առաջարկը:

Ճշգրտվել է տնտեսության վարկավորման աճի ցուցանիշն ավելի բարձր աճի տեմպերի ուղղությամբ, սակայն մինչև 2007 թ. երկրորդ եռամսյակ աճի տեմպերը կդանդաղեն՝ պայմանավորված 2006 թ. առաջին կեսին արձանագրված մեծածավալ աճով:

***Ֆինանսական շուկա.*** Համաձայն 2006 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում գրանցված տրանսֆերտների բարձր աճի տեմպերի և այդ միտումների պահպանման՝ 2006 թ. երրորդ և չորրորդ եռամսյակներում տրանսֆերտների տարեկան աճի տեմպերը ճշգրտվել են առավել բարձր աճի ուղղությամբ: Համախառն պահանջարկի միջոցով գնաճի վրա տրանսֆերտների աճի ազդեցությունը միանշանակ չէ և կախված է նաև դրամի արժևորման տեմպերից:

***Ամփոփում.*** 2006 թ. հուլիսի 4-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստում քննարկվել է գնաճի վրա տնտեսական հիմնարար գործոնների և շուկայի սպասումների ազդեցությունը: Խորհուրդը կանխատեսում է, որ տարվա ընթացքում կպահպանվեն տնտեսական աճի բարձր տեմպերը: Թեև գնաճի վրա ազդեցության առումով դեռևս մտահոգիչ է համաշխարհային շուկայում էներգակիրների գների անկանխատեսելի վարքագիծը, ԿԲ խորհուրդը միակարծիք է, որ էապես մեղմվել են 2006 թ. գնաճի նպատակային ցուցանիշի գերազանցման՝ տարեսկզբից ձևավորված սպասումները, և իրատեսական է համարում 2006 թ. վերջին մինչև 3% գնաճի ցուցանիշի ապահովումը:


Միաժամանակ, ԿԲ խորհուրդը կարևորում է այն հանգամանքը, որ մինչև տարեվերջ, մասնավորապես տարվա վերջին ամիսներին սպասվող բյուջետային մեծածավալ ծախսերը գնաճի վրա կունենան բարձրացման ուղղությամբ լագային ազդեցություն, ինչը կդրսևորվի 2007 թ. առաջին կեսին: Վերջինս, զուգակցվելով ցորենի միջազգային գների սպասվող աճի հետ, կհանգեցնի գնաճային զգալի ճնշումների:

Մասնավորապես նշվեցին հետևյալ զարգացումները, որոնք պարունակում են գնաճի ցուցանիշի՝ աճի ուղղությամբ ռիսկեր.

1. Իրական հատվածից եկող ռիսկերը հիմնականում պայմանավորված են ոչ բարենպաստ եղանակի հետևանքով բուսաբուծության (հիմնականում ցորենի և կարտոֆիլի) համախառն բերքի նվազմամբ:
2. Արտաքին հատվածից եկող ռիսկերը կապված են ցորենի միջազգային գների աճի հետ:
3. Հարկաբյուջետային հատվածից եկող ռիսկերը կապված են չորրորդ եռամսյակում ծախսերի հիմնական մասի կուտակման հետ, որի լագային ազդեցությունը կդրսևորի 2007 թ. առաջին կեսին:

Կենտրոնական բանկի խորհուրդը հայտարարում է, որ վերոնշյալ գործոնները գնաճի տարեկան առավելագույնը 3% նպատակային ցուցանիշի գերազանցման էական ռիսկեր են պարունակում 2007 թ. առաջին երկու եռամսյակների համար: Այդ պատճառով տնտեսության զարգացման ներկա հեռանկարների պահպանման և նշված ռիսկերի դրսևորման պարագայում ԿԲ խորհուրդը չի բացառում առաջիկա ամիսներին տոկոսադրույքների ճշգրտման հնարավորությունը:

**ՍԳԻ-ի տարեկան տոկոսային փոփոխությունը**




**Տարբեր միջակայքերում գնաճի ցուցանիշի գտնվելու հավանականությունները (2006 թ. IV-րդ եռամսյակի կանխատեսված գնաճը՝ 2.98%)**

| Միջակայք | մինչև 1% | 1%-2% | 2%-3% | 3%-4% | 4%-5% | 5%-ից ավելի |
|---|---|---|---|---|---|---|
| Հավանականություն | <1 | 0.6 | 56.1 | 43.3 | 0.1 | <1 |

# ՀՀ ֆինանսական շուկան 2006 թվականի երկրորդ եռամսյակում

**ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐ**

30.06.2006 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր: Երկրորդ եռամսյակի ընթացքում բանկերի մասնաճյուղերի քանակն ավելացել է 11-ով և կազմել 282:

***ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ***

Հաշվետու եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 3.1%-ով (3.1 մլրդ դրամով) և 30.06.2006 թ. դրությամբ կազմել է 102.3 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է եռամսյակի ընթացքում բանկային համակարգի կողմից 4.2 մլրդ դրամ շահույթի ապահովմամբ:

Եռամսյակի ընթացքում հինգ բանկեր համալրել են ընդհանուր 4.9 մլրդ դրամի չափով կանոնադրական հիմնադրամ: Նշված ժամանակահատվածում վեց բանկեր նախորդ ժամանակաշրջանի շահույթից ընդհանուր 5.4 մլրդ դրամի չափով բաշխել են շահաբաժիններ, ընդ որում՝ 4.3 մլրդ դրամը բաժին է ընկել մեկ բանկի, որի բաժնետերերը ամբողջ 4.3 մլրդ դրամ շահաբաժինը ուղղել են կանոնադրական հիմնադրամի համալրմանը:

Տնտեսությանը տրամադրած վարկերի արագատեմպ աճի արդյունքում բանկային համակարգի ռիսկով կշռված ակտիվներն ավելացել են 7.9%-ով: Զուգահեռաբար, նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալներն աճել են համապատասխանաբար 7.5% և 3.1%-ով: Արդյունքում՝ ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը նվազել է 0.1 տոկոսային կետով, հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 1.6 տոկոսային կետով և կազմել են համապատասխանաբար 33.7% և 30.0%:

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը եռամսյակի ընթացքում աճել է 0.7 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել է 22.0%՝ պայմանավորված եռամսյակի ընթացքում կապիտալի մեծության աճին զուգահեռ ակտիվների մեծության փոքր-ինչ նվազման փաստով:

***ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները նվազել են 1.1%-ով (4.1 մլրդ դրամով) և հաշվետու եռամսյակի վերջին կազմել 362.8 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 12 բանկերում և նվազում՝ 9 բանկերում:

Եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով պարտավորություններն ավելացել են 10.5%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները նվազել են 6.5%-ով, որի արդյունքում ընդհանուր պարտավորությունների կազմում ՀՀ դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 3.7 տոկոսային կետով և կազմել 35.5%:

Բանկային համակարգի պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորվել է իրավաբանական անձանց արտարժութային ցպահանջ պարտավորությունների 16.5 մլրդ դրամ նվազմամբ:


Իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդները (ցպահանջ և ժամկետային միջոցները) նվազել են 8.6%-ով կամ 23.9 մլրդ դրամով, ընդհանուր ցպահանջ պարտավորությունները նվազել են 8.5%-ով (13.9 մլրդ դրամով), իսկ ժամկետային ավանդները՝ 8.6%-ով (10.0 մլրդ դրամով):

Եռամսյակի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդներում (ցպահանջ և ժամկետային միջոցներ) դրամային միջոցներն ավելացել են 3.9%-ով (3.3 մլրդ դրամով), իսկ արտարժութային միջոցները նվազել են 13.8%-ով (27.2 մլրդ դրամով):

30.06.2006 թ. դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 255.5 մլրդ դրամ, որի 33.7%-ը կազմել են դրամային ավանդները (եռամսյակի սկզբին՝ 29.6%): Հատկանշական է, որ իրավաբանական անձանց խնայողություններում դրամային միջոցներն ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն, քան ֆիզիկական անձանց խնայողություններում. ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում ՀՀ դրամով տեղաբաշխած միջոցների կշիռը եռամսյակի վերջի դրությամբ կազմել է ընդամենը 18.1%, որը զիջում է իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում դրամով պարտավորությունների 48.6% տեսակարար կշռին: Նախորդ եռամսյակում վերոնշյալ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 15.8% և 41.3%:

Բանկային համակարգի պարտավորություններում ֆիզիկական և իրավաբանական անձանց ընդհանուր ավանդների (ցպահանջ և ժամկետային) նվազումը զուգորդվել է պարտավորություններում այլ հոդվածների մեծությունների աճով, ինչի արդյունքում ընդհանուր պարտավորություններում ֆիզիկական և իրավաբանական անձանց ընդհանուր ավանդների տեսակարար կշիռը նվազել է 5.7 տոկոսային կետով և 30.06.2006 թ. դրությամբ կազմել 70.4%: Եռամսյակի ընթացքում բանկերի լորո թղթակցային հաշիվներն ավելացել են 45.8%-ով (1.9 մլրդ դրամով), բանկերի (ներառյալ ԿԲ) նկատմամբ այլ պարտավորությունները՝ 32.2%-ով (9.8 մլրդ դրամով), այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ 7.3%-ով (754 մլն դրամով) և այլ պարտավորությունները՝ 26.3%-ով (5.8 մլրդ դրամով):

***Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը***




*1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ*

Եռամսյակի ընթացքում ընդհանուր պարտավորությունների կազմում նկատելի փոփոխվել են իրավաբանական անձանց պարտավորությունների և բանկերի թղթակցային հաշիվների ու այլ պարտավորությունների տեսակարար կշիռները. իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 3.5 տոկոսային կետով, դրանց ժամկետային ավանդների տեսակարար կշիռը՝ 1.7 տոկոսային կետով, իսկ բանկերի թղթակցային հաշիվների ու այլ պարտավորությունների տեսակարար կշիռն ավելացել է 3.4 տոկոսային կետով:

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ակտիվները նվազել են 0.2%-ով (974 մլն դրամով) և 30.06.06 թ. դրությամբ կազմել 465.2 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 12, իսկ նվազում՝ 9 բանկերում:

Եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով ակտիվներն ավելացել են 5.8%-ով (12.5 մլրդ դրամով), իսկ արտարժույթով ակտիվները նվազել են 5.4%-ով (13.5 մլրդ դրամով), որի արդյունքում ընդհանուր ակտիվների կազմում ՀՀ դրամով ակտիվների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 2.8 տոկոսային կետով և կազմել 49.5%:


Բանկային համակարգի ակտիվների կազմում խոշոր նվազում է արձանագրվել բանկերի նկատմամբ այլ պահանջներում՝ 46.8%-ով (9.6 մլրդ դրամով): Նվազել են նաև բանկերի նոստրո թղթակցային հաշիվ-

ները՝ 3.9%-ով (2.0 մլրդ դրամով), ՀՀ ԿԲ նկատմամբ պահանջները (ներառյալ ԿԲ-ում թղթակցային հաշիվները)՝ 5.7%-ով (2.7 մլրդ դրամով), կանխիկ դրամական միջոցները՝ 4.9%-ով (1.4 մլրդ դրամով) և պետական պարտատոմսերում ներդրումները՝ 1.3%-ով (1.0 մլրդ դրամով):

Դիտարկվող ժամանակահատվածում բանկային համակարգի ակտիվների կազմում զգալի աճել են տնտեսությանը տրամադրված վարկերը՝ 7.8%-ով (15.2 մլրդ դրամով), ինչն ամբողջովին պայմանավորվել է ռեզիդենտների վարկավորման աճով:

Տնտեսությանը տրամադրված վարկերի կազմում ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 11.4%-ով (9.3 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 5.0%-ով (5.4 մլրդ դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 9.4%-ով (489 մլն դրամով): 30.06.2006 թ. դրությամբ ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ծավալը կազմել է 90.8 մլրդ դրամ, իրավաբանական անձանց վարկերինը՝ 114.3 մլրդ դրամ և բանկի հետ կապված անձանց վարկերինը՝ 5.7 մլրդ դրամ:

***Բանկային համակարգի ակտիվների ծավալները***




*1. Կանխիկ դրամական միջոցներ*
*2. Թղթակցային հաշիվներ բանկերում*
*3. Պետական արժեթղթեր (ներառյալ ռեպո համաձ-գրեր)*
*4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ*
*5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկ.*
*6. Վարկեր իրավաբանական անձանց*
*7. Վարկեր ֆիզիկական անձանց*
*8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխ.*
*9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ*
*10. Հիմնական միջոցներ*
*11. Այլ արժեթղթեր*
*12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկի)*
*13. Պահուստաֆոնդ*
*14. Այլ ակտիվներ*


Հաշվետու եռամսյակում բանկային համակարգի վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) ընդհանուր աճել են 3.5%-ով (7.8 մլրդ դրամով) և կազմել 232.1 մլրդ դրամ:

Դրամով վարկային ներդրումներն աճել են 17.5%-ով (ի հաշիվ ռեզիդենտների դրամային վարկային ներդրումների աճի) և կազմել 93.3 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկային ներդրումները նվազել են 4.2%-ով (ի հաշիվ ոչ ռեզիդենտների արտարժութային վարկային ներդրումների նվազման) և կազմել 138.8 մլրդ դրամ: Արդյունքում՝ ընդհանուր վարկային ներդրումներում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռն ավելացել է 4.8 տոկոսային կետով և կազմել 40.2%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը նվազել են 50.8%-ով (11.6 մլրդ դրամով), իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 9.6%-ով (19.4 մլրդ դրամով):

Ռեզիդենտների վարկային ներդրումներում դրամով տրամադրված վարկերն ավելացել են 17.4%-ով, իսկ արտարժույթով տրամադրված վարկերը՝ 7.8%-ով: Տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Հաշվետու եռամսյակում վարկերի աճը հիմնականում ապահովել են սպառողական վարկերը՝ ավելացել են 10.9%-ով (7.5 մլրդ դրամով), հիփոթեքային վարկերը՝ ավելացել են 28.4%-ով (3.8 մլրդ դրամով), առևտրի վարկերը՝ ավելացել են 6.9%-ով (3.0 մլրդ դրամով) և արդյունաբերության վարկերը՝ ավելացել են 7.8%-ով (3.1 մլրդ դրամով):

*Բանկային համակարգի վարկային ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի (30.06.06 թ. դրությամբ)*




*1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր*

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի դասակարգված ակտիվների տեսակարար կշիռը չի փոփոխվել՝ կազմել է ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 2.5%-ը: 30.06.2006 թ. դրությամբ բանկային համակարգի վարկային պորտֆելն ունեցել է հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են 97.5%, «հսկվող» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.8%, «ոչ ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.5%, «կասկածելի» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.2%:

Բանկային համակարգի իրացվելիության նորմատիվային ցուցանիշները եռամսյակի ընթացքում նվազել են՝ պայմանավորված այն փաստով, որ բարձր իրացվելի ակտիվների նվազման տեմպը (վարկային ներդրումների աճն ամբողջովին տեղի է ունեցել ի հաշիվ բարձր իրացվելի ակտիվների նվազման) գերազանցել է ցպահանջ պարտավորությունների նվազման տեմպը, իսկ ընդհանուր ակտիվներն ավելացել են: $Ն2^1$ ընդհանուր իրացվելիության գործակիցը եռամսյակի ընթացքում նվազել է 3.9 տոկոսային կետով, իսկ $Ն2^2$ ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ 4.3 տոկոսային կետով և 30.06.2006թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 40.8% և 105.9%: Իրացվելիության ցուցանիշները շարունակում են զգալի բարձր մնալ $Ն2^1$ նորմատիվի 20% և $Ն2^2$ նորմատիվի 80% սահմանաչափերից:

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2006 թ. առաջին կիսամյակի ընթացքում բանկային համակարգն ապահովել է 8.2 մլրդ դրամ զուտ շահույթ (ընդ որում՝ երկրորդ եռամսյակի ընթացքում համակարգի շահույթը կազմել է 4.2 մլրդ դրամ). 2005 թվականի նույն ժամանակաշրջանի զուտ շահույթը գերազանցել է 59.1%-ով: Կիսամյակի ընթացքում շահույթով են աշխատել 20 բանկեր, որոնց ստացած զուտ շահույթը կազմել է 8.2 մլրդ դրամ, իսկ վնասով աշխատած 1 բանկի վնասը կազմել է 18 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում բանկային համակարգը ստացել է 38.9 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 28.9 մլրդ դրամի ծախսեր: Արդյունքում՝ բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 10.0 մլրդ դրամ:

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 52.0%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 22.1% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 25.9%: Տոկոսային եկամուտների 80.8%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտներում ստացված միջնորդավճարները կազմել են 56.7%-ը, իսկ արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտները՝ 29.8%-ը:

Համախառն ծախսերում մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին, որը կազմել է 45.9%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին բաժին են ընկել համապատասխանաբար 20.6% և 33.5% տեսակարար կշիռներ: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 44.1%-ը, բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին, իսկ տոկոսային ծախսերում 55.5% տեսակարար կշիռը բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

30.06.2006 թ. դրությամբ ՀՀ տարածքում վարկային կազմակերպության լիցենզիա են ունեցել 13 ընկերություններ, որոնց մասնաճյուղերի քանակը կազմել է երկու:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը 2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում աճել է 35.0%-ով (2.9 մլրդ դրամով) և կազմել 11.2 մլրդ դրամ, որը բանկային համակարգի ակտիվների ծավալի 2.4%-ն է: Վարկային կազմակերպությունների դրամային ակտիվներն աճել են 87.7%-ով, արտարժութային ակտիվները՝ 7.1%-ով, որի արդյունքում ընդհանուր ակտիվների կազմում դրամային ակտիվների տեսակարար կշիռն ավելացել է 13.5 տոկոսային կետով և կազմել 48.2%:

Վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ավելացել է 37.4%-ով (1.8 մլրդ դրամով)՝ հիմնականում դրամային վարկերի 1.5 մլրդ դրամ աճի հաշվին: Իրավաբանական անձանց վարկերն աճել են 14.5%-ով և կազմել 2.2 մլրդ դրամ, ֆիզիկական անձանց վարկերը՝ 57.1%-ով և կազմել 4.5 մլրդ դրամ: Լիզինգի ու ֆակտորինգի ընդհանուր ծավալը եռամսյակի ընթացքում չի փոփոխվել և կազմել է 1.7 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն աճել է 19.5%-ով (1.4 մլրդ դրամով) և կազմել 8.8 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների տրամադրած վարկային ներդրումներում խոշոր աճ է արձանագրվել առևտրի և գյուղատնտեսության ճյուղերում՝ համապատասխանաբար 229%-ով (860 մլն դրամով) և 123%-ով (522 մլն դրամով): Վարկային ներդրումներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել արդյունաբերության ոլորտի վարկավորմանը՝ 25.3%: Սպառողական վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 19.1%, առևտրի վարկերինը՝ 14.0%, գյուղատնտեսության վարկերինը՝ 11.7%, հիփոթեքային վարկերինը՝ 8.1%, իսկ մնացյալ այլ ճյուղերինը՝ 21.8%:

### *ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը 2006 թվականի երկրորդ եռամսյակի վերջին*


*ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները* արտաքին աշխարհի նկատմամբ 2006 թվականի երկրորդ եռամսյակի վերջին կազմել են 64.7 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 47.9 մլն դոլարի փոխարեն: 2006 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 32.8 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ծեռք բերված վարկերի դիմաց կատարել են 16.3 մլն դոլար հիմնական գումարի մարումներ:*

*2006 հունիսի վերջի դրությամբ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են՝ Ղազախստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 16.2% (նախորդ եռամսյակում՝ 8.2 %), Մեծ Բրիտանիան՝ 13.4 % (նախորդ եռամսյակում՝ 15.8 %), Ռուսաստանը՝ 12.9 % (նախորդ եռամսյակում՝ 14.8 %), ԱՄՆ-ն՝ 12.4 % (նախորդ եռամսյակում՝ 10.9 %):*

*Ներգրաված վարկերը բանկերը հիմնականում տեղաբաշխել են տնտեսության հետևյալ հատվածներում՝ 25.6 մլն դոլարը առևտրի, 17.0 մլն դոլարը՝ արդյունաբերության և 7.6 մլն դոլարը՝ ֆինանսական հատվածներում:*

*2006 թվականի երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի (2006 թ. առաջին եռամսյակի վերջին՝ 7.7 %) համեմատ աճել է և կազմել 7.9 %: Արտաքին վարկերի մոտ 36.2 %-ը լողացող (LIBOR, EURIBOR) տոկոսադրույքով են: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 3.4 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռն աճել է և կազմել ներգրաված վարկերի 35.4 %-ը, նախորդ եռամսյակի վերջի 23.1 %-ի փոխարեն:*

### *1999-2006թթ. ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը ունեցել է հետևյալ դինամիկան*




** Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:*

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ավելացել է 3.3 տոկոսային կետով և կազմել 94.9%:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 22.5%-ով (1.0 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 5.6 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր պարտավորությունների մեծությունը աճել է 50.9%-ով (1.9 մլրդ դրամով)՝ ի հաշիվ իրավաբանական անձանց նկատմամբ ժամկետային պարտավորությունների և այլ պարտավորությունների (մասնավորապես կանոնադրական կապիտալի համալրման՝ ոչ ռեզիդենտների նկատմամբ կրեդիտորական պարտքեր հոդվածի) աճի:

2005 թ. առաջին վեց ամիսների ընթացքում վարկային կազմակերպությունների զուտ շահույթը կազմել է 148 մլն դրամ, ընդ որում՝ 7 վարկային կազմակերպություններ աշխատել են շահույթով (ընդհանուր շահույթը կազմել է 274 մլն դրամ) և 6 վարկային կազմակերպություններ՝ վնասով (ընդհանուր վնասը կազմել է 126 մլն դրամ):

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2006 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում դադարեցվել է 5 ապահովագրական ընկերության՝ «Ավուար» ապահովագրական ՓԲԸ-ի, «Երաշխիք» ապահովագրական ՍՊԸ-ի, «Էրմեդ» ՓԲԸ-ի, «Ինօրիենք» ՍՊԸ-ի, «Գոբա» ապահովագրական ՍՊԸ-ի լիցենզիաների գործողությունը:

2006 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ տարածքում լիցենզավորված ապահովագրական ընկերությունների թիվը կազմել է 18:

2006 թվականի երկրորդ եռամսյակում գրանցվել է ապահովագրական ընկերությունների սեփական կապիտալի կտրուկ նվազում (25,8 մլրդ դրամով) և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է -20,7 մլրդ դրամ: Այսպիսի նվազումը ընթացիկ պարտավորությունների աճի արդյունք է: Երկրորդ եռամսյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների վնասը կազմել է 26.2 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր պարտավորություններն ավելացել են 26.6 մլրդ դրամով և երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել 29.2 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը հիմնականում ապահովել է «Վնասների պահուստի» 25.98 մլրդ դրամ աճը: Այս ցուցանիշի վրա մեծապես ազդել է տեղական ապահովագրական ընկերություններից մեկի կողմից 26.07 մլրդ դրամի «Վնասների պահուստի» ձևավորումը: Ապահովագրական պահուստների մյուս հոդվածների առանձնակի փոփոխություններ չեն արձանագրվել. «Չվաստակած ապահովագրավճարների պահուստն» աճել է 26%-ով և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել 1.3 մլրդ դրամ (նախորդ ժամանակաշրջանում՝ 1.0 մլրդ դրամ), «Կյանքի ապահովագրության պահուստն» աճել է 2%-ով և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 6.7 մլն դրամ, իսկ «Կանխարգելիչ միջոցառումների պահուստ» և «Այլ պահուստներ» հաշիվները միասին նվազել են 111.8 մլն դրամով և կազմել 8.6 մլն դրամ (նախորդ ժամանակաշրջանում՝ 120.5 մլն դրամ): Ապահովագրական ընկերությունների ընդհանուր պարտավորություններում ապահովագրական պահուստների տեսակարար կշիռը 2006 թվականի երկրորդ եռամսյակում աճել է 40 տոկոսային կետով (հիմնականում ի հաշիվ «Վնասների պահուստ» հաշվի կտրուկ աճի)՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին կազմելով 94.3%: Նախորդ ժամանակաշրջանի համեմատ 64.3%-ով նվազել են կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունները, մինչդեռ երկարաժամկետ ֆինանսական պարտավորություններն ավելացել են 869%-ով (14.0 մլն դրամով)՝ կազմելով 15.7 մլն դրամ (նախորդ ժամանակաշրջանում՝ 1.6 մլն դրամ): Այնուամենայնիվ, ընդհանուր պարտավորություններում 99.9%-ը բաժին է ընկնում կարճաժամկետ պարտավորություններին:

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվներն ավելացել են 11.0%-ով (845.0 մլն դրամով) և հաշվետու ժամանակաշրջանի վերջին կազմել 8.5 մլրդ դրամ:

Երկարաժամկետ ֆինանսական ակտիվներն ավելացել են 435.7 մլն դրամով, իսկ «Դեբիտորական պարտքեր բյուջեի հետ և սոց. ապ.» հոդվածի ցուցանիշները՝ 33.5 մլն դրամով:

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվներում մեծ տեսակարար կշիռ ունեն հիմնական միջոցներ (16.6% տեսակարար կշիռ), կարճաժամկետ դեբիտորական պարտքեր (22.3% տեսակարար կշիռ), կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ (29.9% տեսակարար կշիռ) և դրամական միջոցներ (19.2% տեսակարար կշիռ) հոդվածները:

*[30] 31.03.2006 թ. դրությամբ հաշվարկներում ներառված են 21 ապահովագրական ընկերության ցուցանիշներ, 30.06.2006 թ. դրությամբ հաշվարկներում ներառված են 18 ապահովագրական ընկերության ցուցանիշներ:*

30.06.2006 թ. դրությամբ ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերի քանակը կազմել է 28.3 հազար (նախորդ եռամսյակի վերջի դրությամբ 24.7 հազար էր): Ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերով ապահովագրական գումարների մեծությունը երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 4.35 տրլն դրամ, որից 4.18 տրլն դրամը կամ 96%-ը վերաապահովագրողների պատասխանատվության մեծությունն է:

Հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ ապահովագրավճարների մեծությունը կազմել է 3.3 մլրդ դրամ, իսկ ապահովագրական հատուցումների մեծությունը՝ 892 մլն դրամ:

## ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՆՁԻՆՔ

30.06.2006 թ. դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն են իրականացրել 18 ընկերություններ: Բոլոր 18 ընկերություններն ունեն բրոքերային գործունեության լիցենզիա, ընդ որում՝ դրանցից 5-ը ունեն նաև հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա, իսկ 1-ը՝ նաև պահառուի լիցենզիա:

ՀՀ արժեթղթերի շուկայում գործարքներն իրականացվել են 3 տիպի գործիքներով՝ պետական պարտատոմսեր, բաժնետոմսեր և այլ արժեթղթեր: Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց համար եռամսյակի ընթացքում շուկայի հիմնական գործիք են հանդիսացել պետական պարտատոմսերը, որոնք ընդհանուր գործարքների ծավալում կազմել են շուրջ 98.2%: Բաժնետոմսերով գործարքները կազմել են շուրջ 1.3%, իսկ այլ արժեթղթերով (հիմնականում կորպորատիվ պարտատոմսերով) գործարքները՝ 0.5%:

Արժեթղթերի շուկայի բրոքերների/դիլերների գործունեության շրջանակներում իրականացված գործարքների շրջանառության ծավալները կազմել են 54.0 մլրդ դրամ, որը 29.7%-ով գերազանցել է առաջին եռամսյակի շրջանառության ծավալը: Պետական պարտատոմսերով (ներառյալ ռեպո գործարքները) գործարքների շրջանառության ծավալը հաշվետու եռամսյակում կազմել է 53.0 մլրդ դրամ, այլ արժեթղթերով (կորպորատիվ պարտատոմսեր) գործարքներինը՝ 0.3 մլրդ դրամ, բաժնետոմսերով գործարքներինը՝ 0.7 մլրդ դրամ, ընդ որում՝ բաժնետոմսերի շրջանառության ծավալի 98%-ը կատարվել է Հայաստանի ֆոնդային բորսայում:

Պետական պարտատոմսերի շրջանառության ծավալների 47%-ը բաժին է ընկել պետական միջին ժամկետայնությամբ պարտատոմսերին, 52%-ը՝ պետական երկարաժամկետ պարտատոմսերին, 1%-ը՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերին:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Օրենսդրական փոփոխություններ

***2006 թվականի երկրորդ եռամսյակում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված օրենքների նախագծերի հետևյալ փաթեթները.***

1. ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-76, ««Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-77, ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-78 և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-79 ՀՀ օրենքներ:

2. ««Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-69, ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-703 ՀՀ օրենքներ:

3. ««Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-73, ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-74, ««Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-75 ՀՀ օրենքներ:

4. «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-101 ՀՀ օրենք:

***Առաջին կետում նշված օրենքները*** մշակվել են ի կատարումն ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1922-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ կառավարության 2005 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի» 232-րդ կետի և նպատակ ունեն ոչ փաստաթղթային ձևով թողարկվող

պետական արժեթղթերի պահառության և շրջանառության բնագավառում առաջացած խնդիրների հետ կապված՝ ՀՀ գործող օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես՝

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը.

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝ «Գրավի իրավունքը ծագում է գրավի պայմանագիրը կնքելու պահից, իսկ այն դեպքերում, երբ գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այն գրանցելու պահից»: Ոչ փաստաթղթային ձևով թողարկվող արժեթղթերով կնքվող գործարքների արդյունքում իրավունքները ներկայումս գործնականում կարող են ծագել միայն պահառուի (ենթապահառուի) մոտ համապատասխան գրառում կատարելու պահից: Ընդ որում՝ այդպիսի գրառումը երբեք չի կարելի համարել պետական գրանցում:

Հետևաբար, ոչ փաստաթղթային արժեթղթերի գրավի իրավունքի ծագման պահի հետ կապված՝ առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հետ:

- Ներկայումս պետական արժեթղթերը թողարկվում են ոչ փաստաթղթային ձևով, և դրանց գրավի հետ կապված գործառնություններն իրականացվում են երկմակարդակ պահառուական համակարգի միջոցով: Դրա արդյունքում պետական արժեթղթերի դեպքում զուտ տեխնիկապես հնարավոր չէ դրանց հաջորդող գրավը, ինչը հակասության մեջ է մտնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 236-րդ հոդվածի հետ:
- Անհրաժեշտ է հստակեցնել նաև այն հարցը, որ գրավադրված արժեթղթերի մարման դեպքում գրավադրված են համարվում դրանց մարման արդյունքում առաջացած դրամական միջոցները:

2. ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդրի լուծմանը.

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության համաձայն՝ «Ամրագրելու միջոցով հավաստված իրավունքների և իրավատերերի պաշտոնական ամրագրման, գրառումների փաստաթղթային հաստատման ու *ոչ փաստաթղթային արժեթղթերով կատարվող գործառնությունների կարգը որոշվում է օրենքով կամ օրենքով սահմանված կարգով»*: Սակայն ներկայումս գոյություն չունի այնպիսի օրենք, որը համահունչ լինի վերը նշված դրույթին և նախատեսի, թե ինչպես է որոշվելու ոչ փաստաթղթային արժեթղթերով կատարվող գործառնությունների կարգը:

Ընդ որում՝ անհրաժեշտ է նշել, որ գործառնությունների կարգը ընդամենը սահմանելու է, թե արժեթղթերի դեպո հաշիվներից միջոցների շարժը նախաձեռնելու համար կողմերը ինչպես պետք է պահառուական համակարգին ներկայացնեն համապատասխան դեպո հանձնարարականները, ինչպես նաև դրանց ձևը և ներկայացման կարգը:

3. ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդրի լուծմանը.

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին» կարգի 11-րդ գլուխը սահմանում է, որ պարտատոմսերի բռնագանձման գործառնությունները կատարվում են օրենքով սահմանված կարգով: Սակայն ներկայումս գոյություն չունի նման օրենք:

Քանի որ պարտատոմսերի բռնագանձման կարգով սահմանվելու են այնպիսի պահանջներ, որոնցով պետք է առաջնորդվի ոչ միայն Կենտրոնական բանկը, առևտրային բանկը, այլ նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, ապա դրա սահմանումը միայն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից վիճարկելի է, քանի որ ԿԲ-ն չի կարող սահմանել այլ պետական մարմինների կողմից կատարման ենթակա նորմեր:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկվող նախագիծը սահմանում է, որ պարտապանին պատկանող ոչ փաստաթղթային ձևով թողարկված Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի վրա արգելանք դնելու, դրանք առգրավելու և հարկադիր իրացնելու համար հարկադիր կատարողի կողմից պահառուին (ենթապահառուին) ներկայացվող դեպո-հանձնարարականների ձևին ներկայացվող պահանջները, դրանց ներկայացման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ:

4. ««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդրի լուծմանը.

- ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնու-

թյունների իրականացման մասին» կարգը, գրավադրված պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների հետ կապված, սահմանում է, որ.

Հինգ բանկային օրվա ընթացքում գրավատուի ենթապահառուն պարտավոր է բանկ ներկայացնել գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի մարումից առաջացած դրամական միջոցները երրորդ անձ հանդիսացող առևտրային բանկում հաշվառելու վերաբերյալ համաձայնագիր: Ընդ որում, եթե հինգ բանկային օրվա ընթացքում գրավատուի ենթապահառուի կողմից չի ներկայացվում նշված համաձայնագիրը, ապա Կենտրոնական բանկն իրավասու է գրավադրված գումարները փոխանցել *հոտարի դեպոզիտ*:

Այս պահանջը և դրա իրականացման կարգը առավել նպատակահարմար է սահմանել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով, ինչն էլ նախատեսված է ներկայացված նախագծով:

***Երկրորդ կետում նշված օրենքներից*** ««Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը պայմանավորված է տվյալ օրենքի և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի հակասությունները վերացնելու անհրաժեշտությամբ:

Օրենքի անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ.

1. Մինչև այժմ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվել է ԿԲ նախագահի անհատական ակտով, սակայն այն, «Իրավական ակտերի մասին» օրենքի համաձայն, պետք է սահմանվի նորմատիվ իրավական ակտով: Իսկ նրա՝ օրենքով սահմանված ժամկետներից ավելի շուտ ուժի մեջ մտնելու հնարավորության սահմանումը կապված է այն հանգամանքի հետ, որ սահմանված դրույքները կիրառվում են տարբեր անձանց և մարմինների կողմից հաշվարկներ կատարելու նպատակով, հենց դրանց սահմանման պահից: Հետևաբար անտրամաբանական կլինի այս պարագայում խոսել նորմատիվ ակտերի գրանցման, հրապարակման և ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետների և ընթացակարգերի պահպանման անհրաժեշտության մասին:

2. Պարտադիր պահուստավորման նորմատիվը ոչ միայն զուտ բանկերի համար սահմանվող տնտեսական նորմատիվ է, այլ նաև ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության գործիք: Հետևաբար հաճախ առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է լինում, որ ԿԲ-ն անմիջապես միջամտի շուկայի գործունեությանը՝ սահմանելով պարտադիր պահուստավորման նոր չափ, որը պետք է ուժի մեջ մտնի սեղմ ժամկետներում:

3. Ինչ վերաբերում է հատուկ տնտեսական նորմատիվներին, ապա դրանց՝ սեղմ ժամկետներում ուժի մեջ մտնելու հնարավորության սահմանումը պայմանավորված է բանկային համակարգում հնարավոր ճգնաժամային իրավիճակներից դուրս գալուն ուղղված միջոցների կիրառման հրատապությամբ:

4. Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախագծով սահմանված թե՛ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, թե՛ պարտադիր պահուստավորման նորմատիվը և թե՛ հատուկ տնտեսական նորմատիվները սահմանող Կենտրոնական բանկի իրավական ակտերը այնպիսի բնույթ չունեն, որ որևէ հակասություն առաջանա դրանց և ՀՀ սահմանադրության, ՀՀ օրենքների կամ այլ իրավական ակտերի միջև, քանի որ դրանք սահմանում են ընդամենը թվային մեծություններ, որոնց համար որևէ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանափակումներ նախատեսված չեն: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ մինչև այժմ ՀՀ արդարադատության նախարարության իրավական փորձաքննությունը Կենտրոնական բանկի՝ վերը նշված ակտերում ՀՀ գործող օրենսդրության հետ որևէ հակասություն չի բացահայտել (ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով մասնավորապես վերը նշված նկատառումները): Իսկ տեսականորեն կարելի է ենթադրել միայն հենց «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հետ ոչ սկզբունքային, այլ օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանման առնչությամբ հնարավոր հակասություններ, ինչը, կարծում ենք, այնքան էլ օրախնդիր չէ՝ հատկապես հաշվի առնելով խնդրո առարկա ակտերի հնարավոր ծավալը:

««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների և պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների չափը գերազանցող մասի դիմաց սահմանելով տոկոսադրույք և վճարելով տոկոսներ, հանդես է գալիս որպես բանկ, և այս դեպքում, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի, տվյալ որոշումները պետք է ընդունվեն ներքին իրավական ակտերի տեսքով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի կողմից:

***Երրորդ կետում նշված օրենքների*** ընդունումը պայմանավորված է «Ճանապարհային վճարի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» և «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքները «Արժութային կարգավորման և արժութային վերահսկո-

ղության մասին» ՀՀ օրենքին, մասնավորապես՝ դրա 6-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման, գույքի օգտագործման փողային գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

***Չորրորդ կետում նշված օրենքի*** ընդունումը առաջին հերթին պայմանավորված է կանխիկ դրամը փոխադրելիս մի շարք սուբյեկտների միջև ծագող հարաբերությունների կարգավորմամբ: «Ինկասացիայի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ այդ օրենքը տարածվում է միայն բանկերի և վարկային կազմակերպությունների մասնակցությամբ հարաբերությունների վրա: Օրենքում նշված ձևակերպումը չէր կարգավորում այլ կազմակերպությունների (օրինակ՝ փոխանակման կետ – ինկասացիոն կազմակերպություն) մասնակցությամբ հարաբերությունները, եթե բանկը կամ վարկային կազմակերպությունը չէր մասնակցում այդ հարաբերություններին, ինչը գործնականում լուրջ խնդիրներ էր առաջացնում: Միաժամանակ, անհրաժեշտություն էր առաջացել լրացուցիչ պահանջներ սահմանել ինկասացիոն կազմակերպությունների համար, ինչը ավելի ապահով կդարձնի նրանց գործունեությունը: Բացի այդ, ինկասացիոն կազմակերպությունների ավտոտրանսպորտային միջոցներին ներկայացվող՝ «դեղին գույնի առկայծող փարոսիկների տեսքով լուսային ազդանշանների» առկայության պահանջը անհրաժեշտ էր փոխարինել «լուսնասպիտակ առկայծող փարոսիկների տեսքով լուսային ազդանշանների» առկայության պահանջով, քանի որ «լուսնասպիտակ փարոսիկները» ավելի ցայտուն են և ունեն նախազգուշացնող նշանակություն, իսկ դեղին առկայծող փարոսիկների նշանակությունը սահմանափակվում է որոշակի աշխատանքներ կատարելու մասին իրազեկմամբ:

***Միաժամանակ,*** 2006 թվականի երկրորդ եռամսյակում ՀՀ կառավարության կողմից հավանություն է տրվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հուլիսի 7-ին ընդունվել է ««Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Այդ օրենքով ուժը կորցրած է ճանաչվել «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասը, ըստ որի՝ իրենց կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների 49 տոկոսից ավելի մասնաբաժին ունեցող ապահովագրական կազմակերպությունները չէին կարող Հայաստանի Հանրապետությունում իրականացնել կյանքի ապահովագրություն, պարտադիր ապահովագրություն, պարտադիր պետական ապահովագրություն, ինչպես նաև պետական և տեղական կազմակերպությունների գույքային շահերի ապահովագրություն:

Փաստորեն այս դրույթը սահմանափակում էր օտարերկրյա կապիտալի մուտքը ապահովագրության նշված բնագավառները, ինչը չի բխում հանրապետության որդեգրած՝ ազատ շուկայական տնտեսություն ունենալու ռազմավարությունից:

Միևնույն ժամանակ, այս դրույթը համահունչ չէր տնտեսական համագործակցության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից կնքված մի շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես՝ Առևտրի Համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու համաձայնագրի պայմաններին:

Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված փոփոխությունը պայմանավորված է օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը հստակեցնելու անհրաժեշտությամբ:

### Ենթաօրենսդրական փոփոխություններ

2006 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել և փոփոխվել են բանկային գործունեությունը կանոնակարգող հետևյալ իրավական ակտերը.

- «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններին համահունչ փոփոխություններ են իրականացվել «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում: Մասնավորապես՝

- ընդլայնվել է բանկերում նշանակալից մասնակցություն ձեռք բերելիս ներկայացվող փաստաթղթերի/տեղեկությունների ցանկը, ինչպես նաև սահմանվել են փաստաթղթեր/ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ է ներկայացնել բանկում այլ մասնակցություն ձեռք բերելիս,
- բանկի խորհրդի անդամների թեկնածուների գրանցման կապակցությամբ որպես որակավորման պահանջ սահմանվել է, որ բանկի խորհրդի անդամի թեկնածուն պետք է ծանոթանա և ստորագրի «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթուղթը: Վերջինս հավաստում է, որ թեկնածուն գիտակցում է իր՝ որպես խորհրդի անդամի իրավասություններն ու պարտականությունները,

- բանկերում կորպորատիվ կառավարման առողջ պրակտիկայի ձևավորման խրախուսման նպատակով սահմանվել են բանկերի մասնաճյուղերի գրանցման ընթացակարգի մեղմացուցիչ պայմաններ (ղեկավարների որակավորման, տարածքին ներկայացվող պահանջների առումով) այն բանկերի համար, որոնց ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ) բարձր է Կենտրոնական բանկի սահմանած չափից:

• Օրենքից բխող փոփոխություններ են կատարվել նաև «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու ուղեցույցում»: Այն համալրվել է չափանիշներով, որոնց առկայության դեպքում այլ մասնակցության ձեռքբերումը բանկում կմերժվի Կենտրոնական բանկի կողմից:

• Բանկի անուղղակի նշանակալից մասնակիցներին բացահայտելու նպատակով ԿԲ խորհրդի կողմից հաստատվել են «Իրավաբանական անձանց գործունեության ուղղությունները, ոլորտները կամ կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու, կամ որոշումների կայացման, կամ կիրառման վրա էապես ազդելու հնարավորություն ունեցող անձանց նշանակալից մասնակից հանդիսանալու չափանիշները»:

• Օրենքի փոփոխություններին համապատասխան՝ ԿԲ խորհրդի կողմից հաստատվել է նաև «Իրավաբանական անձի հիմնական գործունեության հետ կապված կամ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող, կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում էական ազդեցություն ունեցող աշխատակիցներին իրավաբանական անձի հետ փոխկապակցված համարելու ուղեցույցը»:

• ՀՀ տարածքում գործող բանկերում կորպորատիվ կառավարման ստանդարտների արդյունավետ ներդրման և բանկերի թափանցիկության ապահովման նպատակով ԿԲ խորհրդի կողմից հաստատվել է «Բանկերի կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգը»: Վերջինս սահմանում է բանկերի կողմից տնային էջում (ինտերնետային կայքում), ինչպես նաև լրատվական այլ միջոցներով իրենց վերաբերյալ պարտադիր հրապարակման (տրամադրման) ենթակա տեղեկությունները, այդ թվում՝ բանկի կառավարման կառուցվածքի, մասնակիցների, ղեկավարների, մատուցվող ծառայությունների, այլնի վերաբերյալ:

• Փոփոխություններ են կատարվել «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում: Այդ թվում՝ հանվել են ձև թիվ 12 «Բանկի դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ» և ձև թիվ 23 «Բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների, ոչ նյութական ակտիվների, ինչպես նաև այլ անձանց կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների գումարների վերաբերյալ» հաշվետվությունները:

• Ամբողջությամբ վերանայվել է «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկը»՝ հաշվի առնելով դրա օգտագործման ժամանակ գործնականում առաջացած խնդիրները: Ձեռնարկում ներառվել են նաև նոր՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում», «Կորպորատիվ կառավարման որակի գնահատում» և «Ռիսկերի կառավարման համակարգի գնահատում» բաժինները:

2006 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել և փոփոխվել են ապահովագրական գործունեությունը և արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեությունը կանոնակարգող հետևյալ իրավական ակտերը.

• «Վերաապահովագրության պահանջները սահմանող կարգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, որը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ գրանցման: Վերոնշյալ փոփոխությամբ ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերություններին հնարավորություն է տրվում նվազեցնել ձևավորված ապահովագրական պահուստները՝ ըստ վերոհիշյալ կարգի հուսալի ճանաչված վերաապահովագրողների մասնակցության չափով:

• «Ապահովագրական պայմանագրերով ստանձնած ապահովագրական ռիսկերի փոխանցման կարգը», որը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից և ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով: Վերոնշյալ կարգի հիմնական նպատակն է ապահովագրության պայմանագրերով ստանձնած ապահովագրական ռիսկերը վերաապահովագրողին փոխանցելու գործընթացի կանոնակարգումը:

• «Ապահովագրական գործունեություն իրականացնողների հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկը»՝ հաստատված ՀՀ ԿԲ նախագահի որոշմամբ: Ձեռնարկի նպատակը ապահովագրական գործունեություն իրականացնողներից ստացված հաշվետվությունների և տեղեկատվության

հիման վրա նրանց գործունեության շարունակական վերլուծությունն է՝ ֆինանսական վիճակի գնահատման, ռիսկերի բացահայտման և գնահատման ու ապահովագրական գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանության ստուգման նպատակով:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ հաստատվել է «Ապահովագրական գործունեություն իրականացնողների վերահսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող միջոցառումների ձեռնարկը»:

2006 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում մշակվել և ներկայումս քննարկումների փուլում են.

- «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը և դրա կիրառման հրահանգը», որի նպատակն է ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման համապատասխանեցումը հաշվապահական հաշվառման ստանդարտներին և միջազգային լավագույն փորձին:
- «Ապահովագրական գործունեություն իրականացնողի լիցենզավորման, մասնաճյուղերի գրանցման և ապահովագրական գործունեություն իրականացնողի կանոնադրական կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս) կամ փայամասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը», որով կանոնակարգվում են ապահովագրական գործունեություն իրականացնողների լիցենզավորման, մասնաճյուղերի գրանցման, ինչպես նաև նրանց կանոնադրական կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս) կամ փայամասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու գործընթացները:
- «Ապահովագրողի գործունեության երեք տարվա գործարար ծրագրի ներկայացման կարգը», որի նպատակն է ապահովել ապահովագրողի պլանավորված գործունեությունը՝ նրան մշտապես զգոն պահելով արտաքին միջավայրում և իր գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ:
- «Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ակտուարի և գործակալի մասնագիտական որակավորման պահանջները և որակավորման ստուգման կարգը», որի նպատակն է ապահովագրական շուկան համալրել ապահովագրական գործունեությանը տիրապետող, օրենսդրությանը քաջատեղյակ ապահովագրական գործունեություն իրականացնող հաստատության ղեկավար մասնագետներով, ակտուարներով և գործակալներով:
- «Ապահովագրական ընկերության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, դրանց ձևավորման և հաշվարկման կարգը», ինչպես նաև «Ապահովագրական պահուստների տեսակները և ձևավորման կարգը», որի նպատակն է ապահովագրական շուկայում հաստատել ֆինանսապես կայուն ապահովագրական ընկերություններ:

• 2006 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտում: Մասնավորապես՝ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատվել են «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման կարգը», համաձայն որի՝ Կենտրոնական դեպոզիտարիային իրավունք է վերապահվել սահմանել էլեկտրոնային կապի միջոցներով տեղեկությունների փոխանցման կարգեր, որոնք հիմնականում ուղղված են լինելու ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև բարձր վարկանիշ ստացած ձեռնարկությունների պարտատոմսերով ռեպո գործարքներ կնքելիս արժեթղթերի փոխանցումների համար անհրաժեշտ տեղեկատվության՝ ՍԻ-ԲԻ-Է3-ՆԵԹ ցանցի միջոցով ներկայացման հետ: Բացի այդ, անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման կանոններում կատարվել են մի շարք տեխնիկական շտկումներ՝ կապված ռեեստրի վարման պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների հետ:

Մշակման փուլում են «Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման կարգը»: Մասնավորապես՝ վերոնշված կարգով բացառվել են մի շարք տեղեկությունների կրկնակի ներկայացման պահանջները, ինչպես նաև ներդրվել է արժեթղթերի և հաճախորդների ռեզիդենտության սկզբունքի հիման վրա տեղեկությունների ներկայացման սկզբունքը:

Միևնույն ժամանակ, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի կողմից հաստատվել են «Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց, ինքնակարգավորվող կազմակերպությունների և թողարկողների ստուգումների և հեռակա վերահսկողության ընթացակարգերի ուղեցույցները»:

## Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2006թ. երկրորդ եռամսյակի ընթացքում

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի 2006 թ. դրամավարկային ծրագրի՝ ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման խնդիրների շրջանակներում 2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարվել են վճարային համակարգերի կարգավորման և հսկման, անկանխիկ վճարումների զարգացման աշխատանքներ: Հաշվի առնելով հայաստանյան ֆինանսական համակարգում փոքրածավալ վճարումների անկանխիկ շրջանառության զարգացման ՀՀ ԿԲ քաղաքականությունը՝ մշակվել է «Անկանխիկ վճարումների զարգացման հեռանկարների վերաբերյալ» տեղեկանքը: Նախատեսվում են նաև «Անկանխիկ շրջանառության զարգացման հայեցակարգի» մշակման աշխատանքներ:

Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացվող բորսայական գործառնությունների վերջնահաշվարկի ընթացքում գործառնական ռիսկերը նվազեցնելու և այդ ընթացակարգը ավտոմատացնելու նպատակով մշակվել և հաստատվել են համապատասխան վճարային հաղորդագրություններ /ֆորմատներ/, որոնք ապահովում են կատարված գործառնությունների վերջնահաշվարկի իրականացման նպատակով ձևավորված զուտ դիրքերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը ՀՀ կենտրոնական բանկ:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից նոր տեսակի արժեթղթերի (ՀՀ պետական անժամկետ պարտատոմսերի, ինչպես նաև ՀՀ պետական խնայողական (արժեկտրոնային) պարտատոմսերի) թողարկման և դրանց շրջանառության կարգավորման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում» կատարվել են համապատասխան փոփոխություններ՝ ապահովելով դրանց թողարկման և շրջանառության պահանջները, մշակվել են համապատասխան արարողակարգեր:

Հաշվետու ժամանակահատվածում, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի օրենսդրական ակտերի, տարբեր միջազգային վճարային համակարգերին անդամակցելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է ՀՀ տարածքում գործող մի շարք առևտրային բանկերին համապատասխան թույլտվությունների տրամադրման գործընթացը:

Բացի այդ, կատարվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի ներքին համակարգերի զարգացման աշխատանքներ: Այդ թվում՝ մշակվել և ներդրվել է «Կեղծ դրամանիշերի տեղեկատվական համակարգը», որի միջոցով իրականացվում է կեղծ թղթադրամների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և հաշվառումը:

Ներդրվել է նաև «Կանխիկ դրամի ստացման հայտերի մշակման համակարգը», որը ապահովում է առևտրային բանկերի կողմից կանխիկ միջոցների ստացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկ էլեկտրոնային հայտերի ներկայացումը, հաշվառումը և մշակումը, որի արդյունքում ձևավորված տեղեկանքների հիման վրա կազմակերպվում է կանխիկ միջոցների տրամադրման գործընթացը:


Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 1499 մլրդ ՀՀ դրամ (քանակը՝ 599817), այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 1023 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 268683: Անկանխիկ վճարումների ծավալը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1.1 անգամ (97 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.2 անգամ (96201-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1.04 անգամ (43 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.19 անգամ, որը կազմել է 43231:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 15.9 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 4198: 2006 թ. առաջին եռամսյակի համեմատ դրամական փոխանցումների միջին օրական ծավալն ավելացել է 682 մլն ՀՀ դրամով (քանակը՝ 675-ով):

2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 29.93%-ը և քանակի 44.21%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս

նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 45.85%-ով (96 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 15.11%-ով (15598 -ով):

*ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը*




2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում լրացավ «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի ստեղծման և գործունեության հինգ տարին: Հինգ տարիների գործունեության արդյունքում համակարգի անդամ 17 առևտրային բանկերի կողմից թողարկվել և շրջանառության մեջ է դրվել 117415 քարտ, որից 75689 –ը «ԱրՔա» քարտեր են: Քարտերի սպասարկումը իրականացվում է ԱԳՄ-ների, POS-տերմինալների, Իմպրինտերների միջոցով, ինչպես նաև ինտերնետ միջավայրում: Համակարգը սերտիֆիկացվել է VISA և MasterCard միջազգային քարտային համակարգի կողմից, որի միջոցով սպասարկվում են նաև այդ համակարգերի քարտերը:

2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 30944 մլն ՀՀ դրամի 719878 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 3086 մլն ՀՀ դրամ: Անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 50 մլն ՀՀ դրամ: Քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատությամբ աճել է 1.5 անգամ (1095 մլն ՀՀ դրամով), իսկ գործառնությունների քանակը՝ 1.2 անգամ (8930 գործառնությունով): Շրջանառության մեջ գտնվող ընդհանուր քարտերի քանակը եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 176104 քարտ. առաջին եռամսյակի վերջի համեմատությամբ ավելացել է 1.12 անգամ (19430 քարտով):

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2006 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 189, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 21 առևտրային բանկեր՝ 117 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք. Մոսկվա):


ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 81.13%-ը և քանակի 96.25%-ը: Նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալը նվազել է 2.9%-ով (25 մլրդ ՀՀ դրամով) իսկ քանակը աճել է 19.8%-ով (42888-ով): Առևտրային բանկերի կողմից կատարված էլեկտրոնային վճարումները վերջիններիս վճարումների ծավալային կառուցվածքում կազմել են մոտ 79.29%, իսկ քանակային կառուցվածքում՝ մոտ 99.30%:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատությամբ ավելացել է 670-ով և կազմել 4041, իսկ ծավալը նվազել է 400 մլն ՀՀ դրամով և կազմել 12968 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է մոտ

0.7 մլն ՀՀ դրամով և կազմել 3.2 մլն ՀՀ դրամ. նվազումը պայմանավորվել է առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների նվազմամբ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.13%-ը և ծավալի 0.47%-ը (278 փոխանցում՝ 4017 մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.1%-ը և ծավալի 0.22%-ը (228 փոխանցում՝ 1924 մլն ՀՀ դրամ ծավալով):

*Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները*




## ՀԱՄԱԽՍՈՒՆ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ գանձապետարանը: Առևտրային բանկերի կողմից կատարված թղթային եղանակով վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 6.3%-ը (նախորդ եռամսյակի համեմատ ավելացել են 1.17 անգամ) և քանակի 0.4%-ը (նախորդ եռամսյակի համեմատ պահպանվել է գրեթե նույն մակարդակը):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 139 փոխանցում՝ 1358 մլն ՀՀ դրամ ծավալով (2006 թ. առաջին եռամսյակի համեմատ, փոխանցումների միջին օրական ծավալն ավելացել է 261 մլն ՀՀ դրամով), իսկ մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է մոտ 1.9 մլն ՀՀ դրամով և կազմել է 9.7 մլն ՀՀ դրամ: 2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 5510 մլն ՀՀ դրամ ծավալով 19 փոխանցում:

*ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով*

| Ժամանակահատվածը | Համախառն | | | | Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | էլեկտրոնային | | Թղթային | | | | ԿԲ միջոցով | |
| | Գումար (մլն դրամ) | Քանակ | Գումար (մլն դրամ) | Քանակ | Գումար (մլն դրամ) | Քանակ | Գումար (մլն դրամ) | Քանակ |
| **2005** | | | | | | | | |
| I եռ.. | 429654 | 158131 | 150806 | 5188 | 20993 | 471 | 601453 | 163790 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 71.44 | 96.54 | 25.07 | 3.17 | 3.49 | 0.29 | 100 | 100 |
| II եռ. | 515359 | 207423 | 123228 | 6062 | 74161 | 901 | 712748 | 214386 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 72.31 | 96.75 | 17.29 | 2.83 | 10.40 | 0.42 | 100 | 100 |
| III եռ. | 524899 | 219123 | 153970 | 8315 | 60841 | 909 | 739710 | 228347 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 70.96 | 95.96 | 20.81 | 3.64 | 8.22 | 0.40 | 100 | 100 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| IV եռ. | 716214 | 242062 | 154294 | 8951 | 72601 | 942 | 943109 | 251955 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 75.94 | 96.07 | 16.36 | 3.55 | 7.70 | 0.37 | 100 | 100 |
| Ընդամենը | 2186126 | 826739 | 582298 | 28516 | 228596 | 3223 | 2997020 | 858478 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 72.94 | 96.30 | 19.43 | 3.32 | 7.63 | 0.38 | 100 | 100 |
| **2006** | | | | | | | | |
| I եռ. | 855565 | 215711 | 70193 | 8984 | 53645 | 757 | 979403 | 225452 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 87.35 | 95.68 | 7.17 | 3.98 | 5.48 | 0.34 | 100 | 100 |
| II եռ. | 829977 | 258599 | 86905 | 8913 | 106179 | 1171 | 1023061 | 268683 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 81.13 | 96.25 | 8.49 | 3.31 | 10.38 | 0.44 | 100 | 100 |

## ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2006 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 7 գործակալ և 14 դիլեր բանկեր, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Եռամսյակի ընթացքում համակարգի կողմից պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 433 հանձնարարական՝ 14017 մլն ՀՀ դրամ ծավալով, ինչը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 2232 մլն ՀՀ դրամով: Այդ թվում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 7998 մլն ՀՀ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 6018 մլն ՀՀ դրամի փոխանցում: Գանձապետական պահառու համակարգի կողմից պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 482 մլն ՀՀ դրամի վճարում, այդ թվում՝ 336 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի տեղաբաշխման և 146 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի մարման դիմաց:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 97 հանձնարարական՝ 20529 մլն ՀՀ դրամ ծավալով (2006 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 11191 մլն ՀՀ դրամով): Նշված արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ժամանակ առևտրային բանկերի կողմից ձեռք բերված պարտատոմսերի դիմաց կատարվել է 7529 մլն ՀՀ դրամի փոխանցում, իսկ Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման դիմաց՝ 13000 մլն ՀՀ դրամի փոխանցում:

Ակտիվացել են պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված գործառնությունները, որոնք կազմել են 118254 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով (այդ թվում՝ առք ու վաճառք՝ 79010 մլն ՀՀ դրամ ծավալով, ազատ առաքում՝ 34415 մլն ՀՀ դրամ ծավալով, գրավադրում՝ 4859 մլն ՀՀ դրամ ծավալով): DVP- սկզբունքով կատարված առք ու վաճառքի 641 գործառնությունների դիմաց վճարվել է 71634 մլն ՀՀ դրամ:

## ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՇՈՒԿԱ

2006 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին պլաստիկ քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 19 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 17 առևտրային բանկեր անդամակցել են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 16 նոր ավտոմատ գանձման մեքենաներ, և եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 142: Այդ թվում՝ «ԱրՔա» պլաստիկ քարտերի սպասարկումը իրականացվել է 106 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրվել են նաև 80 POS տերմինալներ և 3 իմպրինտերներ, որոնց ընդհանուր քանակը համապատասխանաբար կազմել է 1165 POS տերմինալ և 81 իմպրինտեր:

Եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը 2006 թ. առաջին եռամսյակի վերջի համեմատ ավելացել է 1.16 անգամ (10714 քարտով) և կազմել 75689: Իսկ միջազգային քարտային համակարգերի քարտերն ավելացել են 1.09 անգամ (8716 քարտով), այդ թվում՝ VISA միջազգային քար-

տային համակարգի քարտերն ավելացել են 1.1 անգամ (7929 քարտով) և կազմել 78191, իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը՝ 1.03 անգամ (227 քարտով) և կազմել 8470:


*ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող քարտերի տեսակները*

| Բանկի անվանումը | Արքա | MASTER CARD | VISA | Այլ քարտեր |
|---|---|---|---|---|
| Անելիք բանկ | + | + | | |
| Արդշինինվեստբանկ | + | + | | |
| Հայներարտբանկ | + | + | | |
| Հայէկոնոմբանկ | + | + | | |
| Զարգացման հայկական բանկ | + | + | | |
| Կոնվերս բանկ | + | | + | + |
| Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան | + | + | + | + |
| Հայգյուղփոխբանկ | + | | + | |
| Արցախ բանկ | + | | | |
| «ԻԹԲ» Միջազգային առևտրային բանկ | + | | | |
| Յունիբանկ | + | | + | |
| Ինեկո բանկ | + | + | + | |
| Մելլաթ բանկ | + | | | |
| Պրոմեթեյ բանկ | + | | | |
| Կասկադ բանկ | + | | | |
| «ԲՏԱ» ինվեստ բանկ | + | | | |
| «Արարատ» բանկ | + | | | |
| Առէկսիմբանկ | | | + | |
| «ՎՏԲ- Հայաստան» բանկ | | | + | |

Քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1.29 անգամ (6945 մլն ՀՀ դրամ ծավալով), իսկ քանակը՝ 1.24 անգամ (140522):

Շրջանառության մեջ գտնվող «Արքա» քարտերով եռամսյակի ընթացքում իրականացվել է 331729 գործառնություն՝ 9828 մլն ՀՀ դրամ ծավալով: «Արքա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է մոտ 1.31 անգամ (2734 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.23 անգամ (63030-ով):

*«Արքա» քարտերի զարգացման դինամիկան*




VISA միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 13844 մլն ՀՀ դրամ (237460 գործառնություն), իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացվել է 2661 մլն ՀՀ դրամ ծավալով 37934 գործառնություն: VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1.29 անգամ (3159 մլն ՀՀ դրամ ծավալով), իսկ MasterCard համակարգի քարտերով կատարված գործառնությունների ծավալը՝ 1.25 անգամ (533 մլն ՀՀ դրամ ծավալով):

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 112755 գործառնություն՝ 4611 մլն ՀՀ դրամ ծավալով, որը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 879 մլն ՀՀ դրամով:

Եռամսյակի ընթացքում շրջանառության մեջ գտնվող մեկ «ԱրՔա» քարտով շարունակվել է ամսական իրականացվել միջինը մոտ 2 գործառնություն: Մեկ գործառնության միջին ծավալը առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 2 հազար ՀՀ դրամով և կազմել է 29 հազար ՀՀ դրամ:

2006 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ «Արքա» քարտեր սպասարկող մեկ ավտոմատ գանձման մեքենայի կողմից սպասարկման ենթակա «ԱրՔա» քարտերի քանակը կազմել է միջինը 714 քարտ:

***Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով «ԱրՔա» քարտերով կատարված գործարքները (2006 թ. երկրորդ եռամսյակում)***

| | *Գումար (մլն դրամ)* | *Քանակ* |
|---|---|---|
| Ավտոմատ գանձման սարքերի միջոցով | 6960.0 | 267878 |
| այդ թվում՝ անկանխիկ | 153.2 | 8683 |
| POS – տերմինալների միջոցով | 2866.8 | 63689 |
| այդ թվում՝ անկանխիկ | 615.6 | 11376 |
| Իմպրինտերների միջոցով | 0.7 | 162 |
| այդ թվում՝ անկանխիկ | 0.7 | 162 |
| Ընդամենը | 9827.5 | 331729 |
| այդ թվում՝ անկանխիկ | 769.5 | 20221 |

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը հաճախորդների դրամական փոխանցումները արագ իրականացնելու նպատակով անդամակցում են՝ WESTERN UNION, MONEYGRAM, ANELIK, UNISTREAM, CONTACT և այլ համակարգերի: 2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում այս համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 73573 մլն ՀՀ դրամ (քանակը՝ 305519), որը 8.9 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1.56 անգամ (26443 մլն ՀՀ դրամով): Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 241 հազ. ՀՀ դրամ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 21 հազ. ՀՀ դրամով:

2006 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 1501 մլն ՀՀ դրամի վճարում, իսկ արտասահման կատարվել է 179 մլն ՀՀ դրամի փոխանցում: Վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 138 հազ. ՀՀ դրամ:

SWIFT համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները երկրորդ եռամսյակի ընթացքում կազմել են՝ ծավալը՝ 450 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 64829 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 6.9 մլն ՀՀ դրամ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 2.46 մլն ՀՀ դրամով: SWIFT -ի միջոցով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները կազմել են 451 մլրդ ՀՀ դրամ. մեկ վճարման միջինը կազմել է 1.5 մլն ՀՀ դրամ:

# Մակրոտնտեսական ցուցանիշները 2006 թ. հունվար – հունիսին

*(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)*

## I. Իրական հատված

| *Ամվանում* | *Հունվար - ապրիլ* | *Հունվար - մայիս* | *Հունվար- հունիս* | *2006թ.հունվար-հունիսի իրական աճի ինդեքսը՝ 2005թ. հունվար-հունիսի նկատմամբ (%)* |
|---|---|---|---|---|
| Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)* | 395110.5 | 567134.2 | 809549.3 | 111.9 |
| ՀՆԱ դեֆլյատոր *(%, աճողական)* | - | - | | 101.8 |
| Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ)* [1] | 363.9 | 519.2 | 738.0 | 112.9 |
| Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)* | 187996.7 | 242235.4 | 300688.5 | 99.0 |
| Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)* | 2114.5 | 2651.5 | 3117.3 | 93.0 |
| Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)* | 59012.9 | 84184.6 | 118950.6 | 107.2 |
| Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)* | 202347.5 | 261389.9 | 320727.5 | 112.1 |
| Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)* | 55869.2 | 104524.4 | 165624.9 | 131.8 |
| Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)* | 432101.8 | 554723.7 | 685188.1 | 116.4[1] |
| Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)* | 443922.0 | 564203.3 | 686073.5 | 118.1[1] |
| Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)* | 58822.0 | 59832.0 | 60554 | 121.4[1,2] |
| Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)* | 1175.4 | 1182.3 | 1186.9 | - |
| Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)* | 89.7 | 89.9 | 90.0 | - |
| Գործազրկության մակարդակը (%) | 7.6 | 7.6 | 7.6 | - |

## II. Արտաքին հատված

| *Ամվանում* | *Հունվար - ապրիլ* *(մլն ԱՄՆ դոլար)* | *Հունվար – մայիս* *(մլն ԱՄՆ դոլար)* | *Հունվար – հունիս* *(մլն ԱՄՆ դոլար)* | *2006թ. հունվար – հունիսը 2005թ. հունվար – հունիսի նկատմամբ (%)* |
|---|---|---|---|---|
| Արտահանում *(FOB)* | 253.7 | 339.1 | 437.7 | 99.4 |
| Ներմուծում *(CIF)* | 584.9 | 768.3 | 951.2 | 120.0 |
| Առևտրային հաշվեկշռի պակասուրդ | 331.2 | 429.3 | 513.5 | 145.5 |

## III. Գների ինդեքսներ

| *Ժամանակաշրջան* | *Սպառողական գների ինդեքս* | *Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս* | *Գների ինդեքս կապիտալ շինարարությունում* | *Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս* |
|---|---|---|---|---|
| *Նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | | |
| Հունվար | 102.5 | 97.8 | 100.3 | 99.1 |
| Փետրվար | 100.2 | 99.2 | 100.1 | 101.5 |
| Մարտ | 100.1 | 97.2 | 102.2 | 100.2 |
| Ապրիլ | 100.3 | 103.3 | 101.6 | 103.3 |
| Մայիս | 102.4 | 107.1 | 100.1 | 98.0 |
| Հունիս | 98.8 | 97.7 | 100.0 | 83.2 |
| 2006 թ. հունվար-հունիսը 2005 թ. հունվար-հունիսի նկատմամբ | 99.8 | 98.8 | 107.9 | 111.3 |

## IV. Գնաճ

| *Ժամանակաշրջան* | 2004 | 2005 | 2006 | 2006 |
|---|---|---|---|---|
| | *Նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | *Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)* |
| Հունվար | 2.5 | 5.4 | 2.5 | 2.5 |
| Փետրվար | -0.6 | -0.7 | 0.2 | 2.7 |
| Մարտ | 0.3 | -0.9 | 0.1 | 2.8 |
| Ապրիլ | 1.2 | -0.9 | 0.3 | 3.1 |
| Մայիս | 1.1 | 0.1 | 2.4 | 5.6 |
| Հունիս | -0.1 | -1.4 | -1.2 | 4.3 |
| Հուլիս | -2.5 | -4.5 | | |
| Օգոստոս | -2.4 | -1.4 | | |
| Սեպտեմբեր | -0.7 | 0.9 | | |
| Հոկտեմբեր | 0.1 | 0.1 | | |
| Նոյեմբեր | 0.8 | 1.1 | | |
| Դեկտեմբեր | 2.3 | 2.3 | | |
| Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)* | 2.0 | -0.2 | | |
| Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)* | 7.0 | 0.6 | | |

## V. Բնականոն գնաճի[1] փոփոխությունները

| Ցուցանիշ | 2004 | 2005 | 2006 |
|---|---|---|---|
| | *Նախորդ ամսվա նկատմամբ, %* | | |
| Հունվար | 0.65 | 0.71 | 0.39 |
| Փետրվար | 0.05 | -0.37 | 0.00 |
| Մարտ | 0.03 | -0.26 | 0.06 |
| Ապրիլ | 0.05 | -0.26 | 0.12 |
| Մայիս | 0.04 | -0.08 | 0.07 |
| Հունիս | -0.13 | -0.10 | -0.01 |
| Հուլիս | -0.50 | -0.42 | |
| Օգոստոս | -0.31 | -0.28 | |
| Սեպտեմբեր | -0.30 | 0.29 | |
| Հոկտեմբեր | -0.16 | 0.03 | |
| Նոյեմբեր | -0.05 | 0.17 | |
| Դեկտեմբեր | 0.30 | 0.29 | |
| | *Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %* | | |
| Հունվար | 4.45 | 0.72 | 0.79 |
| Փետրվար | 5.60 | 1.07 | 1.18 |
| Մարտ | 6.37 | 0.71 | 1.38 |
| Ապրիլ | 6.39 | 0.13 | 1.61 |
| Մայիս | 6.23 | -0.74 | 2.49 |
| Հունիս | 5.41 | -0.57 | 2.26 |
| Հուլիս | 6.71 | -0.78 | |
| Օգոստոս | 6.90 | -0.52 | |
| Սեպտեմբեր | 6.02 | 0.26 | |
| Հոկտեմբեր | 5.67 | 0.32 | |
| Նոյեմբեր | 4.39 | 0.47 | |
| Դեկտեմբեր | 0.55 | 0.52 | |

## VI. Բնականոն գնաճին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները

| Անվանում | *Նպաստումը բնականոն գնաճին, տոկոսային կետ* |
|---|---|
| | *Նախորդ ամսվա նկատմամբ, %* |
| **Բնականոն գնաճ,** *այդ թվում՝* | **1.923** |
| Տավարի միս | 0.4138 |
| Դիզելային վառելիք | 0.2899 |
| Ախտորոշման կենտրոնների ծառայություններ | 0.1707 |
| Հավի բուդ | 0.0928 |
| Բնական գազ | 0.0870 |
| Լվացքի փոշի ավտոմատ մեքենաների համար[1] | 0.0692 |
| Այլ յուղեր (հալած յուղ) | 0.0541 |
| Թռչնի միս | 0.0440 |
| Պանիր տնական (կովի կաթից) | 0.0423 |
| Թարմ ձուկ «Սիգ» | 0.0280 |

*[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:*
*[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

*(Սկիզբը 77 դրամ)*

| Ժամանակաշրջան | Պահանջներ Կառավարության նկատմամբ | | | Կառավարության հաշիվներ և ավանդներ | | | | | Զուտ միջազգային պահուստներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պետական կարճաժամկետ պարտատոմսեր | պետական միջին ժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր | ընդամենը | կենտրոնական Կառավարության հաշիվներ և ավանդներ դրամով | կենտրոնական Կառավարության հաշիվներ և ավանդներ արտարժույթով | ՇԻԳ-երի միջոցներ դրամով | ՇԻԳ-երի միջոցներ արտարժույթով | ընդամենը | |
| ***2005*** | | | | | | | | | |
| Դեկտեմբեր [2] | 0 | 5677 | 5677 | 21966 | 865 | 27 | 112 | 22970 | **-17294** |
| ***2006*** | | | | | | | | | |
| Հունվար | 0 | 5650 | 5650 | 35261 | 879 | 22 | 113 | 36275 | **-30625** |
| Փետրվար | 0 | 5584 | 5584 | 32763 | 867 | 11 | 113 | 33754 | **-28170** |
| Մարտ [2] | 0 | 5398 | 5398 | 27157 | 575 | 11 | 113 | 27857 | **-22459** |
| Ապրիլ | 0 | 5147 | 5147 | 37592 | 3184 | 11 | 112 | 40899 | **-35752** |
| Մայիս | 0 | 5000 | 5000 | 43876 | 572 | 11 | 107 | 44566 | **-39567** |
| Հունիս [2] | 0 | 4875 | 4875 | 39235 | 550 | 11 | 106 | 39901 | **-35026** |

*[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:*
*[2] Ներառված են եզրափակիչ շրջաառության արդյունքները:*

## ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

*(մլն ՀՀ դրամ)*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Դ - 05[5] | Հ - 06 | Փ - 06 | Մ - 06[5] | Ա - 06 | Մ - 06 | Հ - 06[5] |
|---|---|---|---|---|---|---|---|
| *(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)* | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** [2,3] | ***214731*** | ***214812*** | ***212725*** | ***213485*** | ***216311*** | ***238232*** | ***251646*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-14153*** | ***-27422*** | ***-25664*** | ***-24394*** | ***-32199*** | ***-53364*** | ***-52531*** |
| Կառավարություն | -17294 | -30625 | -28170 | -22459 | -35752 | -39567 | -35026 |
| Բանկեր | 4227 | 7584 | 8533 | 10620 | 11939 | 13949 | 12471 |
| այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր | 0 | 0 | 0 | 0 | 1631 | 3720 | 1674 |
| ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ավանդներ (-) | -7701 | -3601 | -1250 | -1300 | 0 | 0 | 0 |
| Հակադարձ ռեպո (-) | 0 | -591 | -2062 | 0 | -513 | 0 | 0 |
| ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-) | 0 | 0 | 0 | 0 | -947 | -1617 | -1121 |
| ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-) | -21483 | -23534 | -24573 | -29078 | -27327 | -26332 | -23908 |
| Զուտ այլ ակտիվներ | 20396 | 19153 | 18547 | 16523 | 18941 | -1415 | -6067 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ (միջինացված)*** [4] | ***195487*** | ***187768*** | ***189881*** | ***188876*** | ***183434*** | ***184974*** | ***196363*** |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ*** | ***200578*** | ***187391*** | ***187061*** | ***189091*** | ***184112*** | ***184869*** | ***199115*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ | 155275 | 142257 | 143056 | 141266 | 143454 | 145795 | 154389 |
| Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով) | 22258 | 22418 | 22694 | 22425 | 19230 | 17173 | 21774 |
| Պարտադիր պահուստ. (արտարժույթով) | 22278 | 21652 | 20659 | 24645 | 20630 | 21150 | 22274 |
| Այլ հաշիվներ | 768 | 1064 | 652 | 755 | 798 | 751 | 678 |
| Այլ հաշիվներ (ՀՀ դրամով) | 655 | 1052 | 613 | 643 | 613 | 611 | 631 |
| Այլ հաշիվներ (արտարժույթով) | 113 | 13 | 39 | 112 | 184 | 140 | 47 |
| *(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***82*** | ***-2087*** | ***760*** | ***2826*** | ***21921*** | ***13413*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***-13269*** | ***1758*** | ***1270*** | ***-7806*** | ***-21164*** | ***833*** |
| Կառավարություն | - | -13331 | 2454 | 5712 | -13294 | -3814 | 4540 |
| Բանկեր | - | 3357 | 948 | 2087 | 1319 | 2011 | -1479 |
| այդ թվում՝ ավանդներ (-) | - | -4100 | -2351 | 50 | -1300 | 0 | 0 |
| ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր | | 2052 | 1038 | 4505 | -1751 | -995 | -2423 |
| Զուտ այլ ակտիվներ | - | -1243 | -607 | -2024 | 2418 | -20355 | -4652 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ (միջինացված)*** | ***-*** | ***-7720*** | ***2113*** | ***-1005*** | ***-5442*** | ***1540*** | ***11388*** |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ*** | ***-*** | ***-13187*** | ***-330*** | ***2030*** | ***-4979*** | ***757*** | ***14246*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ | - | -13018 | 799 | -1791 | 2189 | 2341 | 8594 |
| Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով) | - | 160 | 276 | -269 | -3195 | -2058 | 4602 |
| Պարտադիր պահուստ. (արտարժույթով) | | -626 | -993 | 3987 | -4016 | 521 | 1123 |
| Այլ հաշիվներ | - | 297 | -412 | 103 | 43 | -47 | -73 |
| Այլ հաշիվներ (ՀՀ դրամով) | - | 397 | -438 | 30 | -29 | -2 | 20 |
| Այլ հաշիվներ (արտարժույթով) | - | -100 | 26 | 73 | 72 | -45 | -93 |
| *(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***0.04*** | ***-1.0*** | ***0.4*** | ***1.3*** | ***10.1*** | ***5.6*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***-93.8*** | ***6.4*** | ***4.9*** | ***-32.0*** | ***-65.7*** | ***1.6*** |
| Կառավարություն | - | -77.1 | 8.0 | 20.3 | -59.2 | -10.7 | 11.5 |
| Բանկեր | - | 79.4 | 12.5 | 24.5 | 12.4 | 16.8 | -10.6 |
| ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր | | 9.6 | 4.4 | 18.3 | -6.0 | -3.6 | -9.2 |
| Զուտ այլ ակտիվներ | - | -6.1 | -3.2 | -10.9 | 14.6 | -107.5 | -328.8 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ (միջինացված)*** | ***-*** | ***-3.9*** | ***1.1*** | ***-0.5*** | ***-2.9*** | ***0.8*** | ***6.2*** |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ*** | ***-*** | ***-6.6*** | ***-0.2*** | ***1.1*** | ***-2.6*** | ***0.4*** | ***7.7*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ | - | 8.4 | 0.6 | -1.3 | 1.5 | 1.6 | 5.9 |
| Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով) | - | 0.7 | 1.2 | -1.2 | -14.2 | -10.7 | 26.8 |
| Պարտադիր պահուստ. (արտարժույթով) | | -2.8 | -4.6 | 19.3 | -16.3 | 2.5 | 5.3 |
| Այլ հաշիվներ | - | 38.7 | -38.7 | 15.8 | 5.7 | -5.9 | -9.7 |

*[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:*

*[2] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ն ընդգրկում է փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները:*

*[3] ԶԱՄ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 450.19 դրամ, 1 ՀՓԻ = 1.4293 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.1825 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.7181 ԱՄՆ դոլար:*

*[4] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:*

*[5] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:*

## ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

*(մլն ՀՀ դրամ)*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Դ - 05 | Հ – 06 | Փ – 06 | Մ – 06 | Ա - 06 | Մ – 06 | Հ – 06 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)** | **18584** | **23303** | **18359** | **11422** | **10142** | **12737** | **7792** |
| Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով | 89535 | 99275 | 93370 | 94447 | 74764 | 78043 | 74528 |
| Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով | -64663 | -69449 | -68882 | -77425 | -59513 | -59991 | -61357 |
| Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով | -6289 | -6524 | -6129 | -5601 | -5109 | -5315 | -5379 |
| **ԶՆԱ** | **201896** | **199523** | **202659** | **216026** | **214294** | **209763** | **218019** |
| Կառավարություն | 22262 | 19237 | 19237 | 21160 | 22112 | 21732 | 21594 |
| Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ | 71555 | 71059 | 70956 | 75682 | 63408 | 56555 | 64145 |
| Պահանջներ ԿԲ նկատմամբ | 83454 | 82833 | 82797 | 87598 | 77747 | 73662 | 78784 |
| Պարտավորություններ ԿԲ նկատմամբ | -11899 | -11775 | -11840 | -11916 | -14339 | -17107 | -14639 |
| Տնտեսություն | 188500 | 188328 | 192105 | 201581 | 211493 | 215743 | 219036 |
| Ձեռնարկություններ | 98715 | 97609 | 99139 | 103291 | 108610 | 110014 | 109512 |
| Դրամով | 41041 | 41228 | 42045 | 43075 | 46168 | 47259 | 48389 |
| Արտարժույթով | 57616 | 56330 | 57042 | 60164 | 62407 | 62721 | 61088 |
| Արժեթղթեր | 59 | 52 | 52 | 52 | 35 | 35 | 35 |
| Տնային տնտեսություններ | 83098 | 82797 | 85233 | 91205 | 94655 | 96636 | 100969 |
| Դրամով | 29408 | 28 877 | 28683 | 30024 | 30916 | 33106 | 35807 |
| Արտարժույթով | 53690 | 53921 | 56549 | 61182 | 63739 | 63530 | 65162 |
| Շահույթ չհետապնդող կազմակերպություններ | 141 | 136 | 122 | 233 | 162 | 188 | 236 |
| Դրամով | 86 | 81 | 76 | 180 | 110 | 135 | 183 |
| Արտարժույթով | 55 | 54 | 47 | 53 | 51 | 53 | 54 |
| Այլ ֆինանսական կազմակերպություններ | 6546 | 7786 | 7611 | 6852 | 8067 | 8905 | 8319 |
| Դրամով | 4945 | 6089 | 6003 | 5574 | 6655 | 7645 | 6954 |
| Արտարժույթով | 1602 | 1697 | 1608 | 1278 | 1413 | 1260 | 1366 |
| Ջուտ այլ ակտիվներ | -80420 | -79100 | -79640 | -82398 | -82719 | -84267 | -86756 |
| Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով | 3481 | 3506 | 3469 | 3647 | 3458 | 3465 | 3549 |
| Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.) | 2136 | 4019 | 3415 | 2335 | 1836 | 1964 | 2481 |
| Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.) | -386 | -2227 | -1919 | -1084 | -262 | -204 | -382 |
| Ներդրումներ փայաբաժիններում | 479 | 497 | 497 | 513 | 589 | 590 | 600 |
| Միջբանկային պահանջներ | 5139 | 4968 | 5350 | 5136 | 5517 | 8146 | 8988 |
| Այլ ակտիվներ | 38693 | 39823 | 42942 | 42780 | 43196 | 47643 | 50161 |
| Միջբանկային պարտավորություններ | -4568 | -4519 | -4812 | -4646 | -5403 | -8062 | -8845 |
| Թողարկված պարտատոմսեր | -519 | -522 | -526 | -530 | -529 | -4795 | -4704 |
| Կապիտալ հաշիվներ | -95087 | -95835 | -97573 | -99506 | -99887 | -100470 | -102653 |
| Այլ պարտավորություններ | -29786 | -28811 | -30482 | -31043 | -31235 | -32544 | -35952 |
| **ԱՎԱՆԴՆԵՐ** | **220480** | **222826** | **221018** | **227447** | **224437** | **222499** | **225811** |
| Դրամով ավանդներ | 79836 | 75380 | 77156 | 80000 | 79504 | 80002 | 84564 |
| Ցպահանջ ավանդներ | 57095 | 52884 | 53789 | 55857 | 55595 | 56719 | 61139 |
| Ժամկետային ավանդներ | 22741 | 22496 | 23368 | 24142 | 23909 | 23284 | 23425 |
| Ավանդներ արտարժույթով | 140644 | 147446 | 143862 | 147448 | 144933 | 142497 | 141247 |
| Ցպահանջ ավանդներ | 58244 | 63990 | 59472 | 66935 | 67687 | 67143 | 68527 |
| Ժամկետային ավանդներ | 82401 | 83456 | 84389 | 80512 | 77246 | 75354 | 72720 |

## ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

*(մլն ՀՀ դրամ)*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Դ - 05[6] | Հ – 06 | Փ – 06 | Մ – 06[6] | Ա - 06 | Մ – 06 | Հ – 06[6] |
|---|---|---|---|---|---|---|---|
| *(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)* | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** [2] | ***233314*** | ***238115*** | ***231084*** | ***224907*** | ***226454*** | ***250969*** | ***259438*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***132245*** | ***116533*** | ***121625*** | ***133563*** | ***131359*** | ***107637*** | ***111321*** |
| Կառավարություն | 4968 | -11388 | -8933 | -1298 | -13641 | -17834 | -13432 |
| Տնտեսություն | 188522 | 188349 | 192126 | 201601 | 211513 | 215761 | 219053 |
| Ձեռնարկ. և կազմակերպ. | 98715 | 97609 | 99139 | 103291 | 108610 | 110014 | 109512 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 851 | 908 | 843 | 958 | 985 | 1009 | 912 |
| Տնային տնտեսություններ | 83119 | 82819 | 85253 | 91225 | 94674 | 96655 | 100986 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 1260 | 1388 | 1362 | 1430 | 1355 | 1434 | 1462 |
| Շահույթ չհետապնդող կազմակերպություններ | 141 | 136 | 122 | 233 | 162 | 188 | 236 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Այլ ֆինանսական կազմակերպություններ | 6546 | 7786 | 7611 | 6852 | 8067 | 8905 | 8319 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 20 | 17 | 16 | 19 | 21 | 22 | 17 |
| Զուտ այլ ակտիվներ | -61245 | -60429 | -61568 | -66740 | -66513 | -90290 | -94300 |
| ***ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ*** [3] | ***224802*** | ***207189*** | ***208809*** | ***210910*** | ***212696*** | ***215970*** | ***229466*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** [4] | ***365559*** | ***354648*** | ***352709*** | ***358470*** | ***357813*** | ***358606*** | ***370759*** |
| Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ | 144311 | 130758 | 131039 | 130268 | 132579 | 135356 | 144270 |
| Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5] | 57750 | 53935 | 54402 | 56500 | 56208 | 57330 | 61770 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 20 | 27 | 38 | 28 | 34 | 47 | 26 |
| Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով | 22741 | 22496 | 23368 | 24142 | 23909 | 23284 | 23425 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 297 | 303 | 304 | 326 | 370 | 363 | 312 |
| Արտարժույթով ավանդներ | 140757 | 147459 | 143900 | 147560 | 145117 | 142636 | 141294 |
| Ցպահանջ [5] | 58356 | 64002 | 59511 | 67047 | 67871 | 67283 | 68574 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 7 | 13 | 17 | 9 | 18 | 25 | 9 |
| Ժամկետային | 82401 | 83456 | 84389 | 80512 | 77246 | 75354 | 72720 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 621 | 638 | 635 | 679 | 720 | 712 | 681 |
| *(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***4801*** | ***-7031*** | ***-6177*** | ***1547*** | ***24515*** | ***8469*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***-15711*** | ***5092*** | ***11938*** | ***-2204*** | ***-23722*** | ***3684*** |
| Կառավարություն | - | -16356 | 2455 | 7634 | -12342 | -4194 | 4402 |
| Տնտեսություն | - | -172 | 3777 | 9475 | 9912 | 4249 | 3292 |
| Ձեռնարկ. և կազմակերպ. | - | -1106 | 1530 | 4152 | 5319 | 1404 | -502 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | 56 | -64 | 115 | 26 | 25 | -98 |
| Տնային տնտեսություններ | - | -301 | 2435 | 5972 | 3449 | 1981 | 4331 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | 128 | -26 | 68 | -75 | 79 | 28 |
| Շահույթ չհետապնդող կազմակերպություններ | - | -5 | -13 | 110 | -71 | 26 | 48 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ֆինանսական կազմակերպություններ | - | 1240 | -175 | -759 | 1215 | 837 | -585 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | -3 | -1 | 3 | 2 | 1 | -5 |
| Զուտ այլ ակտիվներ | - | 817 | -1140 | -5171 | 227 | -23777 | -4010 |
| ***ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ*** | ***-*** | ***-17613*** | ***1619*** | ***2101*** | ***1786*** | ***3274*** | ***13496*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** | ***-*** | ***-10911*** | ***-1939*** | ***5761*** | ***-657*** | ***793*** | ***12153*** |
| Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ | - | -13553 | 281 | -771 | 2311 | 2777 | 8914 |
| Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով | - | -3815 | 466 | 2098 | -292 | 1121 | 4441 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | 7 | 11 | -10 | 6 | 12 | -21 |
| Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով | - | -245 | 872 | 774 | -233 | -625 | 141 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | 6 | 1 | 22 | 44 | -7 | -52 |
| Արտարժույթով ավանդներ | - | 6702 | -3558 | 3659 | -2443 | -2481 | -1343 |
| Ցպահանջ | - | 5646 | -4492 | 7536 | 824 | -588 | 1291 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | 6 | 4 | -8 | 9 | 7 | -16 |
| Ժամկետային | - | 1056 | 933 | -3877 | -3267 | -1892 | -2633 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | 17 | -4 | 45 | 41 | -8 | -32 |

*(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)*

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***2.1*** | ***-3.0*** | ***-2.7*** | ***0.7*** | ***10.8*** | ***3.4*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***-11.9*** | ***4.4*** | ***9.8*** | ***-1.6*** | ***-18.1*** | ***3.4*** |
| Կառավարություն | - | -329.2 | 21.6 | 85.5 | -950.6 | -30.7 | 24.7 |
| Տնտեսություն | - | -0.1 | 2.0 | 4.9 | 4.9 | 2.0 | 1.5 |
| Ձեռնարկ. և կազմակերպ. | - | -1.1 | 1.6 | 4.2 | 5.1 | 1.3 | -0.5 |
| Տնային տնտեսություններ | - | -0.4 | 2.9 | 7.0 | 3.8 | 2.1 | 4.5 |
| Շահույթ չհետապնդող կազմակերպություններ | - | -3.7 | -9.8 | 90.2 | -30.6 | 16.4 | 25.7 |
| Այլ ֆինանսական կազմակերպություններ | - | 18.9 | -2.2 | -10.0 | 17.7 | 10.4 | -6.6 |
| Զուտ այլ ակտիվներ | - | 1.3 | -1.9 | -8.4 | 0.3 | -35.7 | -4.4 |
| ***ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ*** | - | ***-7.8*** | ***0.8*** | ***1.0*** | ***0.8*** | ***1.5*** | ***6.2*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** | - | ***-3.0*** | ***-0.5*** | ***1.6*** | ***-0.2*** | ***0.2*** | ***3.4*** |
| Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ | - | -9.4 | 0.2 | -0.6 | 1.8 | 2.1 | 6.6 |
| Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով | - | -6.6 | 0.9 | 3.9 | -0.5 | 2.0 | 7.7 |
| Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով | - | -1.1 | 3.9 | 3.3 | -1.0 | -2.6 | 0.6 |
| Արտարժույթով ավանդներ | - | 4.8 | -2.4 | 2.5 | -1.7 | -1.7 | -0.9 |
| Ցպահանջ | - | 9.7 | -7.0 | 12.7 | 1.2 | -0.9 | 1.9 |
| Ժամկետային | - | 1.3 | 1.1 | -4.6 | -4.1 | -2.4 | -3.5 |

*[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:*
*[2] ԶԱԱ-ն ընդգրկում է միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով (1 ԱՄՆ դոլար = 450.19 դրամ, 1 ՀՓԻ = 1.4293 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.1825 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.7181 ԱՄՆ դոլար), առևտրային բանկերի ԶԱԱ-ն՝ փաստացի փոխարժեքներով:*
*[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):*
*[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):*
*[5] Ընդգրկում են հաշիվները և ցպահանջ ավանդները:*
*[6] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

*(մլն ԱՄՆ դոլար)*

| Անվանումը | 2005 | 2006 | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ [3] | Հ | Փ | Մ [3] | Ա | Մ | Հ [3] |
| **Համախառն միջազգային պահուստներ** *(առանց սեփականաշն. միջոցների)* | 674.2 | 680.4 | 668.0 | 674.7 | 680.0 | 744.8 | 761.1 |
| **Համախառն միջազգային պահուստներ** | 759.7 | 766.1 | 753.6 | 760.3 | 765.6 | 787.4 | 803.7 |
| Ոսկի | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 10.2 | 10.4 | 5.5 | 18.5 | 13.4 | 18.6 | 12.4 |
| Արտարժույթ [2] | 749.5 | 755.7 | 748.2 | 741.8 | 752.2 | 768.8 | 791.3 |

*[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով և կուտակման սկզբունքով:*
*[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*
*[3] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:*

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

| Ցուցանիշներ | 2005 [4] | 2006 | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ |
| ***Վարկեր*** [1] | | | | | | | |
| Իրավաբանական անձանց | | | | | | | |
| ՀՀ դրամով | 16.3 | 15.9 | 16.5 | 15.7 | 15.3 | 15.5 | 14.4 |
| ԱՄՆ դոլարով | 13.5 | 12.8 | 13.6 | 14.2 | 14.2 | 13.9 | 13.2 |
| Ֆիզիկական անձանց | | | | | | | |
| ՀՀ դրամով | 22.0 | 21.5 | 21.4 | 21.5 | 20.9 | 21.0 | 21.7 |
| ԱՄՆ դոլարով | 20.3 | 22.7 | 22.7 | 22.4 | 22.6 | 22.4 | 22.6 |
| ***Ավանդներ*** [1] | | | | | | | |
| Իրավաբանական անձանցից | | | | | | | |
| ՀՀ դրամով | 6.5 | 6.1 | 5.9 | 5.1 | 5.5 | 6.5 | 4.5 |
| ԱՄՆ դոլարով | 5.2 | 3.8 | 5.2 | 3.4 | 4.0 | 4.5 | 4.5 |
| Ֆիզիկական անձանցից | | | | | | | |
| ՀՀ դրամով | 6.4 | 6.8 | 5.9 | 5.4 | 5.7 | 5.9 | 6.8 |
| ԱՄՆ դոլարով | 4.4 | 4.7 | 4.7 | 3.7 | 4.9 | 4.7 | 5.5 |
| ***ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը*** | 3.5 | 3.5 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 |
| ***ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը*** | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 |
| ***ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը*** | 16.0 | 16.0 | 16.0 | 12.0 | 12.0 | 7.0 | 7.0 |
| ***ՀՀ ԿԲ կողմից թողարկված պարտատոմսերի եկամտաբերությունը*** [2,3] | 4.3 | 4.3 | 4.3 | 4.7 | 5.1 | 5.4 | 5.4 |
| ***Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը*** [3] | - | - | 4.1 | 4.3 | 4.7 | 4.9 | 4.9 |
| ***Պետական միջինժամկետ մասնակի մարումներով պարտատոմսերի եկամտաբերությունը*** [3] | - | 4.9 | 4.9 | 4.9 | - | - | 6.1 |

*[1] Հաշվարկված են որպես մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջի) ներգրավված/տեղաբաշխված միջոցների միջին կշռված տոկոսադրույք:*
*[2] Ներառված են բոլոր ժամկետայնության արժեթղթերը:*
*[3] Ներկայացված են առաջնային շուկայում տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունները:*
*[4] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները:*

## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

*(մլն ՀՀ դրամ)*

| Ժամկետ | Ավանդի ծավալ[1] | Տոկոսադրույք | Վարկի ծավալ[1] | Տոկոսադրույք |
|---|---|---|---|---|
| **2005** | | | | |
| Հունվար | 9850 | 1.75 | - | - |
| Փետրվար | 19070 | 1.75 | - | - |
| Մարտ | 23910 | 1.75 | - | - |
| Ապրիլ | 16540 | 1.75 | - | - |
| Մայիս | 7250 | 1.75 | - | - |
| Հունիս | 6950 | 1.75 | - | - |
| Հուլիս | 5900 | 1.75 | - | - |
| Օգոստոս | 12150 | 1.39 | - | - |
| Սեպտեմբեր | 5400 | 1.0 | - | - |
| Հոկտեմբեր | 13480 | 1.0 | - | - |
| Նոյեմբեր | 16900 | 1.0 | - | - |
| Դեկտեմբեր | 14250 | 1.0 | - | - |
| **2006** | | | | |
| Հունվար | 10300 | 1.0 | - | - |
| Փետրվար | 5400 | 1.0 | - | - |
| Մարտ | 4700 | 1.0 | - | - |
| Ապրիլ | 1300 | 1.0 | - | - |
| Հունիս | - | - | - | - |

*[1] Մարումները հանված չեն:*

## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

*(մլն ՀՀ դրամ)*

| ժամկետ | Ռեպո համաձայնագրերի ծավալը [1] | Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը | Հակադարձ ռեպո համաձայնագրերի ծավալը [1] | Հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը |
|---|---|---|---|---|
| **2005** | | | | |
| Հունվար | - | - | 2017.5 | 4.5 |
| Մարտ | - | - | 2535.5 | 3.75 |
| Ապրիլ | - | - | 2194.4 | 3.75 |
| Մայիս | - | - | 2008.0 | 3.75 |
| Հունիս | - | - | 6469.8 | 3.75 |
| Հուլիս | - | - | 6022.7 | 3.75 |
| Օգոստոս | - | - | 1279.7 | 3.0 |
| Սեպտեմբեր | - | - | 704.1 | 3.0 |
| **2006** | | | | |
| Հունվար | - | - | 590.4 | 3.5 |
| Փետրվար | - | - | 2058.6 | 4.0 |
| Ապրիլ | 2104 | 4.0 | 511.7 | 4.0 |
| Մայիս | 10 217 | 4.0 | - | - |
| Հունիս | 7 717 | 4.0 | - | - |

[1] *Մարումները հանված չեն:*

## ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

*(հազար ԱՄՆ դոլար)*

| ժամկետ | Արտարժույթի տրամադրման սվոփի ծավալը [1] | Միջին կշռված տոկոսադրույքը | Արտարժույթի ներգրավման սվոփի ծավալը [1] | Միջին կշռված տոկոսադրույքը |
|---|---|---|---|---|
| **2005** | | | | |
| Հունիս | 2300 | 0.54 | - | - |
| **2006** | | | | |
| Ապրիլ | 2100 | -0.8 | - | - |
| Մայիս | 1500 | -1.1 | - | - |
| Հունիս | - | - | - | - |

[1] *Մարումները հանված չեն:*

## ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՌԵՊՈ ՇՈՒԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

| Ցուցանիշ | Միջբանկային ռեպո շուկայի շրջանառությունը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մինչև 7 օր | | 8 – 14 օր | | 15 – 28 օր | | 28 օր և ավելի | | Ընդամենը | |
| | մլն դրամ | % | մլն դրամ | % | մլն դրամ | % | մլն դրամ | % | մլն դրամ | % |
| ***Հունվար*** | 1540.76 | 3.81 | 3693.61 | 4.54 | 2119.73 | 4.35 | 875.58 | 4.89 | **8229.68** | **4.39** |
| Առավելագույն տոկոսադրույք | | 5.00 | | 6.00 | | 6.00 | | 6.00 | | **6.00** |
| Նվազագույն տոկոսադրույք | | 3.00 | | 3.50 | | 3.50 | | 4.00 | | **3.00** |
| Ստանդարտ շեղում | | 0.77 | | 0.69 | | 0.60 | | 0.74 | | **0.76** |
| ***Փետրվար*** | 2812.91 | 3.55 | 2385.79 | 3.79 | 267.40 | 4.00 | 516.25 | 4.10 | **5982.35** | **3.71** |
| Առավելագույն տոկոսադրույք | | 4.50 | | 4.50 | | 4.00 | | 4.50 | | **4.50** |
| Նվազագույն տոկոսադրույք | | 3.00 | | 3.00 | | 4.00 | | 4.00 | | **3.00** |
| Ստանդարտ շեղում | | 0.51 | | 0.35 | | - | | 0.20 | | **0.44** |
| ***Մարտ*** | 3089.72 | 3.36 | 2560.94 | 3.39 | 1581.79 | 3.62 | 403.42 | 4.32 | **7635.86** | **3.47** |
| Առավելագույն տոկոսադրույք | | 4.00 | | 4.00 | | 4.00 | | 4.50 | | **4.50** |
| Նվազագույն տոկոսադրույք | | 3.00 | | 3.00 | | 3.50 | | 4.00 | | **3.00** |
| Ստանդարտ շեղում | | 0.38 | | 0.37 | | 0.20 | | 0.27 | | **0.40** |
| ***Ապրիլ*** | 5326.67 | 3.71 | 4089.75 | 3.71 | 1171.26 | 3.99 | 305.70 | 4.47 | **10893.38** | **3.76** |
| Առավելագույն տոկոսադրույք | | 4.50 | | 4.50 | | 4.50 | | 5.00 | | **5.00** |
| Նվազագույն տոկոսադրույք | | 3.00 | | 3.20 | | 3.25 | | 4.00 | | **3.00** |
| Ստանդարտ շեղում | | 0.39 | | 0.34 | | 0.27 | | 0.50 | | **0.39** |
| ***Մայիս*** | 7912.50 | 4.30 | 4181.06 | 4.40 | 1426.32 | 4.61 | 675.19 | 4.51 | **14195.06** | **4.37** |
| Առավելագույն տոկոսադրույք | | 5.00 | | 5.00 | | 5.00 | | 5.00 | | **5.00** |
| Նվազագույն տոկոսադրույք | | 3.75 | | 3.50 | | 3.75 | | 4.00 | | **3.50** |
| Ստանդարտ շեղում | | 0.32 | | 0.32 | | 0.32 | | 0.42 | | **0.51** |
| ***Հունիս*** | 10223.73 | 4.89 | 6148.81 | 5.13 | 1968.08 | 5.29 | 670.00 | 5.87 | **19010.61** | **5.04** |
| Առավելագույն տոկոսադրույք | | 6.00 | | 7.00 | | 6.00 | | 6.00 | | **7.00** |
| Նվազագույն տոկոսադրույք | | 4.00 | | 4.00 | | 4.10 | | 5.50 | | **4.00** |
| Ստանդարտ շեղում | | 0.57 | | 0.55 | | 0.59 | | 0.26 | | **0.59** |
| ***Ընդամենը*** | 30906.28 | 4.20 | 23059.96 | 4.32 | 8534.57 | 4.41 | 3446.14 | 4.78 | **65946.95** | **4.30** |
| Առավելագույն տոկոսադրույք | | 6.00 | | 7.00 | | 6.00 | | 6.00 | | **7.00** |
| Նվազագույն տոկոսադրույք | | 3.00 | | 3.00 | | 3.25 | | 4.00 | | **3.00** |

## ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

| Ամսաթիվ | Դ - 05 | Հ - 06 | Փ - 06 | Մ - 06 | Ա - 06 | Մ - 06 | Հ - 06 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 446.77 | - | 449.22 | 450.60 | - | - | 427.12 |
| 2 | 447.84 | - | 449.05 | 450.65 | - | 445.61 | 426.57 |
| 3 | - | - | 448.95 | 450.65 | 450.50 | 445.50 | - |
| 4 | - | 453.27 | - | - | 450.78 | 445.61 | - |
| 5 | 449.11 | 452.26 | - | - | 451.15 | 446.26 | 426.37 |
| 6 | 451.91 | - | 448.75 | 451.10 | 451.36 | 446.91 | 425.09 |
| 7 | 454.58 | - | 448.84 | 451.87 | 451.36 | - | 423.49 |
| 8 | 458.15 | 454.82 | 448.90 | - | - | - | 421.68 |
| 9 | 456.11 | 454.77 | 449.64 | 453.13 | - | - | 418.94 |
| 10 | - | 454.49 | 449.82 | 452.92 | 451.57 | 446.75 | - |
| 11 | - | 453.46 | - | - | 451.57 | 446.40 | - |
| 12 | 452.86 | 453.43 | - | - | 451.41 | 445.70 | 418.18 |
| 13 | 451.37 | 453.72 | 450.67 | 453.16 | 451.25 | - | 417.19 |
| 14 | 449.79 | - | 450.93 | 452.94 | 451.25 | - | 417.19 |
| 15 | 446.39 | - | 451.21 | 452.80 | - | 443.43 | 418.03 |
| 16 | 444.21 | 455.92 | 450.98 | 452.51 | - | 442.14 | 420.93 |
| 17 | - | 455.22 | 450.52 | 450.94 | 450.98 | 440.05 | - |
| 18 | - | 454.91 | - | 450.94 | 450.15 | 438.41 | - |
| 19 | 445.29 | 453.32 | - | - | 450.06 | 437.34 | 421.68 |
| 20 | 447.09 | 451.51 | 450.40 | 449.87 | 449.46 | - | 420.64 |
| 21 | 448.98 | - | 450.34 | 449.67 | 448.81 | - | 419.83 |
| 22 | 448.98 | - | 450.63 | 449.36 | - | 437.37 | 419.04 |
| 23 | 446.25 | 447.58 | 450.71 | 449.06 | - | 436.89 | 418.48 |
| 24 | - | 446.91 | 451.10 | 449.38 | - | 435.28 | - |
| 25 | - | 446.80 | - | - | 448.03 | 433.87 | - |
| 26 | 446.25 | 446.86 | - | - | 447.36 | 432.70 | 418.48 |
| 27 | 447.49 | 447.31 | 450.86 | 449.55 | 446.53 | - | 418.66 |
| 28 | 447.83 | - | 450.68 | 449.77 | 446.14 | - | 418.71 |
| 29 | 448.51 | - | - | 450.09 | - | 431.04 | 418.79 |
| 30 | 450.19 | 449.10 | - | 451.08 | - | 429.55 | 418.79 |
| 31 | - | 449.19 | - | 450.92 | - | 427.56 | - |
| ժամանակահատվածի վերջ | 450.19 | 449.19 | 450.68 | 450.92 | 446.14 | 427.56 | 418.79 |
| ժամանակահատվածի միջին | 449.36 | 451.74 | 450.11 | 451.00 | 449.99 | 439.73 | 420.63 |

## ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ 2005 ԹՎԱԿԱՆԻՆ

*մլն ԱՄՆ դոլար*

| Ցուցանիշներ | Մնացորդը 31.03.06թ. դրությամբ | Փոփոխություններ | | | | | Մնացորդը 30.06.06թ. դրությամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գործառնությունների հաշվին | Գների փոփոխությունների հաշվին | Փոխարժեքի փոփոխությունների հաշվին | Այլ ճշտումներ | Ընդհանուր փոփոխություններ | |
| **Ակտիվներ** | **223.15** | **-26.48** | **0.00** | **1.50** | **0.00** | **-24.98** | **197.8** |
| Ուղղակի ներդրումներ արտերկրներում | 7.62 | 0.28 | 0.00 | 0.06 | 0.00 | 0.34 | 7.6 |
| Բաժնետիրական կապիտալ | 5.96 | 0.28 | | 0.06 | | 0.34 | 6.3 |
| Վերաներդրված շահույթ | 1.66 | -0.34 | | 0.00 | | 0.00 | 1.32 |
| Այլ կապիտալ | | | | | | | |
| Պորտֆելային ներդրումներ | 3.86 | 0.32 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.32 | 4.2 |
| Բաժնետոմսեր | 0.98 | -0.53 | | 0.00 | | -0.53 | 0.45 |
| Պարտքային պարտավորություններ | 2.88 | 0.85 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.85 | 3.73 |
| Պարտատոմսեր | 2.878 | 0.34 | | 0.00 | | 0.34 | 3.22 |
| Դրամական շուկայի գործիքներ | 0.00 | 0.51 | | 0.00 | 0.00 | 0.51 | 0.51 |
| Այլ ներդրումներ | 211.67 | -27.08 | 0.00 | 1.43 | 0.00 | -25.64 | 186.03 |
| Վարկեր | 17.50 | 4.51 | 0.00 | -0.15 | 0.00 | 4.36 | 21.86 |
| Երկարաժամկետ | 2.19 | 0.22 | | 0.04 | | 0.26 | 2.45 |
| Կարճաժամկետ | 15.31 | 4.29 | | -0.19 | 0.00 | 4.10 | 19.41 |
| Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ | 188.10 | -27.79 | 0.00 | 1.58 | 0.00 | -26.20 | 161.89 |
| Կանխիկ դրամական միջոցներ | 37.68 | 0.50 | | 0.34 | 0.00 | 0.84 | 38.52 |
| Ավանդներ | 150.42 | -28.29 | 0.00 | 1.24 | 0.00 | -27.04 | 123.37 |
| Երկարաժամկետ | 6.60 | -3.55 | | 0.03 | | -3.53 | 3.07 |
| Կարճաժամկետ | 143.82 | -24.73 | | 1.22 | 0.00 | -23.52 | 120.30 |
| Այլ ակտիվներ | 6.07 | -3.80 | 0.00 | 0.00 | 0.00 | -3.80 | 2.28 |
| **Պարտավորություններ** | **258.27** | **-3.80** | **0.00** | **10.91** | **-11.08** | **-3.97** | **254.30** |
| Ուղղակի ներդրումներ ՀՀ-ում | 74.03 | 12.33 | 0.00 | 0.54 | -11.08 | 1.78 | 75.81 |
| Բաժնետիրական կապիտալ | 62.44 | 1.97 | | 0.00 | | 1.97 | 64.41 |
| Վերաներդրված շահույթ | 0.51 | 6.49 | | 0.32 | | 6.81 | 7.31 |
| Այլ կապիտալ | 11.08 | 3.87 | | 0.22 | -11.08 | -6.99 | 4.09 |
| Պորտֆելային ներդրումներ | 4.33 | 9.13 | 0.00 | 0.00 | 0.00 | 9.13 | 13.46 |
| Բաժնետոմսեր | 4.33 | -0.87 | | 0.00 | | -0.87 | 3.46 |
| Պարտքային պարտավորություններ | 0.00 | 10.00 | 0.00 | 0.0 | 0.00 | 10.00 | 10.00 |
| Պարտատոմսեր | 0.00 | 10.00 | | 0.00 | | 10.00 | 10.00 |
| Դրամական շուկայի գործիքներ | 0.00 | 0.00 | | 0.00 | | 0.00 | 0.00 |
| Այլ ներդրումներ | 179.92 | -25.26 | 0.00 | 10.37 | 0.00 | -14.88 | 165.03 |
| Վարկեր | 36.94 | 19.44 | 0.00 | 8.63 | 0.00 | 28.07 | 65.01 |
| Երկարաժամկետ | 36.23 | 8.55 | | -3.80 | | 4.75 | 40.98 |
| Կարճաժամկետ | 0.71 | 10.89 | | 12.43 | 0.00 | 23.32 | 24.03 |
| Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ | 135.00 | -42.77 | 0.00 | 1.66 | 0.00 | -41.11 | 93.88 |
| Երկարաժամկետ | 9.54 | -1.01 | | 0.28 | | -0.73 | 8.81 |
| Կարճաժամկետ | 125.46 | -41.76 | | 1.38 | | -40.39 | 85.07 |
| Այլ պարտավորություններ | 7.98 | -1.93 | 0.00 | 0.08 | 0.00 | -1.84 | 6.14 |
| Երկարաժամկետ | | | | | | | |
| Կարճաժամկետ | 7.98 | -1.93 | | 0.08 | | -1.84 | 6.14 |
| **Զուտ ներդրումային դիրքը** | **-35.12** | **-22.68** | **0.00** | **-9.41** | **11.08** | **-21.01** | **-56.47** |

## ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԸ

*մլն ԱՄՆ դոլար*

| | 2006 I եռամսյակ | | | | | | 2006 II եռամսյակ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արտարժույթ | | | | | | Արտարժույթ | | | | |
| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո | ՌԴ ռուբլի | Այլ | Ընդամենը | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո | ՌԴ ռուբլի | Այլ | Ընդամենը |
| **Ակտիվներ** | **2.3** | **179.6** | **31.4** | **5.7** | **4.3** | **220.9** | **7.3** | **147.3** | **32.4** | **6.2** | **4.7** | **190.5** |
| Կապիտալի արժեթղթեր | - | 6.1 | 0.0 | 0.8 | 0.0 | 6.9 | - | 5.8 | 0.0 | 0.9 | 0.0 | 6.7 |
| Պարտքային արժեթղթեր | 0.0 | 2.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 2.9 | 0.0 | 3.3 | 0.4 | 0.0 | 0.0 | 3.7 |
| Կանխիկ դրամական միջոցներ | - | 30.9 | 4.6 | 2.0 | 0.2 | 37.7 | - | 30.4 | 5.2 | 2.7 | 0.2 | 38.5 |
| Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր | 0.4 | 16.5 | 0.5 | 0.0 | 0.1 | 17.1 | 5.8 | 15.5 | 0.5 | 0.0 | 0.1 | 16.1 |
| Ավանդներ | 0.0 | 117.6 | 26.0 | 2.9 | 3.9 | 150.4 | 0.0 | 90.4 | 26.1 | 2.5 | 4.3 | 123.4 |
| Այլ | 1.9 | 5.6 | 0.2 | 0.0 | 0.0 | 5.8 | 1.6 | 1.8 | 0.1 | 0.1 | 0.0 | 2.0 |
| **Պարտավորություններ** | **79.6** | **163.3** | **12.5** | **2.4** | **0.4** | **178.6** | **91.4** | **148.4** | **11.9** | **0.8** | **1.6** | **162.9** |
| Կապիտալի արժեթղթեր | 66.8 | | | | | 0.0 | 67.9 | | | | | 0.0 |
| Պարտքային արժեթղթեր | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 10.0 |
| Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր | 0.0 | 47.5 | 0.5 | 0.0 | 0.0 | 48.0 | 2.4 | 61.6 | 2.3 | 0.0 | 1.1 | 65.0 |
| Ավանդներ | 11.9 | 109.3 | 11.7 | 1.8 | 0.3 | 123.1 | 11.7 | 72.4 | 9.1 | 0.4 | 0.3 | 82.2 |
| Այլ | 1.0 | 6.5 | 0.3 | 0.6 | 0.1 | 7.5 | 9.5 | 4.4 | 0.5 | 0.4 | 0.3 | 5.7 |
| **Զուտ դիրք*** | **-77.4** | **16.3** | **18.8** | **3.3** | **3.9** | **42.2** | **-84.1** | **-1.2** | **20.5** | **5.3** | **3.0** | **27.6** |

** Ի տարբերություն փողի զանգվածում ՀՀ առևտրային բանկերի ԶՈՒՄ-ի, այստեղ ներառված են նաև ՀՀ առևտրային բանկերի «Կապիտալի արժեթղթերը»՝ պարտավորությունների մասում, ոչ փոխարկելի արտարժույթը և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվներն ու պարտավորությունները:*

## ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ 2005 -2006 ԹԹ.

*հազար ԱՄՆ դոլար*

| Երկրներ | 2005 | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I եռ. | | | II եռ. | | | I կիսամյակ | | |
| | Մուտք | Ելք | Զուտ մուտք | Մուտք | Ելք | Զուտ մուտք | Մուտք | Ելք | Զուտ մուտք |
| Ռուսաստան | 79605 | 14895 | 64710 | 124181 | 21543 | 102637 | 203785 | 36438 | 167347 |
| ԱՄՆ | 17690 | 4739 | 12951 | 16322 | 11180 | 5142 | 34012 | 15919 | 18093 |
| Գերմանիա | 3592 | 992 | 2600 | 3948 | 1398 | 2550 | 7540 | 2390 | 5150 |
| Մեծ Բրիտանիա | 2350 | 928 | 1421 | 2409 | 765 | 1644 | 4759 | 1693 | 3065 |
| Շվեյցարիա | 2927 | 1092 | 1835 | 3042 | 398 | 2644 | 5969 | 1489 | 4479 |
| Ֆրանսիա | 996 | 454 | 542 | 1428 | 296 | 1132 | 2424 | 750 | 1674 |
| Թուրքիա | 143 | 1516 | -1373 | 285 | 2315 | -2030 | 428 | 3831 | -3403 |
| ԱՄԷ | 2720 | 2331 | 389 | 670 | 1964 | -1295 | 3390 | 4295 | -906 |
| Ուկրաինա | 823 | 1801 | -978 | 1380 | 1670 | -290 | 2203 | 3471 | -1268 |
| Այլ երկրներ | 14462 | 9058 | 5404 | 20369 | 12120 | 8249 | 34831 | 21178 | 13653 |
| **Ընդամենը** | **125308** | **37806** | **87501** | **174033** | **53648** | **120384** | **299340** | **91455** | **207886** |

*հազար ԱՄՆ դոլար*

| Երկրներ | 2006 | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I եռ. | | | II եռ. | | | I կիսամյակ | | |
| | Մուտք | Ելք | Զուտ մուտք | Մուտք | Ելք | Զուտ մուտք | Մուտք | Ելք | Զուտ մուտք |
| Ռուսաստան | 99985 | 18488 | 81497 | 161408 | 24752 | 136657 | 261393 | 43240 | 218154 |
| ԱՄՆ | 20277 | 2923 | 17354 | 21897 | 3713 | 18184 | 42175 | 6636 | 35538 |
| Գերմանիա | 2272 | 1251 | 1021 | 3098 | 1463 | 1635 | 5371 | 2715 | 2656 |
| Մեծ Բրիտանիա | 2226 | 472 | 1753 | 2742 | 926 | 1816 | 4968 | 1398 | 3570 |
| Շվեյցարիա | 2022 | 1080 | 941 | 1544 | 676 | 869 | 3566 | 1756 | 1810 |
| Ֆրանսիա | 1270 | 447 | 823 | 1853 | 811 | 1042 | 3122 | 1258 | 1865 |
| Թուրքիա | 290 | 1646 | -1356 | 302 | 1324 | -1022 | 592 | 2970 | -2378 |
| ԱՄԷ | 551 | 2395 | -1845 | 888 | 1914 | -1025 | 1439 | 4309 | -2870 |
| Ուկրաինա | 1325 | 1093 | 232 | 1698 | 1638 | 60 | 3024 | 2731 | 292 |
| Այլ երկրներ | 17476 | 8233 | 9244 | 20854 | 9893 | 10962 | 38331 | 18126 | 20205 |
| **Ընդամենը** | 147694 | 38029 | 109665 | 216287 | 47110 | 169177 | 363981 | 85139 | 278842 |

# ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

*(2006 թ. հունիս 30-ի դրությամբ)*

## Հաշվեկշիռ

*(հազար ՀՀ դրամ)*

| | *30.06.06* | *31.03.06* | *31.12.05* |
|---|---|---|---|
| ***Ակտիվներ*** | | | |
| **Ակտիվներ արտարժույթով** | | | |
| Կանխիկ դրամական միջոցներ | 636,344 | 562,173 | 269,956 |
| Օտարերկրյա բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջներ | 286,363,231 | 211,664,643 | 203,034,141 |
| ԱՄՀ-ում հատուկ փոխառության իրավունք | 62,189,715 | 68,129,250 | 63,808,889 |
| Ներդրումային արժեթղթեր | | | |
| - առևտրային նպատակներով պահվող ներդրումներ | 2,172,659 | - | - |
| - վաճառքի համար նախատեսված ներդրումներ | 42,230,050 | 122,247,364 | 1,301 |
| - մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | - | - | 135,171,386 |
| Այլ ակտիվներ արտարժույթով | 1,126,658 | 286,986 | 422,267 |
| | **394,718,657** | **402,890,416** | **402,707,940** |
| **Ակտիվներ ՀՀ դրամով** | | | |
| Վարկեր և այլ պահանջներ | 13,609,596 | 11,939,702 | 11,949,866 |
| Ներդրումային արժեթղթեր | | | |
| - վաճառքի համար նախատեսված ներդրումներ | 20,061,336 | 7,798,566 | 8,077,077 |
| Հիմնական միջոցներ | 6,073,500 | 6,036,404 | 6,088,280 |
| Ոչ նյութական ակտիվներ | 61,472 | 69,824 | 77,914 |
| Օտարման ենթակա հիմնական միջոցներ | 1,372 | 1,616 | 1,393 |
| Այլ ակտիվներ ՀՀ դրամով | 592,691 | 410,874 | 325,472 |
| | **40,399,967** | **26,256,986** | **26,520,002** |
| ***Ընդամենը ակտիվներ*** | **435,118,624** | **429,147,402** | **429,227,942** |
| ***Պարտավորություններ*** | | | |
| **Արտարժույթով պարտավորություններ** | | | |
| Փոխառված միջոցներ | | | |
| - բանկեր և վարկային կազմակերպություններ | 31,076,528 | 33,811,027 | 31,206,005 |
| - ԱՄՀ | 71,720,058 | 78,090,169 | 79,411,892 |
| - Հայաստանի կառավարություն | 18,498,528 | 39,290,539 | 39,493,293 |
| Այլ ավանդային հաշիվներ արտարժույթով | 1,899,269 | 2,036,506 | 1,990,006 |
| Այլ պարտավորություններ արտարժույթով | 20,255,220 | 3,093,624 | 101,068 |
| | **143,449,603** | **156,321,865** | **152,202,264** |
| **ՀՀ դրամով պարտավորություններ** | | | |
| Շրջանառության մեջ թղթադրամներ և մետաղադրամներ | 154,389,243 | 141,265,631 | 155,274,723 |
| Փոխառված միջոցներ | | | |
| - բանկեր և վարկային կազմակերպություններ | 23,146,155 | 23,946,515 | 30,359,201 |
| - ԱՄՀ | 57,001,058 | 59,776,028 | 59,199,628 |
| - Հայաստանի կառավարություն | 39,245,726 | 27,168,148 | 21,993,849 |
| Այլ ավանդային հաշիվներ ՀՀ դրամով | 1,046,925 | 1,176,187 | 1,199,662 |
| Թողարկված արժեթղթեր | 23,908,331 | 29,077,916 | 21,482,856 |
| ՀՀ դրամով այլ պարտավորություններ | 151,996 | 129,269 | 149,996 |
| | **298,889,434** | **282,539,694** | **289,659,915** |
| ***Ընդամենը պարտավորություններ*** | **442,339,037** | **438,861,559** | **441,862,179** |
| ***Կապիտալ*** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 100,000 | 100,000 | 100,000 |
| Գլխավոր պահուստ | 9,870,486 | 9,870,486 | 9,870,486 |
| Կուտակված շահույթ / (վնաս) և այլ պահուստներ | (29,925,136) | (19,684,643) | (22,604,723) |
| ՀՀ կառավարության ներդրում ՀՀ կենտրոնական բանկի կապիտալում | 12,734,237 | - | - |
| **Ընդհանուր կապիտալ** | **(7,220,413)** | **(9,714,157)** | **(12,634,237)** |
| ***Ընդամենը կապիտալ և պարտավորություններ*** | **435,118,624** | **429,147,402** | **429,227,942** |

*Հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2006 թվականի սեպտեմբերի 12-ին և ստորագրվել:*

**ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Նախագահ*

**ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ**

*Գլխավոր հաշվապահ*

# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

## ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ 2005 ԹՎԱԿԱՆԻՆ[1]

*Վիճակագրության վարչություն*
**Մ. Բարսեղյան, Տ. Սարգսյան**

Հայաստանի արտաքին պարտքը 2005 թվականի վերջի դրությամբ կազմել է 1860.2 մլն ԱՄՆ դոլար[2], որից 1099.4 մլն ԱՄՆ դոլարը (այսուհետև՝ դոլար) պետական կառավարման և դրամավարկային կարգավորման մարմինների արտաքին պարտքն է, 169.3 մլն ԱՄՆ դոլարը՝ առևտրային բանկերի պարտքը[3], 591.5 մլն ԱՄՆ դոլարը՝ մասնավոր հատվածի (այլ հատվածներ) պարտքը[4]: Բանկերի և այլ մասնավոր հատվածի միջֆիրմային վարկերի ծավալը կազմել է 224.7 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ պետական կառավարման և դրամավարկային կարգավորման մարմինների արտաքին պարտքը, որն ամբողջությամբ ձևավորվել է երկարաժամկետ արտաքին վարկերի հաշվին, նախորդ տարվա համեմատ նվազել է 81.0 մլն դոլարով և տարեվերջին կազմել է 1099.4 մլն դոլար: Ոչ ռեզիդենտների ՀՀ պետական կարճաժամկետ պարտատոմսերում ներդրումները գրեթե ամբողջությամբ մարվել են[5]:

ՀՀ առևտրային բանկերի արտաքին պարտքն ավելացել է 32.9 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել 169.3 մլն ԱՄՆ դոլար, ինչը հիմնականում բաղկացած է ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդներից՝ 108.4 մլն դոլար և վարկերից՝ 48.5 մլն դոլար: 2005 թվականին առևտրային բանկերի վարկերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 26.3 մլն դոլարով, մասնավորապես՝ տարվա ընթացքում ներգրավվել են 39.0 մլն դոլար վարկային միջոցներ, իսկ նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարվել են 13.8 մլն դոլար հիմնական գումարի մարումներ: 2005 թվականի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 7.6 % (2004 թվականին՝ 5.6%), իսկ միջին ժամկետայնությունը՝ 4.2 տարի (2004 թվականին՝ 4.6 տարի): 2005 թվականին առևտրային բանկերի հիմնական վարկատու երկրներ են եղել՝ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Շվեյցարիան, ԱՄՆ-ն, Լյուքսեմբուրգը, Գերմանիան:

ՀՀ մասնավոր հատվածի (առանց առևտրային բանկերի) արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ ավելացել է 40.2 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 591.5 մլն ԱՄՆ դոլար, որի մոտ 58.6%-ը կամ 346.9 մլն դոլարը կազմել են վարկերն ու առևտրային վարկերը, 30.6 մլն ԱՄՆ դոլարը՝ այլ պարտավորությունները, իսկ 214.0 մլն ԱՄՆ դոլարը կամ 36.2%-ը՝ միջֆիրմային վարկերը: Մասնավոր հատվածի արտաքին պարտքն ավելացել է հիմնականում վարկերի ծավալների աճի հաշվին, որոնք 2005 թվականին կազմել են 171.2 մլն դոլար՝ նախորդ տարվա 89.1 մլն դոլարի փոխարեն: Մյուս կողմից՝ զգալի նվազել են առևտրային վարկերը՝ 32.9 մլն դոլարով, թեև դեռևս մնում են մասնավոր հատվածի պարտավորությունների ամենամեծ տարրը՝ կազմելով 175.7 մլն դոլար: Ընդ որում, մինչև 1997 թվականը առևտրային վարկերի մարումների վերաբերյալ վիճակագրություն չի հավաքագրվել, ինչի հետևանքով էլ առևտրային վարկերի ցուցանիշը ներկայումս բավականին մեծ արժեք ունի: Նշենք նաև, որ միջազգային ֆինանսական կազմակերպություններից Հայաստանի մասնավոր հատվածի հետ հիմնականում աշխատում է Եվրոպական բանկը: Վերջինս վարկային միջոցներ է տրամադրել Հայաստանի կոնյակի գործարանին, Հայաստանի «Պղնձի ծրագրին» և բանկային համակարգի միջոցով ֆինանսավորել է փոքր և միջին բիզնեսին:

---

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] *2005 թվականի ցուցանիշները նախնական են և ենթակա են վերանայման:*


[2] *Արտաքին պարտքի վերաբերյալ տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ: Արտաքին պարտքը հաշվառվել է ԱՄՀ «Արտաքին պարտքի վիճակագրության հավաքագրողների» ձեռնարկում սահմանված մեթոդաբանությամբ, համաձայն որի՝ արտաքին պարտքն ընդգրկում է տնտեսության հատվածների արտաքին պարտավորությունները, բացառությամբ ուղղակի ներդրումների (սակայն ուղղակի ներդրումների միջֆիրմային վարկերը ներառվում են արտաքին պարտքի մեջ): Ընդ որում՝ արտաքին պարտքի ցուցանիշները հաշվառված են հաշվապահական հաշվառման կուտակման սկզբունքով:*

[3] *Առևտրային բանկերի պարտքի 10.6 մլն դոլարը կազմում են ուղղակի ներդրումների միջֆիրմային վարկերը:*

[4] *Մասնավոր հատվածի պարտքի 214.0 մլն դոլարը կազմում են ուղղակի ներդրումների միջֆիրմային վարկերը:*

[5] *Պետական պարտատոմսերում դեռևս առկա է աննշան՝ 0.0003 մլն դոլար պարտք:*

*Հայաստանի արտաքին պարտքի կառուցվածքն ըստ գործիքների (2005 թ.)*




ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքը 2005 թվականի վերջի դրությամբ[6] կազմել է 1099.2 մլն դոլար, որից 896.6 մլն դոլարը ՀՀ կառավարության պարտքն է, 3.1 մլն դոլարը՝ ՀՀ կառավարության երաշխիքները, իսկ 196.2 մլն դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը (Արժույթի միջազգային հիմնադրամի հանդեպ պարտավորությունները կազմել են 176.4 մլն դոլար):

*Հայաստանի Հանրապետությունը, 1992 թվականի մայիսի 28-ին ստորագրելով ԱՄՀ-ի Համաձայնագրի հոդվածները, դարձավ Հիմնադրամի անդամ: Կառավարիչների խորհրդում Հայաստանը ներկայացնում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը (Կառավարիչ) և ՀՀ կենտրոնական բանկի նախագահը (Կառավարչի տեղակալ): Տնօրենների խորհրդում Հայաստանը Բուլղարիայի, Կիպրոսի, Իսրայելի, Մոլդովայի, Ուկրաինայի, Նիդեռլանդների, Ռումինիայի, Վրաստանի, Մակեդոնիայի, Խորվաթիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի հետ միևնույն խմբում է, որի Կառավարիչը ներկայումս Նիդեռլանդների ներկայացուցիչն է:*

*Հայաստանի բաժնեմասը, մինչև բաժնեմասերի 11-րդ ընդհանուր վերանայումը, կազմել է 67.50 մլն ՀՓԻ, իսկ դրանից հետո (1998 թվականի հունվարի 30) ավելացվել է և այժմ կազմում է 92 մլն ՀՓԻ:*

*Հայաստանը ԱՄՀ-ի հետ կնքել է 4 վարկային համաձայնագիր: 2005 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի պարտավորությունները ԱՄՀ նկատմամբ կազմել են 123.4 մլն ՀՓԻ: Ընդ որում, «Սթենդ-բայ» ծրագրի ֆինանսական միջոցների հետգնումը ավարտված է, իսկ ՀԲՖՄ (STF) ծրագրի ֆինանսական միջոցների հետգնումը ավարտվել է 2005 թվականին: 2005 թվականին ԱՄՀ-ն Հայաստանի հետ սկսել է ևս մեկ ԱՆՏԱ վարկային եռամյա ծրագիր՝ 23 մլն ՀՓԻ գումարով:*

| *Մեխանիզմների տեսակները* | *Համաձայնագրի կնքման ամսաթիվը* | *Գումարը ըստ համաձայնագրի* | *Պարտավորությունները 31.12.2005թ. դրությամբ* |
|---|---|---|---|
| *ՀԲՖՄ (STF)* | *15.12. 1994* | *33.8* | *0.0* |
| *«Սթենդ-բայ»* | *28.06.1995* | *43.9** | *0.0* |
| *ԱՆՏԱ (PRGF) I*** | *14.02.1996* | *109.4* | *47.9* |
| *ԱՆՏԱ (PRGF) II* | *23.05.2001* | *69.0* | *69.0* |
| *ԱՆՏԱ (PRGF) III* | *25.05.2005* | *23.0* | *6.6* |

** Տրամադրվել է ընդամենը 13.5 մլն ՀՓԻ:*

*** Կնքվել է որպես ESAF համաձայնագիր, իսկ 1999 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է PRGF:*

[6] *Արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի վիճակագրության հավաքագրման պատասխանատուն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն է: Ընդ որում, այս ցուցանիշը հաշվարկված է հաշվապահական հաշվառման կանխիկ սկզբունքով և չի ներառում ոչ ռեզիդենտների պետական պարտատոմսերն ու ՀՀ պետական և դրամավարկային մարմինների այլ պարտավորությունները:*

2005 թվականին արտաքին պետական պարտքի ներհոսքը կազմել է 59.3 մլն դոլար, որի մոտ 77.2%-ը բազմակողմանի պաշտոնական աղբյուրներից ներգրաված միջոցներ են: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկից և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից տարվա ընթացքում ներգրավվել են 36.2 մլն դոլարի, իսկ Արժույթի միջազգային հիմնադրամից (ԱՄՀ)՝ 9.5 մլն դոլարի ֆինանսական միջոցներ: Համաշխարհային բանկի կողմից գումարները տրամադրվել են հիմնականում Սոցիալական ներդրումների հիմնադրամ՝ 5.2 մլն դոլար, Ոռոգման համակարգի զարգացման՝ 4.7 մլն դոլար, Իրավական բարեփոխումների՝ 4.1 մլն դոլար, վարկային ծրագրերի իրականացման համար: ԱՄՀ տրամադրած 9.5 մլն դոլար վարկային միջոցները ԱՆՏԱ (Աղքատության նվազեցման և տնտեսական աճի ծրագիր՝ PRGF) վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն են: Երկկողմանի վարկատուներից տարվա ընթացքում ներգրավված 13.5 մլն դոլարի զգալի մասը՝ 7.0 մլն դոլարը, ստացվել է KFW բանկից՝ Ջրամատակարարման համակարգի զարգացում II ծրագրի շրջանակներում:

2005 թվականին արտաքին պետական պարտքի հիմնական գումարի մարումները կազմել են 50.0 մլն դոլար, իսկ տոկոսավճարները՝ 11.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համապատասխանաբար 86.1 մլն և 9.7 մլն դոլարի փոխարեն: Արտաքին պետական պարտքի սպասարկման ծավալներից 35.4 մլն դոլարը կամ արտաքին պետական պարտքի սպասարկման շուրջ 57 %-ը կազմել է ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի սպասարկումը, ինչը նախորդ տարի կազմել էր 36.1 մլն դոլար: Ընդ որում, ԱՄՀ վարկերի դիմաց ՀՀ կենտրոնական բանկը վճարել է 0.9 մլն դոլար տոկոսագումար և իրականացրել 32.2 մլն դոլար հիմնական գումարի մարում՝ ՀԲՖՄ (STF) և ԱՆՏԱ (PRGF) վարկային ծրագրերի շրջանակներում: 2005 թվականի օգոստոսին ամբողջությամբ ավարտվել է ՀԲՖՄ (STF) վարկային համաձայնագրով ստացված միջոցների մարումը:

Նշված հոսքերի արդյունքում 2005 թվականին Հայաստանի արտաքին պետական պարտքի զուտ ներհոսքը (արտաքին պարտքի գծով ներգրավված ֆինանսական միջոցների և վճարված հիմնական գումարի տարբերություն) կազմել է 9.3 մլն դոլար, սակայն պայմանավորված տարվա ընթացքում ՀՓԻ-ի և եվրոյի նկատմամբ դոլարի փոխարժեքի համապատասխանաբար 8.0% և 13.1% արժեքավորմամբ՝ ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքը նվազել է 83.7 մլն դոլարով: Փոխարժեքի փոփոխության հաշվին Հայաստանի արտաքին պետական պարտքի մոտ 93.0 մլն դոլար նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ արտաքին պարտքի գերակշիռ մասը ներգրավված է մեկ արժույթով՝ ՀՓԻ-ով:

*Աղյուսակ 1. ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքն ըստ արժույթների (%)*

| Արժույթ | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|
| *ՀՓԻ* | 83.4 | 87.4 | 88.1 |
| ԱՄՆ դոլար | 10.1 | 6.3 | 5.1 |
| Եվրո | 6.0 | 6.1 | 6.7 |
| Այլ | 0.5 | 0.1 | 0.1 |

2005 թվականի ընթացքում ԱՄՆ դոլար/ՀՓԻ փոխարժեքի արժևորման արդյունքում Համաշխարհային բանկից (ներառյալ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը) և ԱՄՀ-ից ՀՓԻ-ով ներգրավված պարտքը համապատասխանաբար նվազել է 67.9 մլն դոլարով և 15.3 մլն դոլարով՝ նախորդ տարվա 35.3 մլն և 9.4 մլն դոլար աճի փոխարեն: Իսկ ԱՄՆ դոլար/եվրո փոխարժեքի արժևորման արդյունքում Եվրոմիությունից, Գերմանիայից և Ֆրանսիայից եվրոյով ներգրավված պարտքը նվազել է 11.4 մլն դոլարով՝ նախորդ տարվա 5.3 մլն դոլար աճի փոխարեն: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՓԻ և եվրոյի փոխարժեքների փոփոխությունը, ի տարբերություն նախորդ տարվա, դրական է անդրադարձել տոկոսավճարների և հիմնական գումարների նվազման տեսանկյունից, ընդ որում՝ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի արժեզրկման պարագայում Կառավարությունը կրկնակի շահել է:

2003-2005 թվականների ընթացքում արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի կառուցվածքն ըստ ներգրավման աղբյուրների կրել է էական փոփոխություններ: Մասնավորապես, հիմնականում կրճատվել կամ զրոյացվել է ոչ արտոնյալ պայմաններով Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի, Ռուսաստանի Դաշնության, Թուրքմենստանի, ԱՄՀ-ի կողմից տրամադրված վարկերի տեսակարար կշիռն ամբողջ պարտքի մեջ: Միևնույն ժամանակ, ավելացել է Զարգացման միջազգային գործակալությունից, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամից, Գերմանիայից արտոնյալ պայմաններով ստացված վարկերի մասնաբաժինը: 2005 թվականին տեղի է ունեցել Ռուսաստանի պարտքի դիմաց նախկինում կուտակված և չվճարված վիճահարույց տոկոսավճարների և դրանց կապիտալացված հիմնական գումարների վերջնական վճարումը՝ մոտ 1.9 մլն դոլար:

*Աղյուսակ 2. ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի կառուցվածքը*

| Աղբյուրը | 2003 | | 2004 | | 2005 | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | տես. կշիռ (%) | մլն ԱՄՆ դոլար | տես. կշիռ (%) | մլն ԱՄՆ դոլար | տես. կշիռ (%) |
| **Բազմակողմանի** | **958.6** | **87.3** | **1063.2** | **89.9** | **979.7** | **89.1** |
| *Համաշխարհային բանկ և Գյուղ. զարգ. գործակալություն* | 709.3 | 64.6 | 825.4 | 69.8 | 791.6 | 72.0 |
| ԱՄՀ | 214.6 | 19.5 | 217.6 | 18.4 | 176.4 | 16.0 |
| Եվրոպական բանկ (առանց երաշխիքի) | 23.3 | 2.1 | 17.5 | 1.5 | 11.7 | 1.1 |
| Եվրոմիություն | 11.4 | 1.0 | 2.7 | 0.2 | 0.0 | 0.0 |
| **Երկկողմանի** | **131.7** | **12.0** | **114.5** | **9.7** | **116.4** | **10.6** |
| Ռուսաստան | 31.0 | 2.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| ԱՄՆ | 41.5 | 3.8 | 39.7 | 3.4 | 38.0 | 3.5 |
| Գերմանիա | 49.6 | 4.5 | 65.1 | 5.5 | 69.3 | 6.3 |
| Ֆրանսիա | 4.5 | 0.4 | 4.8 | 0.4 | 4.2 | 0.4 |
| Ճապոնիա | 1.7 | 0.2 | 1.7 | 0.1 | 1.6 | 0.1 |
| Լիբոսի և Հաճախման հիմնադրամներ | 3.5 | 0.3 | 3.0 | 0.3 | 3.3 | 0.3 |
| **Պետական երաշխիքով վարկեր** | **7.3** | **0.7** | **5.2** | **0.4** | **3.1** | **0.3** |
| **Ընդամենը** | **1097.7** | **100** | **1182.9** | **100.0** | **1099.2** | **100.0** |

Պետական երաշխիքով վարկերի ծավալները շարունակաբար նվազում են. ներկայումս գործում է միայն մեկ նման վարկ, որը 2005 թվականի վերջին կազմել է ընդամենը 3.1 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.1 մլն դոլարով:

2005 թվականին հիմնականում շարունակվել են նախորդ տարիներին կնքված վարկային ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքները, որի պատճառով էլ արտաքին պետական պարտքի օգտագործման ուղղությունները նախորդ տարիների համեմատ գրեթե չեն փոփոխվել՝ տնտեսությունում կառուցվածքային բարեփոխումներ և աղքատության կրճատում (բոլոր վարկերի համարյա կեսը), էներգետիկայի, գյուղատնտեսության, տրանսպորտի և ծառայությունների բնագավառներ:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող՝ արտոնյալ պայմաններով արտաքին պետական վարկերի ներգրավման և ոչ արտոնյալ պայմաններով պարտքերից հրաժարվելու ռազմավարության արդյունք է 1999-2005 թվականներին ընդհանուր պարտքի կառուցվածքում արտոնյալ վարկերի[7] տեսակարար կշռի աճը (մասնավորապես՝ ժամկետայնության աճ և միջին տոկոսադրույքի նվազում): Պետական արտաքին պարտքի ներգրավման պայմանների, այսինքն՝ արտոնյալության մակարդակի լավացում է արձանագրվել նաև 2005 թվականին: Տարվա ընթացքում ներգրավվել են միայն բարձր արտոնյալության մակարդակ ունեցող ֆինանսական միջոցներ: Վերջինս իր արտացոլումն է գտել 2005 թվականի արտաքին պարտքի ներկա արժեքում, որը Հայաստանի արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի անվանական արժեքի համեմատ բավականին փոքր է և կազմում է 737.7 մլն դոլար (նախորդ տարի՝ 722.9 մլն դոլար): Ընդ որում, նախորդ տարվա համեմատ արտաքին պարտքի ներկա արժեքի աճը պայմանավորված է տարվա ընթացքում միջազգային տոկոսադրույքների (CIRR տոկոսադրույք՝ օգտագործվում է արտաքին պարտքի ՆԱ հաշվարկման ժամանակ՝ որպես զեղչման տոկոսադրույք) նվազմամբ (փոքր աճ է գրանցել միայն ԱՄՆ դոլարի տոկոսադրույքը): Այսինքն, եթե արտաքին պարտքի ՆԱ հաշվարկման ժամանակ օգտագործենք 2004 թվականի զեղչման տոկոսադրույքները, ապա արտաքին պարտքի ՆԱ-ն 2005 թվականին, նախորդ տարվա համեմատ, կնվազի և կկազմի մոտ 709.7 մլն դոլար:

*Աղյուսակ 3. ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի տրամադրման պայմանները**

| | 2003 | 2004 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|
| Տոկոսադրույք (%) | 1.4 | 0.9 | 0.8 | 0.9 |
| Մարման ժամկետ (տարի) | 26.4 | 29.5 | 31.1 | 31.5 |
| Գրանտ-էլեմենտ (%) | 51.2 | 51.3 | 55.2 | 52.9 |
| Արտոնյալ վարկեր (% ամբողջ պարտքի մեջ) | 82.5 | 92.7 | 97.3 | 98.0 |
| Հաստատագրված տոկոսադրույքով վարկեր (% ամբողջ պարտքի մեջ) | 87.6 | 92.6 | 96.8 | 97.7 |

** Հաշվարկված են միջին կշռված ցուցանիշների հիման վրա:*

[7] *Արտաքին պարտքը համարվում է արտոնյալ, եթե տրամադրված է ցածր տոկոսադրույքով, երկարաժամկետ է, և գրանտ-էլեմենտը մեծ է 25%-ից (գրանտ - էլեմենտը արտաքին պարտքի անվանական ծավալների և ներկա արժեքի տարբերության և արտաքին պարտքի անվանական ծավալների հարաբերությունն է /%/)*

Սովորաբար արտաքին պարտքի բեռի գնահատման համար արտաքին պարտքը դիտարկում են մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների հետ հարաբերության մեջ: Արտաքին պարտքի հարաբերական ցուցանիշները արտաքին պարտքի սպասարկման հետ կապված հնարավոր ռիսկերի բնութագրիչներ են: Այդ ցուցանիշների միջոցով գնահատվում է երկրի վճարունակության և իրացվելիության մակարդակը, դրանք օժանդակում են արտաքին պարտքի արդյունավետ կառավարմանը: Արտաքին պարտքի բեռի գնահատման համար Համաշխարհային բանկն օգտագործում է արտաքին պարտք/ՀՆԱ, արտաքին պարտքի ՆԱ/ՀՆԱ, արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում, արտաքին պարտքի ՆԱ/ապրանքների և ծառայությունների արտահանում հարաբերությունները:

*Աղյուսակ 4. Արտաքին պարտքի[8] բեռի գնահատման ցուցանիշները և դրանց թույլատրելի սահմանները (ըստ Համաշխարհային բանկի)*

| Ցուցանիշներ | Պարտքի ծանր բեռ | Պարտքի միջին բեռ | Պարտքի թեթև բեռ |
|---|---|---|---|
| Արտաքին պարտքի ՆԱ/ ապրանքների և ծառայությունների արտահանում | 220%-ից բարձր | 132-220% | 132%-ից ցածր |
| Արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում | 275%-ից բարձր[9] | - | - |
| Արտաքին պարտքի ՆԱ /ՀԱԱ | 80% -ից բարձր | 48-80% | 48% -ից ցածր |
| Արտաքին պարտք /ՀՆԱ | 50%-ից բարձր[12] | - | - |

Նշված հարաբերությունների և դրանց թույլատրելի սահմանների օգնությամբ Համաշխարհային բանկը դասակարգումն[10] իրականացնում է ըստ երկրների արտաքին պարտքի բեռի ծանրության, ընդ որում՝ երկրները խմբավորվում են ըստ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամտի չափի: Այդ դասակարգման համաձայն՝ նախկին ԽՍՀՄ երկրների արտաքին պարտքի բեռի ծանրության աստիճանը ներկայացված է աղյուսակ 5-ում:

*Աղյուսակ 5. Համաշխարհային բանկի կողմից նախկին ԽՍՀՄ երկրների դասակարգումը ըստ եկամտի մակարդակի և պարտքի բեռի ծանրության (օգտագործված են 2002-2004 թվականների միջին ցուցանիշները)[11]*

| 1. Միջին եկամտով երկրներ (մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ն 826-ից 10,065 ԱՄՆ դոլար միջակայքում է) | | | 2. Ցածր եկամտով երկրներ (մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ն փոքր է 826 ԱՄՆ դոլարից) | | |
|---|---|---|---|---|---|
| Պարտքի ծանր բեռով | Պարտքի միջին բեռով | Պարտքի թեթև բեռով | Պարտքի ծանր բեռով | Պարտքի միջին բեռով | Պարտքի թեթև բեռով |
| Էստոնիա | Լիտվա | Բելառուս | Ղրղզստան | Ուզբեկստան | |
| Լատվիա | Ռուսաստան | Վրաստան | Տաջիկստան | Մոլդովա | |
| Ղազախստան | *Թուրքմենստան* | **Հայաստան** | | | |
| | | Ադրբեջան | | | |
| | | Ուկրաինա | | | |

2005 թվականին զգալի ավելացել է Ղազախստանի արտաքին պարտքը՝ 30.0 %-ով կամ 9.5 մլրդ դոլարով՝ պայմանավորված մասնավոր հատվածի պարտավորությունների աճով՝ 10.6 մլրդ դոլարով, իսկ պետական հատվածի պարտավորությունները նվազել են մոտ 400 մլն դոլարով: Նման աճ գրանցվել էր նաև 2004 թվականին, ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ նախկին ԽՍՀՄ երկրներից վատացել էր միայն Ղազախստանի արտաքին պարտքի վիճակը, ինչի հետևանքով այն արտաքին պարտքի միջին բեռով երկրից վերադասակարգվել էր որպես արտաքին պարտքի ծանր բեռով երկիր:

Միջին եկամտով և պարտքի ծանր բեռով մյուս երկու երկրներում՝ Էստոնիայում և Լատվիայում, նախորդ տարվա համեմատ պահպանվել է արտաքին պարտքի նույն կառուցվածքը՝ արտաքին պարտքի հիմնական մասը կազմել է առևտրային բանկերի և մասնավոր հատվածի արտաքին պարտքը (84.9%՝ Լատվիայում և 81.2%՝ Էստոնիայում): Հետևաբար, արտաքին պարտքը այս երկրներում հիմնականում

*[8] Արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշների հաշվարկի համար Համաշխարհային բանկը, բացի պարտքի ՆԱ-ից, օգտագործում է նաև պարտքի անվանական ծավալները, քանի որ մի շարք երկրների համար հնարավոր չէ հաշվարկել արտաքին պարտքի ՆԱ-ն՝ արտաքին պարտքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության բացակայության պատճառով:*

*[9] Այս ցուցանիշի գծով Համաշխարհային բանկն ունի միայն առավելագույն սահման:*


*[10] «Համաշխարհային բանկի վարկառուների հաշվետվությունների համակարգին» (DRS) տվյալներ են տրամադրում 136 երկրներ (այդ թվում՝ Հայաստանը):*

*[11] Օգտագործված են Համաշխարհային բանկի կողմից 2005 թվականին հրատարակված «Գլոբալ զարգացման ֆինանսավորում» (Global Development Finance.) տեղեկագրի տվյալները:*

ավելացել է այդ երկու հատվածների արտաքին պարտավորությունների աճի հաշվին: 2005 թվականին Լատվիայի արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ աճել է 2124 մլն դոլարով, որից բանկային համակարգի և մասնավոր հատվածի արտաքին պարտքի աճը կազմել է 2072 մլն դոլար, իսկ Էստոնիայի արտաքին պարտքը աճել է 1235 մլն դոլարով, որից բանկային համակարգի և մասնավոր հատվածի արտաքին պարտքի աճը կազմել է 1459 մլն դոլար (արտաքին պարտքի մնացած հոդվածները, այդ թվում՝ միջֆիրմային վարկերը նվազել են):

Դեռևս շարունակում է պարտքի ծանր բեռով երկիր մնալ Ղրղզստանը, որի ցուցանիշները, սակայն, որոշ չափով բարելավվել են նախորդ տարվա ընթացքում: Նախ, ի տարբերություն նախորդ 4 տարիների, 2005 թվականին առաջին անգամ կրճատվել է պարտքի բացարձակ մեծությունը: Երկրորդ, 2005 թվականին Փարիզյան ակումբում էվիանյան պայմաններով իրականացվել է արտաքին պարտքի ևս մեկ վերածնակերպում (նախորդ վերածնակերպումը իրականացվել էր 2002 թվականին՝ Հյուստոնյան պայմաններով): 2005 թվականին Ղրղզստանի արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ նվազել է 109 մլն դոլարով և կազմել 2001 մլն դոլար. պետական հատվածի արտաքին պարտքը նվազել է 99 մլն դոլարով, իսկ բանկային համակարգի ու մասնավոր հատվածի արտաքին պարտքը՝ 10 մլն դոլարով: Ղրղզստանում արտաքին պարտքի խնդիրները կապված են պետական արտաքին պարտքի հետ, որը 2005 թվականին կազմել է ամբողջ պարտքի 92.9%-ը կամ 1860.2 մլն դոլար: 2005 թվականին Ղրղզստանի պետական հատվածի հիմնական վարկատուներն են հանդիսացել միջազգային կազմակերպությունները, մասնավորապես՝ Համաշխարհային բանկը, Ասիական զարգացման բանկը, ԱՄՀ-ն, Եվրոպական բանկը:

*Նախկին ԽՍՀՄ երկրների արտաքին պարտքի կառուցվածքը 2005 թվականին (%)*




**Ադրբեջանը և Վրաստանը չեն ներառվել, քանի որ մասնավոր հատվածի պարտքի վերաբերյալ տվյալներ չկան:*

Արտաքին պարտքի իրացվելիությունը գնահատող արտաքին պարտքի և ապրանքների ու ծառայությունների արտահանում հարաբերակցությունը նախկին ԽՍՀՄ երկրների համար 2003-2005 թվականներին ունեցել է հետևյալ դինամիկան:

*Աղյուսակ 6. Արտաքին պետական և պետական երաշխիքով պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում (առավելագույն սահմանը՝ 275%)*

| Երկիր | 2003 | 2004 | 2005 | Միջին (2003-2005) |
|---|---|---|---|---|
| Էստոնիա | 5.0 | 4.5 | 2.7 | 4.1 |
| Լատվիա | 15.7 | 18.8 | 13.4 | 16.0 |
| Լիտվա | 27.5 | 25.2 | 19.4 | 24.0 |
| **Հայաստան** | **121.5** | **120.1** | **82.2** | **107.9** |
| Ղազախստան | 24.2 | 12.1 | 5.8 | 14.0 |
| Ղրղզստան | 238.0 | 207.5 | 195.2 | 213.6 |
| Մոլդովա | 95.4 | 67.1 | 49.3 | 70.6 |
| Ռուսաստան | 69.5 | 51.6 | 30.7 | 50.6 |
| Վրաստան | 137.7 | 108.0 | 76.1 | 107.3 |
| Ուկրաինա | 37.5 | 32.5 | 30.8 | 33.6 |
| **Միջին** | **77.2** | **64.7** | **50.6** | **64.2** |

2003 - 2005 թվականներին նախկին ԽՍՀՄ երկրներում նշված ցուցանիշը չի գերազանցել առավելագույն սահմանը, թեև Ղրղզստանում, Հայաստանում այն բավականին բարձր է: Ընդ որում, Հայաստանի արտաքին պետական պարտքի իրացվելիությունը գնահատող ցուցանիշները զգալիորեն փոխվում են, երբ ապրանքների արտահանումը դիտարկվում է առանց գերակայող ապրանքախմբերից որևէ մեկի: Եթե նախորդ տարիներին միայն «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբն էր, որ զգալիորեն մեծացնում էր արտահանման կենտրոնացվածությունը, ապա 2005 թվականին, «Ոչ թանկարժեք մետաղներ, դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ծավալների աճով պայմանավորված, արտահանման մեջ սկսեցին գերակայել արդեն երկու ապրանքախմբեր, ինչի հետևանքով կենտրոնացվածության գործակիցը նախորդ տարվա համեմատ մի փոքր աճել է՝ կազմելով 50.0: Խնդիրն այն է, որ նշված ապրանքախմբի գերակշիռ մաս կազմող մշակված ադամանդի արտահանումը համարվում է վերաարտահանվող ապրանք, նրանից ստացվող հասույթը իրականում միայն այդ ապրանքի մշակման համար կատարվող աշխատանքն է: Հայաստանի արտաքին պետական պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում ցուցանիշը, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների, 2005 թվականի համար կազմել է 109.9%: Նույն ցուցանիշը 2004 թվականին 172.5 % էր:

Նախկին ԽՍՀՄ երկրներից արտահանման բևեռացվածության նման բարձր գործակից ունեն նաև Ղրղզստանը («Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածը), Ռուսաստանը («Հանքահումքային արտադրանք»), Ղազախստանը («Վառելանյութ»), Ուկրաինան («Ոչ թանկարժեք մետաղներ» հոդվածը) և Ադրբեջանը («Նավթ»):

Արտաքին պարտքի կայունությունը գնահատող մյուս ցուցանիշը՝ արտաքին պարտք/ՀՆԱ, 2003-2005 թվականներին նախկին ԽՍՀՄ հանրապետություններում հիմնականում բարելավվել է:

*Աղյուսակ 7. Արտաքին պետական և պետական երաշխիքով պարտք/ՀՆԱ (առավելագույն սահմանը՝ 50%):*

| Երկիր | 2003 | 2004 | 2005 | Միջին (2003-2005) |
|---|---|---|---|---|
| Էստոնիա | 3.7 | 3.5 | 2.3 | 3.1 |
| Լատվիա | 6.7 | 8.2 | 6.3 | 7.1 |
| Լիտվա | 14.3 | 13.3 | 11.3 | 12.9 |
| **Հայաստան** | **38.9** | **32.6** | **22.4** | **31.3** |
| Ղազախստան | 12.1 | 6.5 | 3.2 | 7.3 |
| Ղրղզստան | 91.6 | 88.4 | 76.2 | 85.4 |
| Մոլդովա | 51.0 | 34.1 | 25.8 | 37.0 |
| Ռուսաստան | 24.4 | 18.1 | 10.8 | 17.8 |
| Վրաստան | 43.9 | 33.7 | 25.8 | 34.5 |
| Ուկրաինա | 21.6 | 19.9 | 16.5 | 19.3 |
| **Միջին** | **30.8** | **25.8** | **20.1** | **25.6** |

Արտաքին պետական պարտքի վիճակը բնութագրող արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2005 թվականին, նախորդ տարվա համեմատ, լավացել է բոլոր երկրներում, հատկապես Հայաստանում և Ղրղզստանում:

2005 թվականին, նախորդ տարվա համեմատ, թեթևացել է նաև Մոլդովայի արտաքին պետական պարտքի բեռը: Բացարձակ առումով նվազել է պետական և պետական երաշխավորված պարտքը՝ 106 մլն դոլարով, իսկ մյուս կողմից՝ ավելացել է մասնավոր պարտքը՝ 223 մլն դոլարով: Մոլդովայի արտաքին պարտքի մեջ զգալի են վարկերի ժամկետանց վճարները, որոնք 2005 թվականին ավելացել են և՛ պետական, և՛ մասնավոր հատվածում:

Թեթևացել է Ռուսաստանի արտաքին պարտքի բեռը: 2005 թվականին Ռուսաստանի կառավարությունը, որը նավթի գների աճի հետևանքով արտարժութային միջոցների զգալի ավելցուկ էր կուտակել, որոշում կայացրեց վաղաժամկետ մարել Փարիզյան ակումբին իր պարտքի մի մասը՝ հիմնականում նախկին ԽՍՀՄ պարտքի որոշ մասի մարման հաշվին, ինչը ապագայում կթեթևացնի արտաքին պարտքի սպասարկման բեռը: Ամբողջությամբ մարվել է նաև ԱՄՀ նկատմամբ պարտքը: Այդ պատճառով տարվա ընթացքում արտաքին պետական պարտքի սպասարկումը աճել է ավելի քան երկու անգամ՝ կազմելով

31.2 մլն դոլար՝ նախորդ տարվա 13.4 մլն-ի փոխարեն: Մյուս կողմից, զգալի ավելացել են այլ մասնավոր հատվածի պարտավորությունները՝ 50 մլն դոլարով, ավելի փոքր չափով՝ բանկերի և դրամավարկային կարգավորման մարմինների պարտավորությունները (վերջիններիս պարտավորություններն ավելացել են միջազգային ֆինանսական շուկաներում իրականացված գործառնությունների ակտիվացման արդյունքում, մասնավորապես՝ ռեպո գործառնությունների հաշվին): 2005 թվականի վերջին Ռուսաստանի համախառն արտաքին պարտքը կազմել է 258.5 մլրդ դոլար, որից պետական պարտքը՝ 82.4 մլրդ դոլար կամ ընդհանուր պարտքի 32 %[12]-ը՝ անցյալ տարվա 49.2%-ի փոխարեն: Ընդ որում, նախկին ԽՍՀՄ պարտքը նվազել է 21.6 մլն դոլարով, իսկ նոր պարտքը՝ 2.6 մլն դոլարով:

## Եզրակացություն

Վերջին տարիներին Հայաստանի արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարման արդյունքում զգալիորեն բարելավվել են երկրի արտաքին պարտքի բեռը գնահատող ցուցանիշները, ընդհանուր պարտքի մեջ ավելացել է արտոնյալ պայմաններով ներգրավված արտաքին պարտքի կշիռը, ինչպես նաև չեն կուտակվել ժամկետանց պարտավորություններ: Բացի այդ, արտաքին պարտքի ցուցանիշների վրա դրական ազդեցություն է ունեցել նաև վերջին տարիներին արտահանման և ՀՆԱ ծավալների բարձր աճի տեմպը, ինչը նույնպես հնարավորություն է տվել խուսափելու արտաքին պարտքի խնդիրներից: Հայաստանի արտահանման կենտրոնացվածությունն ըստ ապրանքատեսակների դրսևորում է աճի միտում (մասնավորապես՝ 2005 թվականին «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը կազմել են արտահանման մոտ 69%-ը), ինչն էլ, արտաքին պարտքի իրացվելիության առումով, զգալիորեն մեծացնում է երկրի խոցելիության աստիճանը արտաքին աշխարհի հնարավոր ազդեցությունների նկատմամբ:

Հայաստանի արտաքին պետական պարտքի վիճակի լավացումը երևում է, երբ համադրում ենք նախկին ԽՍՀՄ երկրների արտաքին պետական պարտքի համապատասխան ցուցանիշների հետ: Ընդ որում, դեռևս 2000-2002 թվականներին Հայաստանը, Ղրղզստանը, Վրաստանը, Մոլդովան, Տաջիկստանը և Ուզբեկստանը ԱՊՀ ցածր եկամուտ ունեցող այն երկրներից էին, որոնք ունեին արտաքին պետական պարտքի կայունության խնդիրներ: Սակայն, ներկայումս Հայաստանը ոչ միայն չունի արտաքին պարտքի վճարունակության և իրացվելիության խնդիրներ, այլև արտաքին պարտքի բեռը բնութագրող ցուցանիշները, վերոնշյալ երկրների համեմատությամբ, բավականին բարելավվել են:

Ըստ Համաշխարհային բանկի դասակարգման՝ 2005 թվականին Հայաստանը համարվել է միջին եկամտով երկիր, ինչը վկայում է, որ Համաշխարհային բանկի կողմից Հայաստանին արտոնյալ պայմաններով տրամադրվող վարկերն արդեն փոխարինվելու են ոչ արտոնյալ պայմաններով տրամադրվող վարկերի: Մասնավորապես, համաձայն Համաշխարհային բանկի կողմից Հայաստանում իրականացվող ռազմավարության՝ 2005-2008 թվականներին Հայաստանում իրականացվելու է «Երկրի օժանդակման ռազմավարության» թվով 4-րդ ծրագիրը, որի շրջանակներում Միջազգային զարգացման գործակալությունը (IDA) Հայաստանին տարեկան տրամադրելու է մոտ 45 մլն դոլար: Նախատեսվում է, որ 2008 թվականից Հայաստանին ավելի ցածր արտոնյալության աստիճանով վարկեր է տրամադրելու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (IBRD): Հետևաբար, արտաքին պետական պարտքի կառավարման տեսանկյունից կարևորվում է ապագայում նոր պետական պարտքի ներգրավման ծավալների հնարավորինս կրճատումը: Այսինքն՝ արտաքին պետական պարտքի կառավարման ռազմավարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի արտաքին պարտքի մեջ պետական պարտքի տեսակարար կշռի նվազմանը:

---

[12] *Աղբյուրը՝ Платежной баланс и внешний долг Российской Федерации, Центральный банк Российской Федерации, Москва 2006.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ 2005 ԹՎԱԿԱՆԻՆ*

*Վիճակագրության վարչություն*

**Կ.Կարապետյան, Ա.Դավթյան, Տ.Սարգսյան**

Վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը[1] տվյալ երկրի և արտաքին աշխարհի միջև իրականացված տնտեսական բոլոր գործառնությունների վիճակագրական արտացոլումն է: Եթե վճարային հաշվեկշիռն արտացոլում է ժամանակի որոշակի միավորի ընթացքում՝ 1 տարում իրականացված գործառնությունները, ապա միջազգային ներդրումային դիրքն արտացոլում է նախկինում իրականացված բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքում արտաքին աշխարհի նկատմամբ ձևավորված երկրի ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ժամանակի որոշակի պահի դրությամբ:

Երկրի վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը, վիճակագրական ցուցանիշներ ընդգրկելուց բացի, կարևորագույն բնութագրիչներ են ինչպես տնտեսական քաղաքականություն մշակողների և իրականացնողների, այնպես էլ ներդրողների և ընդհանրապես, տնտեսավարող սուբյեկտների համար: Դա է պատճառը, որ հատկապես վերջին տարիների ֆինանսական ճգնաժամերից հետո բավականին լուրջ ուշադրություն է դարձվում ինչպես վերը նշված ցուցանիշների հավաքագրման վիճակագրության կատարելագործմանը, այնպես էլ առկա ցուցանիշների վերլուծություններին:

ՀՀ ԿԲ-ն ևս դրամավարկային քաղաքականություն իրականացնելիս լուրջ ուշադրություն է դարձնում ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների վարքագծին ու դրանց դինամիկային, որոնք իրենց արտացոլումն են գտնում նաև ՀՀ ԿԲ կողմից պատրաստվող տարբեր նյութերում ու աշխատանքային փաստաթղթերում:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2005 թվականին ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ՝ 2004 թվականի համեմատությամբ աճել է 32 մլն դոլարով կամ 19.6%-ով: Ընդ որում՝ աճել է ընթացիկ հաշվի պակասուրդը ձևավորող հիմնական հոդվածի՝ «Ապրանքների» բացասական հաշվեկշիռը, ինչն էլ ընթացիկ հաշվի պակասուրդի խորացման հիմնական պատճառն է:

Տարվա ընթացքում զգալիորեն ավելացել են ինչպես ՀՀ-ից սեզոնային աշխատանքի մեկնածների ուղարկած միջոցների, այնպես էլ արտերկրներից ստացված մասնավոր տրանսֆերտների ծավալները՝ նպաստելով տնտեսությունում տնօրինվող եկամուտների աճին: Ընդ որում, մի կողմից դրանք ուղղակիորեն նպաստել են ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը, մյուս կողմից՝ եկամուտների աճի միջոցով նպաստել ներմուծման ծավալների աճին: Միևնույն ժամանակ, ներմուծման աճին նպաստել են նաև տարվա ընթացքում գրանցված բարձր տնտեսական աճի արդյունքում եկամուտների զգալի աճը: 2005 թվականին զգալիորեն ավելացել են նաև ուղղակի ներդրումով ձեռնարկությունների եկամուտները, և եկամուտների հաշվեկշռում արտացոլվել է ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների բարձր մակարդակ, որոնց զգալի մասը վերաներդրվել է:

Կապիտալի և ֆինանսական հաշվում զգալիորեն աճել է ֆինանսական հաշիվը: Կապիտալի հաշվում կտրուկ փոփոխություններ չեն գրանցվել:

Տարվա ընթացքում, կապիտալի ու ֆինանսական հաշվի աճի արդյունքում, վերջինս գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը՝ նպաստելով ՀՀ միջազգային պահուստների համալրմանը:

---

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] *Հայաստանում վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վերաբերյալ վիճակագրության պաշտոնական հրապարակողը Ազգային վիճակագրական ծառայությունն է (ԱՎԾ): ՀՀ կենտրոնական բանկը հավաքագրում, ամփոփում, մշակում և ԱՎԾ-ին է ներկայացնում բանկային համակարգին առնչվող տեղեկատվությունը, ինչպես նաև կառավարությանն առնչվող գործառնությունների մի մասը:*

*Աղյուսակ 1. ՀՀ վճարային հաշվեկշիռը 2004-2005 թվականներին (մլն դոլար, վերլուծական ներկայացում)*

| Ցուցանիշներ | 2004 | | | | | 2005 | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I եռ. | II եռ. | III եռ. | IV եռ. | 2004 | I եռ. | II եռ. | III եռ. | IV եռ. | 2005 |
| **Ընթացիկ հաշիվ** | **-76** | **-47** | **-28** | **-11** | **-162** | **-55** | **-49** | **-27** | **-62** | **-193** |
| Ապրանքներ | -102 | -111 | -127 | -118 | -458 | -125 | -130 | -141 | -192 | -588 |
| Արտահանում | 151 | 191 | 172 | 225 | 738 | 206 | 246 | 276 | 276 | 1005 |
| Ներմուծում | -252 | -302 | -299 | -343 | -1196 | -331 | -376 | -417 | -469 | -1593 |
| Ծառայություններ | -18 | -19 | -15 | -19 | -71 | -11 | -15 | -12 | -20 | -59 |
| Արտահանում | 45 | 65 | 71 | 65 | 247 | 62 | 81 | 100 | 89 | 332 |
| Ներմուծում | -63 | -84 | -87 | -84 | -317 | -73 | -96 | -113 | -109 | -391 |
| Եկամուտներ | -3 | 6 | 13 | 21 | 37 | 15 | 5 | 17 | 8 | 45 |
| Եկամուտ աշխատուժից | 20 | 42 | 62 | 55 | 179 | 44 | 45 | 53 | 66 | 208 |
| Եկամուտ ներդրումներից | -23 | -37 | -49 | -34 | -142 | -29 | -40 | -36 | -58 | -163 |
| Ընթացիկ տրանսֆերտներ | 47 | 77 | 102 | 104 | 330 | 66 | 91 | 110 | 143 | 409 |
| Պետական | 8 | 12 | 18 | 23 | 61 | 17 | 11 | 9 | 29 | 67 |
| Մասնավոր | 39 | 65 | 84 | 81 | 269 | 48 | 79 | 100 | 114 | 342 |
| **Կապիտալի և ֆինանսական հաշիվ** *(առանց ԿԲ ՁԱԱ փոփոխության)* | **54** | **38** | **39** | **59** | **190** | **104** | **108** | **82** | **82** | **377** |
| Կապիտալի հաշիվ | 7 | 9 | 11 | 8 | 34 | 13 | 11 | 9 | 18 | 51 |
| Ֆինանսական հաշիվ | 47 | 29 | 28 | 52 | 156 | 91 | 98 | 73 | 64 | 326 |
| Ուղղակի ներդրումներ | 66 | 33 | 55 | 63 | 217 | 43 | 51 | 75 | 83 | 252 |
| Պորտֆելային ներդրումներ | -31 | 26 | 1 | 1 | -3 | -0.5 | -0.7 | -1.4 | 1.1 | -1.6 |
| Այլ ներդրումներ | 12 | -30 | -27 | -12 | -58 | 49 | 47 | 0 | -20 | 76 |
| Ակտիվներ | -20 | -20 | -65 | -37 | -142 | 20 | 30 | -27 | -60 | -36 |
| Կառավարություն | 0 | -1 | -13 | -6 | -20 | 16 | 0 | -18 | -57 | -59 |
| Բանկեր | 1 | -9 | -46 | -8 | -63 | 5 | 12 | 4 | 22 | 42 |
| Այլ հատվածներ | -21 | -10 | -6 | -23 | -60 | -1 | 18 | -13 | -24 | -20 |
| Պարտավորություններ | 32 | -10 | 37 | 25 | 84 | 29 | 17 | 27 | 40 | 112 |
| Կառավարություն | -19 | 2 | 18 | 37 | 38 | 9 | 8 | 16 | 3 | 36 |
| Բանկեր | 36 | -20 | 25 | -9 | 33 | -8 | 17 | 6 | 9 | 24 |
| Այլ հատվածներ | 15 | 7 | -6 | -3 | 13 | 28 | -8 | 5 | 27 | 52 |
| **ԿԲ ՁԱԱ փոփոխություն** | **15** | **11** | **-10** | **-43** | **-27** | -45 | -64 | -56 | -23 | -188 |
| **Սխալներ և բացթողումներ** | **7** | **-1** | **-2** | **-5** | **-1** | -4 | 5 | 1 | 2 | 4 |


## ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

### *Ապրանքների արտահանում*


Ապրանքների արտահանումը (կրեդիտ) 2005 թվականին կազմել է 1004.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 36.1%-ով (FOB գներով արտահանումը կազմել է 973.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 34.7%-ով): Ընդ որում, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի, արտահանումն աճել է 50.5 %-ով՝ նախորդ տարվա 26.5% աճի փոխարեն: 2005 թվականին «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են 37.2 մլն ԱՄՆ դոլարով կամ 12.4%-ով: Նման աճը կապված էր 2004 թվականին, նախորդ տարվա համեմատ, տվյալ ապրանքախմբի արտահանման ծավալների կտրուկ նվազմամբ, որոնք որոշ չափով վերականգնվել են 2005 թվականին: 2004 թվականին այս ապրանքախմբի ցուցանիշի նվազման պատճառը Ռուսաստանի՝ չմշակված ալմաստների շուկայի ազատականացումն էր, որի հետևանքով բարձրացան այդ երկրից ներմուծվող հումքի գները, ինչպես նաև հնարավոր դարձավ չմշակված ալմաստներն արտահանել այլ՝ Հայաստանի համեմատ ավելի էժան աշխատուժ ունեցող երկրներ և մշակել դրանք այնտեղ:

2005 թվականին կտրուկ ավելացել են «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները՝ պայմանավորված միջազգային շուկայում ոչ թանկարժեք մետաղների գների աճով: Այսպես օրինակ՝ սև մետաղների գները բարձրացել են մոտ 20 %-ով, իսկ պղնձինը՝ մոտ 28 %-ով: Դրա շնորհիվ աճել է երկաթամիահալվածքի, պղնձի և մոլիբդենի արտահանումը: Առանց վերոնշյալ ապրանքախմբի արտահանման ծավալները հաշվի առնելու՝ արտահանումն աճել է ընդամենը 12.5%-ով: Վերը նշված միտումներով պայմանավորված՝ 2005 թվականին աճել է արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման[2] ցուցանիշը՝ կազմելով 50.0% (նախորդ տարի՝ 49.1%), հիմնականում արտահանման մեջ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի տեսակարար կշռի աճի հաշվին: Բևեռացումը դեռևս բարձր է, ինչի մասին է վկայում այն փաստը, որ 2005 թվականին 3 հիմնական ապրանքախմբեր կազմել են ամբողջ արտահանման 77.5%-ը:

***«Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի և այլ ապրանքախմբերի արտահանման դինամիկան***




***Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի***




[2] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K = \frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100, \text{ որտեղ՝}$$

*K-ն բևեռացման գործակիցն է, $x_i$-ը՝ i ապրանքի արտահանման (ներմուծման) ծավալը, X–ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը: Մեկ ապրանքի արտահանման (ներմուծման) դեպքում ցուցանիշը հավասար կլինի 100%-ի. որքան ապրանքախմբերի թվաքանակը մեծ է, այնքան բևեռացման ցուցանիշը փոքր է:*


*Աղյուսակ 2. Արտահանման ապրանքային և աշխարհագրական բևեռացում (%)*

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|
| Ապրանքային բևեռացում | 47.2 | 43.8 | 54.4 | 54.9 | 49.1 | 50.0 |
| Աշխարհագրական բևեռացում | 34.8 | 31.6 | 33.0 | 34.1 | 30.3 | 31.8 |

2005 թվականին արձանագրվել է նաև արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշի[3] աճ՝ 31.8 %՝ նախորդ տարվա 30.3%-ի փոխարեն:

2005 թվականին ԱՊՀ անդամ երկրներից ավելացել են Ռուսաստան՝ 41.1 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են ոգելից խմիչքներ, թանկարժեք քարեր և մետաղներ, էլեկտրական մեքենաներ, արհեստական կաուչուկ և այլն), Վրաստան՝ 17.8 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են էլեկտրաէներգիա, ցեմենտ և սուրճ) արտահանվող ապրանքների ծավալները: Այլ երկրներից կտրուկ աճել են արտահանման ծավալները Նիդեռլանդներ՝ 106.8 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են երկաթամիահալվածք, ինչպես նաև այլ ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից արտադրանք), Գերմանիա՝ 68.9 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են ոչ թանկարժեք մետաղներ, դրանցից իրեր և դրանց հանքանյութեր), Բելգիա՝ 16.7 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են թանկարժեք քարեր և մետաղներ, ինչպես նաև որոշ չափով՝ ոչ թանկարժեք մետաղներ, դրանցից իրեր), Իսրայել՝ 13.9 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է ադամանդ), Կանադա՝ 3.3 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են թանկարժեք քարեր, մետաղներ): Մյուս կողմից՝ կտրուկ նվազել են արտահանման ծավալները Չինաստան՝ 12.5 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են մոլիբդենի հանքաքար և խտանյութ), Շվեյցարիա՝ 10.7 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են կիսամշակ և անմշակ ոսկի, երկաթամիահալվածք, պղնձի հանքանյութ) և ԱՄՆ՝ 8.4 մլն դոլարով (արտահանվում են ոսկերչական իրեր, ոսկի, նիկելի արտադրանք): Ավելի փոքր չափով նվազել են արտահանման ծավալները Իտալիա, Իրան և Մեծ Բրիտանիա:

*Արտահանման կառուցվածքը ըստ հիմնական երկրների (2005 թ.)*




[3] Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$K=\frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100,$$ որտեղ՝

*K-ն բևեռացման գործակիցն է,*
*$X_i$-ը՝ արտահանման (ներմուծման) ծավալն է i երկիր,*
*X –ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը:*

*Աղյուսակ 3. Ըստ ապրանքների արտահանման բևեռացման ցուցանիշը (%)*[4]

| Երկիր | 2004 | 2005 |
|---|---|---|
| Ադրբեջան | 82.5 | 77.3 |
| Լիտվա | 34.8 | 26.9 |
| Հայաստան | 49.1 | 50.0 |
| Ղրղզստան | 47.7 | 41.6 |
| Մոլդովա | 42.8 | 43.6 |
| Ռուսաստան | 60.1 | 66.1 |
| Ուկրաինա | 44.9 | 45.9 |
| ***Միջին*** | ***51.7*** | ***50.2*** |

*Աղյուսակ 4. Արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը (%)*

| Երկիր | 2004 | 2005 |
|---|---|---|
| Ադրբեջան | 47.2 | 36.1 |
| Լիտվա | 25.1 | 26.9 |
| Հայաստան | 30.3 | 31.8 |
| Ղրղզստան | 40.7 | 39.6 |
| Մոլդովա | 44.7 | 43.2 |
| Ռուսաստան | 28.0 | 22.3 |
| Ուկրաինա | 22.8 | 34.5 |
| ***Միջին*** | ***33.2*** | ***33.5*** |

Հայաստանի ապրանքային բևեռացման ցուցանիշը, ի տարբերություն աշխարհագրական բևեռացման ցուցանիշի, ցածր է նախկին ԽՍՀՄ երկրների համարժեք ցուցանիշի միջին արժեքից (աղյուսակ 3, 4): ԱՊՀ այլ երկրներից հատկապես բարձր է Ադրբեջանի՝ ըստ ապրանքների բևեռացման ցուցանիշը: Դա պայմանավորված է «Հանքահումքային մթերքների» արտահանման զգալի ծավալներով (հիմնականում՝ նավթ, նավթամթերքներ), ինչը կազմում է ամբողջ արտահանման 77%-ը, իսկ արտահանվող ապրանքների 31.1%-ը արտահանվում է Իտալիա՝ հանգեցնելով արտահանման աշխարհագրական բևեռացման համեմատաբար բարձր մակարդակի: Բարձր է նաև Ռուսաստանի արտահանման ապրանքային կենտրոնացվածությունը, ինչը նույնպես հետևանք է «Հանքահումքային ապրանքներ» ապրանքախմբի արտահանման մեծ ծավալների (հիմնականում՝ էներգակիրներ): Նշված ապրանքախումբը կազմում է արտահանման 64.6%-ը: Ուկրաինայում արտահանման մեջ մեծ կշիռ ունեն «Ոչ թանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրերը», որոնք 2005 թվականին կազմել են արտահանման 41%-ը: Ղրղզստանում մեծ կշիռ ունեն «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները (հիմնականում՝ ոսկի)՝ ընդհանուր արտահանման մոտ 35.1 %-ը, ինչպես նաև վառելիքի արտահանումը: Ղրղզստանի հիմնական գործընկեր երկիրը ԱՄԷ-ն, որին բաժին է ընկնում արտահանման մոտ 26 %-ը, մեծ են նաև Ռուսաստան և Ղազախստան արտահանման ծավալները: Նշված գործոնների հետևանքով Ղրղզստանում համեմատաբար մեծ է ինչպես ըստ ապրանքների, այնպես էլ ըստ աշխարհագրական բաշխվածության բևեռացումը: Մոլդովայում ևս զգալի է ինչպես ըստ ապրանքախմբերի, այնպես էլ ըստ երկրների արտահանման բևեռացման ցուցանիշը: Այստեղ արտահանման ծավալների մոտ 66%-ը կազմում են 3 ապրանքախմբեր՝ պատրաստի սննդամթերք, այդ թվում՝ խմիչքներ, մանածագործական արտադրանք և բուսական ծագման արտադրանք: Արտահանվող ապրանքների շուրջ 59.7%-ը արտահանվում է 3 երկրներ՝ Ռուսաստան (31.9%), Իտալիա (12.2%) և Ռումինիա (10.2%):

### *Ապրանքների ներմուծում*

2005 թվականին ներմուծումը (դեբետ) կազմել է 1,592.8 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 33.1%-ով (CIF գներով ներմուծումը՝ 1,801.7 մլն դոլար, նախորդ տարվա համեմատ աճել է 33.4%-ով): Տարվա ընթացքում ավելացել են հիմնականում «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»՝ 96.9

[4] *Նշված երկրների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ԱՄՀ-ի IFS ամսական պարբերականից և համապատասխան երկրների կենտրոնական բանկերի և ազգային վիճակագրական ծառայությունների՝ INTERNET-ում տեղադրված տնային էջերից:*

մլն դոլարով, «Հանքահումքային մթերքներ»՝ 88 մլն դոլարով, «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ»՝ 59.2 մլն դոլարով, «Պատրաստի սննդի արտադրանք»՝ 33.3 մլն դոլալով, ապրանքախմբերի ներմուծման ծավալները: Զգալի աճել են նաև «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Ոչ թանկարժեք մետաղներ, դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալները՝ համապատասխանաբար՝ 56.1 մլն դոլարով և 33.3 մլն դոլարով: Նվազել է «Բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբի ներմուծման ծավալը՝ 10.6 մլն դոլարով:


Ի տարբերություն արտահանման, ներմուծվող ապրանքախմբերի ցրվածությունն ավելի բարձր է: Այդ է վկայում նաև արտահանման նկատմամբ ներմուծման համեմատաբար ցածր բևեռացման ցուցանիշը, ինչը նախորդ տարվա համեմատությամբ մի փոքր նվազել է՝ կազմելով 32.9%: Բևեռացման ցածր ցուցանիշը հետևանք է այն բանի, որ տարիների ընթացքում ավելանում է Հայաստան ապրանքներ ներմուծող գործընկեր երկրների թիվը՝ նվազեցնելով երկրի կախվածությունը այս կամ այն երկրի անբարենպաստ տնտեսական միջավայրի հնարավոր ազդեցություններից:

2005 թվականին, նախորդ տարվա համեմատ, մի փոքր աճել է ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը և կազմել 24.7%:

*Աղյուսակ 5. Ներմուծման ապրանքային և աշխարհագրական բևեռացում (%)*

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|
| Ապրանքային բևեռացում | 33.1 | 32.0 | 33.6 | 35.0 | 33.0 | 32.9 |
| Աշխարհագրական բևեռացում | 27.7 | 28.6 | 27.7 | 26.6 | 24.5 | 24.7 |

*Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի*




ԱՊՀ անդամ երկրներից ներմուծումը զգալի ավելացել է Ուկրաինայից (հիմնականում ներմուծվում են սիգարետներ և սիգարներ, սև մետաղներ)՝ 44.7 մլն դոլարով, Եվրոմիության անդամ երկրներից՝ Գերմանիայից (հիմնականում ներմուծվում են ծխախոտ, տարբեր սարքեր, մեքենաներ, դեղամիջոցներ և այլն)՝ 62.2 մլն դոլարով, ինչպես նաև Բելգիայից (հիմնականում ներմուծվում է ադամանդ)՝ 41.9 մլն դոլարով, Ռումինիայից (հիմնականում ներմուծվում է նավթամթերք)՝ 41.2 մլն դոլարով և Չինաստանից (հիմնականում ներմուծվում են էներգետիկայի ոլորտի ներդրումային ապրանքներ)՝ 27.1 մլն դոլարով[5]:

*[5] Ուկրաինայից, Գերմանիայից, Բելգիայից, Ռումինիայից և Չինաստանից ապրանքների ներմուծումը հաշվարկված է ըստ ծագման երկրի հայտանիշի կազմված տվյալների հիման վրա:*

*Աղյուսակ 6. Ըստ ապրանքների ներմուծման բևեռացման ցուցանիշը (%)*


| Երկիր | 2004 | 2005 |
|---|---|---|
| Ադրբեջան | 40.2 | 40.9 |
| Լիտվա | 34.3 | 35.3 |
| Հայաստան | 33.0 | 32.9 |
| Ղրղզստան | 36.3 | 38.4 |
| Մոլդովա | 32.0 | 32.4 |
| Ռուսաստան | 48.7 | 51.0 |
| Ուկրաինա | 43.6 | 40.4 |
| ***Միջին*** | ***38.3*** | ***38.7*** |

*Աղյուսակ 7. Ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը (%)*

| Երկիր | 2004 | 2005 |
|---|---|---|
| Ադրբեջան | 25.9 | 24.6 |
| Լիտվա | 32.8 | 35.3 |
| Հայաստան | 24.5 | 24.7 |
| Ղրղզստան | 41.8 | 43.1 |
| Մոլդովա | 39.0 | 38.2 |
| Ռուսաստան | 24.4 | 23.9 |
| Ուկրաինա | 43.2 | 45.6 |
| ***Միջին*** | ***33.1*** | ***33.6*** |

Աղյուսակներում ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ, ի տարբերություն արտահանման, ներմուծման ապրանքային բևեռացումը ներկայացված երկրներում բավականին ցածր է: Բացառություն են կազմում ըստ ապրանքախմբերի ներմուծումը Ռուսաստանում, Ուկրաինայում և Ադրբեջանում: Ռուսաստանում դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ներմուծման ծավալների մոտ 78.1%-ը կազմում են մեքենա-սարքավորումները, պարենային ապրանքները և քիմիական ու հարակից ճյուղերի արտադրանքը, Ուկրաինայում 49.6%-ը կազմում է հանքահումքային մթերքների ու մեքենասարքավորումների ներմուծումը, Ադրբեջանում 60.2%-ը կազմում են մեքենասարքավորումները, ոչ թանկարժեք մետաղներն ու հանքահումքային մթերքները: Ինչ վերաբերում է ներմուծման աշխարհագրական բևեռացմանը, ապա Ուկրաինայում ներմուծման 35.5%-ը իրականացվում է Ռուսաստանից, Ղրղզստանի ներմուծման 50.1 %-ը կատարվում է Ռուսաստանից և Ղազախստանից, ինչի հետևանքով էլ մեծ են նշված երկրների ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշները:

*Ներմուծման կառուցվածքը ըստ հիմնական երկրների (2005 թ.)*



Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը՝ ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը 2005 թվականին նվազել է ապրանքների ու ծառայությունների ներմուծման աճի տեմպերի նկատմամբ համախառն ներքին արդյունքի առաջանցիկ աճի հետևանքով: Ընդ որում՝ դոլարային արտահայտությամբ համախառն ներքին արդյունքի աճը զգալիորեն գերազանցել է դրամային արտահայտությամբ համախառն ներքին արդյունքի աճը՝ պայմանավորված դրամի 14.2 %-ով արժեքավորմամբ: Ուսումնասիրված երկրներում ևս գրանցվել են ԱՄՆ դոլարի նկատմամբ ազգային արժույթների արժեքավորման միտումներ, սակայն որոշ երկրներում ապրանքների ու ծառայությունների աճի տեմպերը գերազանցել են արժեքավորման աճի տեմպերը, հետևաբար նաև՝ դոլարային արտահայտությամբ ՀՆԱ աճի տեմպերը, և նշված երկրներում ավելացել է ներմուծման նկատմամբ միջին հակվածությունը: Օրինակ՝ Ռուսաստանում, Ադրբեջանում և Ուկրաինայում ազգային արժույթի արժեքավորման և ՀՆԱ աճի արդյունքում դոլարային արտահայտությամբ ՀՆԱ աճի տեմպերը զգալի են եղել, ինչն էլ գերազանցել է ապրանքների ու ծառայությունների ներմուծման աճի տեմպերը և հանգեցրել ներմուծման նկատմամբ միջին հակվածության ցուցանիշի նվազմանը:

*Աղյուսակ 8. Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը (%)*

| Երկիր | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|
| Ադրբեջան | 38.4 | 37.3 | 51.3 | 65.6 | 74.1 | 55.8 |
| Էստոնիա | 91.6 | 87.5 | 81.3 | 81.9 | 86.1 | 89.9 |
| Լատվիա | 49.5 | 51.7 | 51.3 | 55.1 | 59.5 | 62.1 |
| Լիտվա | 51.2 | 55.4 | 58.4 | 57.7 | 59.0 | 65.3 |
| Հայաստան | 50.8 | 46.3 | 46.6 | 49.8 | 41.7 | 40.5 |
| Ղազախստան | 49.0 | 49.6 | 47.9 | 44.4 | 44.9 | 45.4 |
| Ղրղզստան | 47.9 | 37.6 | 44.6 | 45.2 | 51.3 | 57.5 |
| Մոլդովա | 75.4 | 73.5 | 77.9 | 87.3 | 82.1 | 93.9 |
| Ռուսաստան | 23.5 | 24.3 | 24.5 | 23.9 | 22.4 | 21.6 |
| Վրաստան | 39.0 | 40.0 | 42.4 | 46.5 | 47.6 | 51.7 |
| Ուկրաինա | 57.4 | 53.8 | 50.7 | 55.2 | 53.7 | 52.7 |
| ***Միջին*** | ***52.2*** | ***50.6*** | ***52.5*** | ***55.7*** | ***56.6*** | **57.8** |

### *Ապրանքների հաշվեկշիռ*

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2005 թվականին կազմել է մոտ 2597.6 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 34.3%-ով: Ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 588 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 28.4%-ով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի ցուցանիշի՝ ապրանքաշրջանառությունը կազմել է 1913.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 42.6 %-ով, իսկ ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 576.6 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 23.8%-ով:

2004-2005 թվականներին, ըստ օգտագործման ուղղությունների, արտահանվող և ներմուծվող ապրանքախմբերի դինամիկան էականորեն չի տարբերվել նախորդ տարվա ցուցանիշներից, թեև կան որոշ քանակական բարելավումներ:

Տվյալները ցույց են տալիս, որ զգալի աճել են տրանսպորտային սարքավորումների, սարքերի և դրանց մասերի ներմուծման ծավալները, ընդ որում՝ այս ապրանքախմբի ներմուծման զգալի մասը իրականացվել է ֆիզիկական անձանց միջոցով: «Արդյունաբերական պաշարներ» ապրանքախմբի արտահանման ծավալների աճը հիմնականում կապված է «Ոչ թանկարժեք մետաղներ, դրանցից իրեր» ապրանքախմբի արտադրանքի ծավալների արտահանման մեծացման հետ:

*Աղյուսակ 9. Արտահանման ու ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի օգտագործման ուղղությունների*[6]

| Ապրանքախումբ | Ծավալ, մլն դոլար | | | | Տեսակարար կշիռը, % | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արտահանում | | Ներմուծում | | Արտահանում | | Ներմուծում | |
| | 2004 | 2005 | 2004 | 2005 | 2004 | 2005 | 2004 | 2005 |
| Սպառողական ապրանքներ | 155.3 | 184.7 | 388.3 | 471.6 | 21.8 | 19.2 | 29.8 | 27.3 |
| *այդ թվում՝* | | | | | | | | |
| Սթերք և խմիչքներ | 76.9 | 109.1 | 219.2 | 246.9 | 10.8 | 11.4 | 16.8 | 14.3 |
| Արդյունաբերական պաշարներ | 510.4 | 716.0 | 507.4 | 659.4 | 71.7 | 74.5 | 38.9 | 38.2 |
| Վառելիք և վառելանյութ | 19.8 | 27.0 | 202.3 | 260.4 | 2.8 | 2.8 | 15.5 | 15.1 |
| Կապիտալ ապրանքներ | 23.6 | 29.0 | 137.2 | 226.6 | 3.3 | 3.0 | 10.5 | 13.1 |
| Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր | 3.1 | 3.8 | 67.8 | 107.3 | 0.4 | 0.4 | 5.2 | 6.2 |
| Այլ ապրանքներ | 0.0 | 0.0 | 0.6 | 0.1 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| ***Ընդամենը*** | **712.2** | **960.6** | **1303.7** | **1725.4** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |

2005 թվականին նվազել է տնտեսության բացվածության ցուցանիշը[7] և կազմել 67.7%: Ցուցանիշի զգալի նվազումը պայմանավորված էր ինչպես ՀՆԱ-ի՝ ապրանքների ու ծառայությունների արտաքին շրջաառության համեմատ առաջանցիկ աճի տեմպերով, այնպես էլ դոլարի նկատմամբ դրամի արժեքավորման հետևանքով դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի զգալի աճով: Նշված ցուցանիշի դինամիկան նախկին ԽՍՀՄ երկրներում հիմնականում ունի աճի միտում, թեև մի քանի երկրներում (Ուկրաինա, Ռուսաստան) գրանցվել է ցուցանիշի նվազում:

*Աղյուսակ 10. Բացվածության ցուցանիշ (%)*


| Երկիր | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|
| Ադրբեջան | 78.5 | 78.9 | 95.2 | 107.6 | 123.8 | 122.2 |
| Էստոնիա | 179.4 | 171.2 | 155.5 | 156.2 | 164.3 | 173.4 |
| Լատվիա | 91.6 | 93.3 | 92.3 | 97.4 | 103.3 | 109.3 |
| Լիտվա | 96.1 | 105.4 | 111.4 | 109.4 | 111.8 | 123.5 |
| Հայաստան | 74.2 | 71.8 | 76.0 | 81.8 | 68.9 | 67.7 |
| Ղազախստան | 105.5 | 97.4 | 95.8 | 94.2 | 98.8 | 99.8 |
| Ղրղզստան | 89.8 | 74.2 | 84.3 | 83.6 | 93.9 | 96.5 |
| Մոլդովա | 125.2 | 123.4 | 130.7 | 140.8 | 132.9 | 146.3 |
| Ռուսաստան | 67.6 | 61.3 | 59.5 | 59.0 | 57.4 | 56.7 |
| Վրաստան | 60.8 | 65.3 | 71.7 | 78.4 | 78.8 | 85.6 |
| Ուկրաինա | 119.9 | 109.2 | 105.8 | 112.9 | 115.0 | 106.2 |
| ***Միջին*** | ***99.0*** | ***95.6*** | ***98.0*** | ***101.9*** | ***104.4*** | ***108.1*** |

Ուսումնասիրելով բացվածության ցուցանիշի առանձին բաղադրատարրերի՝ արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները՝ կարելի է նկատել, որ Հայաստանը գտնվում է ոչ այնքան բարենպաստ վիճակում, ավելին, ներմուծում/ՀՆԱ հարաբերությունը ոչ միայն գերազանցում է արտահանում/ՀՆԱ հարաբերությանը, այլև այս ցուցանիշով Հայաստանը զիջում է նշված շատ երկրների: Արտահանում/ՀՆԱ ցուցանիշը միջինը զգալիորեն գերազանցում է ներմուծում/ՀՆԱ ցուցանիշը միայն հումք արտահանող երկրների՝ Ռուսաստանի, Ղազախստանի և Ուկրաինայի դեպքում: Ըստ 2000-2005 թվականներին նախկին ԽՍՀՄ երկրներում արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ միջին ցուցանիշների հիման վրա հաշվարկված տվյալների՝ արտահանում/ՀՆԱ հարաբերակցության մեկ միավոր աճը ներկայացված երկրներում ուղեկցվել է ներմուծում/ՀՆԱ հարաբերակցության մոտ 0.8 միավոր աճով:

[6] *Առանց քաղաքացիների կողմից կազմակերպված առևտրի: Նշենք, որ քաղաքացիների կողմից կատարված առևտրում հատկապես մեծ տեսակարար կշիռ ունի մարդատար ավտոմեքենաների ներմուծումը:*

[7] *Բացվածության ցուցանիշ = (ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գումար ((արտաքին առևտրի շրջանառություն)*100/ՀՆԱ):*


*Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները (միջին 2000-2005թթ. համար) նախկին ԽՍՀՄ երկրներում (%)*




### *Ծառայությունների հաշվեկշիռ*


Տարվա ընթացքում «Ծառայություններ» հոդվածի պակասուրդը բարելավվել է 16.2%-ով՝ կազմելով 59.3 մլն դոլար՝ նախորդ տարվա 70.7 մլն դոլարի փոխարեն: «Ծառայություններ» հոդվածի բացասական հաշվեկշռի նվազումը պայմանավորված է տրանսպորտային ծառայությունների բացասական հաշվեկշռի 6.6 մլն դոլարով կրճատմամբ (6.3 %): Ընդ որում՝ չնայած արտահանման և ներմուծման աճի բարձր տեմպերի հետ կապված բեռնատար տրանսպորտային ծառայություններն ավելացել են 13.1 մլն դոլարով, կտրուկ կրճատվել է օդային տրանսպորտային ծառայությունների բացասական հաշվեկշիռը՝ 22 մլն դոլարով (20.1 %): «Ծառայություններ» հոդվածի կազմում աճել են նաև համակարգչային ծառայությունների, կապի ծառայությունների և ճանապարհորդությունների դրական հաշվեկշիռները՝ համապատասխանաբար 4.7 մլն դոլարով (29 %), 3.4 մլն դոլարով (31 %) և 2.6 մլն դոլարով (12 %):

*Արտահանվող ծառայությունների դինամիկան*




ՀՀ վճարային հաշվեկշռի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները 2005 թվականին ունեցել են դրական մնացորդ՝ հանդիսանալով «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ: Ընդ որում՝ նշված հոդվածների միջոցով ֆինանսավորվել է ապրանքների ու ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի 70.1 %-ը:


*Ներմուծվող ծառայությունների դինամիկան*




### *Եկամուտների հաշվեկշիռ*

«Եկամուտներ» հոդվածը կազմել է 44.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 8 մլն դոլարով: Զգալիորեն ավելացել է գործոնային եկամուտների ներհոսքը՝ հիմնականում սեզոնային աշխատողների եկամուտների ներհոսքի 41.6 մլն դոլարով աճի արդյունքում: 2005 թվականին պաշտոնական պահուստների աճը հանգեցրել է նաև պահուստների կառավարումից ստացվող եկամուտների աճի՝ կազմելով 14.2 մլն դոլար՝ նախորդ տարվա 8 մլն դոլարի փոխարեն: Ընդ որում, նշված հատկապես առաջին գործոնի հետևանքով աճի զգալի մակարդակը գերազանցել է ուղղակի ներդրմամբ ձեռնարկություններում ոչ ռեզիդենտների կողմից ստացված եկամուտների զգալի աճը (169.5 մլն դոլար՝ նախորդ տարվա 138.5 մլն դոլարի փոխարեն): Արդյունքում՝ «Եկամուտներ» հոդվածի հաշվեկշիռը գրանցվել է դրական:

*Եկամուտների հաշվեկշռի դինամիկան*




### Ընթացիկ տրանսֆերտներ

Ընթացիկ տրանսֆերտները կազմել են 409.2 մլն դոլար. նախորդ տարվա համեմատ ավելացել են 78.8 մլն դոլարով: Ընդ որում, ընթացիկ տրանսֆերտների նման ավելացումը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է մասնավոր հատվածի տրանսֆերտներով: Պետական տրանսֆերտներն ավելացել են ընդամենը 6.4 մլն դոլարով. տարվա ընթացքում կազմել են 67.3 մլն դոլար, որից 33.4 մլն դոլարը մարդասիրական օգնությունն է, 12.9 մլն դոլարը՝ տեխնիկական օգնությունը, իսկ 23.5 մլն դոլարը՝ ֆինանսական օգնությունը: Մասնավոր տրանսֆերտները կազմել են 341.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 26.9%-ով:

Ըստ վճարային հաշվեկշռի, 2005 թվականին ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների՝ ընթացիկ մասնավոր տրանսֆերտների ու սեզոնային աշխատողների կողմից փոխանցված


աշխատավարձերի ներհոսքը կազմել է 741 մլն դոլար, իսկ արտահոսքը՝ 191 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով համապատասխանաբար 19% և 11 %-ով: Փոխանցումների ինչպես ներհոսքում, այնպես էլ արտահոսքում զգալի կշիռ ունեն Ռուսաստանն ու ԱՄՆ-ը. ներհոսքում համապատասխանաբար 72% և 14%, իսկ արտահոսքում՝ 44% և 16%: Նշված միջոցներից բանկային համակարգով ստացվել է շուրջ 752.8 մլն դոլար[8], և դուրս է փոխանցվել 190 մլն դոլար, այսինքն՝ նշված հոդվածներում արտացոլվել են միայն բանկային համակարգով ստացված կամ փոխանցված միջոցները: Հարկ է նշել, սակայն, որ միայն բանկային համակարգով նման փոխանցումների վերաբերյալ տեղեկատվության ընդգրկմամբ զգալիորեն թերհաշվառվում են ոչ առևտրային նպատակով ՀՀ տնտեսության կողմից արտերկրներից ստացվող դրամական փոխանցումների իրական ծավալները, քանի որ ՀՀ տնտեսությունը արտերկրներից նման միջոցներ ստանում է նաև այլ ճանապարհներով, մասնավորապես՝ կանխիկ տեսքով, տարբեր կազմակերպությունների միջոցով և այլն: Հետևաբար, նշված մասի գնահատումը կարևոր նշանակություն կարող է ունենալ ինչպես ոչ առևտրային նպատակով ստացված փոխանցումների իրական ծավալների, այնպես էլ ՀՀ վճարային հաշվեկշռի ընդհանուր իրական պատկերի արտացոլման տեսանկյունից:

Ոչ առևտրային բնույթի փոխանցումների մեծ ներհոսք ունեն նաև նախկին ԽՍՀՄ մի շարք այլ երկրներ՝ պայմանավորված արտասահմանում ապրող միգրանտների և սեզոնային աշխատողների մեծ թվաքանակով: Մասնավորապես, նման երկրների շարքն են դասվում Մոլդովան, Ղրղզստանը և այլն, որտեղ ստացված ոչ առևտրային բնույթի փոխանցումները 2005 թվականին կազմել են համապատասխանաբար 976.5 մլն դոլար, 291.6 մլն դոլար, ՀՆԱ-ում՝ 33.5%, 11.9%: Հայաստանում այս ցուցանիշը կազմել է 11.2%:

***Աղյուսակ 11. Մասնավոր հատվածի ընթացիկ տրանսֆերտների և սեզոնային աշխատողների աշխատավարձերի (զուտ) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)***

| Երկիր | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|
| Հայաստան | 8.1 | 9.4 | 10.4 | 12.5 | 11.2 |
| Ղրղզստան | 0.6 | 1.5 | 4.2 | 7.7 | 11.9 |
| Մոլդովա | 18.3 | 19.8 | 27.2 | 29.0 | 33.5 |
| ***Միջին*** | ***4.0*** | ***4.4*** | ***5.9*** | ***7.0*** | ***8.0*** |

***Ընթացիկ հաշվի տարրերի դինամիկան***




Ընթացիկ հաշվի բաղադրատարրերի՝ վերը նշված դինամիկայի արդյունքում 2005 թվականին 19.6%-ով աճել է ընթացիկ հաշվի պակասուրդը և կազմել 193.3 մլն դոլար, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 3.9%՝ նախորդ տարվա 4.5 %-ի փոխարեն:

Ընթացիկ հաշվի «Եկամուտներ» հոդվածում գրանցվող «Եկամուտներ ուղղակի ներդրումներից» ենթահոդվածում արտացոլվող վերաներդրված եկամուտն իրականում միջոցների արտահոսք չի ենթադրում, այլ պարզապես, ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության, գրանցվում է նշված հոդվածում, որի հակառակ գրանցումը արտացոլվում է ֆինանսական հաշվի «Ուղղակի ներդրումներ» բաժնում:

[8] *Մնացած 11.8 մլն դոլարը ներառված է վճարային հաշվեկշռի կապիտալի հաշվի այլ տրանսֆերտներում:*

Այսինքն՝ քանի որ նշված միջոցները իրականում դուրս չեն գալիս երկրից, վերլուծական նպատակներով կարելի է ընթացիկ հաշվի պակասուրդը դիտարկել նաև առանց նշված՝ «Վերաներդրված եկամուտ» հոդվածի: Արդյունքում՝ ընթացիկ հաշվի պակասուրդը կկազմի 38.5 մլն դոլար, տեսակարար կշիռը ՀՆԱ-ում՝ 0.8%՝ նախորդ տարվա 1.5%-ի փոխարեն:

*Աղյուսակ 12. Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)*


| Երկիր | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|
| Ադրբեջան | -3.2 | -0.9 | -12.6 | -27.8 | -30.4 | 1.3 |
| Էստոնիա | -5.4 | -5.7 | -10.1 | -12.1 | -12.6 | -11.0 |
| Լատվիա | -4.6 | -7.6 | -6.7 | -8.3 | -12.3 | -12.4 |
| Լիտվա | -5.9 | -4.7 | -5.1 | -6.9 | -7.1 | -6.9 |
| Հայաստան | -14.6 | -9.5 | -6.2 | -6.7 | -4.5 | -3.9 |
| Ղազախստան | 2.0 | -6.5 | -4.2 | -0.9 | 1.3 | -0.9 |
| Ղրղզստան | -9.1 | -3.7 | -5.0 | -5.1 | -4.6 | -8.1 |
| Մոլդովա | -8.4 | -2.3 | -4.3 | -6.6 | -4.4 | -9.8 |
| Ռուսաստան | 18.0 | 11.0 | 8.4 | 8.2 | 10.3 | 10.9 |
| Վրաստան | -8.8 | -6.6 | -6.5 | -9.4 | -8.1 | -10.8 |
| Ուկրաինա | 4.7 | 3.7 | 7.5 | 5.8 | 10.5 | 3.1 |
| ***Միջին*** | ***-3.2*** | ***-3.0*** | ***-4.1*** | ***-6.4*** | ***-5.6*** | ***-4.4*** |

Ուսումնասիրելով ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդի տեսակարար կշռի դինամիկան, կարելի է նկատել, որ վերջին տարիներին նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հիմնական մասում նշված ցուցանիշը անկանոն վարքագիծ ունի: Ադրբեջանում, օրինակ, ընթացիկ հաշվի պակասուրդի վերածումը հավելուրդի պայմանավորված էր ապրանքների արտահանման կտրուկ աճով: Մերձբալթյան երկրներում ընթացիկ հաշվի պակասուրդի խորացումը հիմնականում պայմանավորված է ընթացիկ տրանսֆերտների և եկամուտների փոփոխությամբ:

## ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի աճը ուղեկցվել է կապիտալի ու ֆինանսական հաշվում արձանագրված միջոցների ներհոսքի աճով: Վերջինս (առանց ԿԲ զուտ արտաքին ակտիվների փոփոխության) 2005 թվականին կազմել է 377 մլն դոլար՝ նախորդ տարվա 190 մլն դոլարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ աճել է հատկապես ֆինանսական հաշիվը՝ միաժամանակ դրսևորելով զգալի կառուցվածքային փոփոխություններ:

*ՀՀ վճարային հաշվեկշռի կապիտալի ու ֆինանսական հաշվի բաղադրատարրերի դինամիկան 2001-2005 թվականներին*



*Կապիտալի հաշիվ*


Կապիտալի հաշվի հիմնական բաղադրատարր հանդիսացող կապիտալ տրանսֆերտները տարվա ընթացքում կազմել են 50.9 մլն դոլար: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 48.4 %-ով կամ 16.6 մլն դոլարով: Կապիտալ տրանսֆերտների աճը պայմանավորված է այլ հատվածների կապիտալ տրանսֆերտների աճով՝ գրեթե 55%-ով, մասնավորապես ավելացել են արտերկրներից ստացվող և անշարժ գույքի, հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղված մասնավոր տրանսֆերտները:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

*Ուղղակի ներդրումներ*

2005 թվականին ուղղակի ներդրումները նախորդ տարվա համեմատ ավելացել են 35 մլն դոլարով (16%-ով) և կազմել 251.5 մլն դոլար (զուտ): Ուղղակի ներդրումների մոտ 6.7 մլն դոլարը իրականացվել է արտերկրներում, իսկ 258.2 մլն դոլարը՝ Հայաստանում: Ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի ներդրումները կազմել են 92.9 մլն դոլար՝ նախորդ տարվա 88.6 մլն դոլարի փոխարեն, 155.2 մլն դոլարը նախկինում կատարված ուղղակի ներդրումների արդյունքում ձեռնարկություններում վերաներդրված շահույթն է՝ նախորդ տարի կազմել էր 107.6 մլն դոլար, իսկ մոտ 10 մլն դոլարը միջֆիրմային վարկերն են՝ նախորդ տարի մոտ 23 մլն դոլար: Բաժնետիրական կապիտալում ուղղակի ներդրումների զգալի մասը բաժին է ընկնում սեփականաշնորհված Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանի բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներին: 2005 թվականին ավելացել են նաև բանկային համակարգում ուղղակի ներդրումները՝ կազմելով 35.6 մլն դոլար՝ նախորդ տարվա 19.8 մլն դոլարի փոխարեն:

*Ուղղակի ներդրումների դինամիկան 2001-2005 թթ.*





Ուղղակի ներդրումները տարվա ընթացքում իրականացվել են հիմնականում Գերմանիայի, Հունաստանի և Ֆրանսիայի ներդրողների կողմից (ուղղակի ներդրումների համապատասխանաբար 39.8%, 20.0%-ը և 8.3%-ը ): Ընդ որում, Գերմանիայի ներդրողների կողմից ուղղակի ներդրումներն իրականացվել են հանքագործական արդյունաբերության, Հունաստանից՝ կապի, իսկ Ֆրանսիայից՝ սննդամթերքի (ներառյալ խմիչքները) արտադրության ճյուղերում:

*Աղյուսակ 13 . Ուղղակի ներդրումներ (զուտ) / ՀՆԱ (%)*

| Երկիր | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|
| Ադրբեջան | 4.0 | 17.5 | 31.5 | 27.3 | 3.6 |
| Էստոնիա | 5.7 | 2.2 | 8.2 | 6.0 | 18.2 |
| Լատվիա | 1.4 | 2.7 | 2.4 | 3.9 | 3.1 |
| Լիտվա | 3.6 | 4.9 | 0.8 | 2.3 | 2.7 |
| Հայաստան | 3.3 | 4.7 | 4.3 | 6.0 | 5.1 |
| Ղազախստան | 13.4 | 9.2 | 7.1 | 13.6 | 3.1 |
| Ղրղզստան | -0.1 | 0.3 | 2.4 | 5.5 | 1.7 |
| Մոլդովա | 3.6 | 7.9 | 3.6 | 5.7 | 7.7 |
| Ռուսաստան | 0.1 | 0.0 | -0.4 | 0.4 | 0.2 |
| Ուկրաինա | 2.0 | 1.7 | 2.9 | 2.6 | 9.1 |
| ***Միջին*** | ***3.7*** | ***5.1*** | ***6.3*** | ***7.3*** | ***5.5*** |

Նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի դինամիկան որոշ տարիների բավականին անկանոն վարքագիծ է դրսևորում: Պատճառներից կարելի է նշել այն, որ մեկ խոշոր ներդրումը էապես փոխում է ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը: Այսպես օրինակ՝ 2005թ. էստոնիայի ֆինանսական համակարգում կատարված մեկ խոշոր ներդրումը հանգեցրել է ուղղակի ներդրումների կտրուկ աճի, ինչի արդյունքում ուղղակի ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշը 2005 թվականին կազմել է 18.2%՝ նախորդ տարվա 6%-ի փոխարեն: Ուկրաինայում վերոնշյալ ցուցանիշի կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է պողպատածուլման ոլորտում կատարված ներդրումներով: Մնացած երկրներից կարելի է նշել, օրինակ, Ղազախստանում ցուցանիշի նվազման պատճառը, ինչը հիմնականում պայմանավորված է դրսում կատարված ուղղակի ներդրումների աճով, ընդ որում՝ նշված գործոնով է պայմանավորված նաև երկրների հիմնական մասում նշված հարաբերակցության անկումը:

*Բնակչության 1 շնչին բաժին ընկնող օտարերկրյա ուղղակի ներդրումների (ԱՄՆ դոլար) զուտ ներհոսք 1996-2005 թթ. (կուտակային)*




### *Պորտֆելային ներդրումներ*

2005 թվականին ևս, ինչպես և նախորդ տարիներին, պորտֆելային ներդրումների ծավալները մեծ չեն եղել, և գրանցվել է ընդամենը մոտ 1.6 մլն դոլար զուտ ակտիվների աճ: Պորտֆելային ներդրումների ակտիվային մասում համեմատաբար մեծ կշիռ են ունեցել բանկերի կողմից պարտքային արժեթղթերում, մասնավորապես պարտատոմսերում և պարտամուրհակներում կատարված ներդրումները՝ 2.4 մլն դոլար: Պարտավորությունների մասով համեմատաբար մեծ կշիռ են ունեցել ՀՀ բանկերի կապիտալում ոչ ռեզիդենտների պորտֆելային ներդրումները, որոնք կազմել են 1.3 մլն դոլար: 2005 թվականի վերջի դրությամբ ոչ ռեզիդենտների մասնաբաժինը շրջանառության մեջ գտնվող՝ ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալում կազմել է չնչին գումար:

### *Այլ ներդրումներ*

Վճարային հաշվեկշռի մեթոդաբանության համաձայն՝ «Այլ ներդրումներին» են դասվում այն ֆինանսական հոսքերը, որոնք ֆինանսական հաշվի ուղղակի և պորտֆելային ներդրումներում ներառված չեն: Դրանք դասակարգվում են ըստ հետևյալ հիմնական ֆինանսական գործիքների՝ առևտրային վարկեր, բանկային վարկեր և փոխառություններ, կանխիկ արտարժույթ և ավանդներ, այլ ակտիվներ ու պարտավորություններ:

Պետք է նշել, որ «Այլ ներդրումներ» հոդվածը ավանդաբար հանդիսացել է ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորման կարևոր աղբյուր: Սակայն վերջին տարիներին այս հաշվի մնացորդը դրսևորել է շատ անկայուն վարքագիծ: Այսպես՝ 2004 թվականին այն բացասական էր 59 մլն դոլարով, մինչդեռ 2005 թվականին այս հաշվի մնացորդը աճել է 109 մլն դոլարով և կազմել 50 մլն դոլար:

### *Պետական հատված*

2005 թվականին ՀՀ պետական հատվածի արտաքին պարտավորությունների[9] զուտ աճը գրեթե չի փոխվել. ավելացել են 36.1 մլն դոլարով (նախորդ տարի՝ 38.5 մլն դոլարով):

Ընդ որում, պետական հատվածի վարկերի ներհոսքը տարվա ընթացքում կազմել է 49.7 մլն դոլար՝ նախորդ տարվա 87.7 մլն դոլարի փոխարեն: Ներհոսքի 72.8%-ը կազմել են Համաշխարհային բանկի, 27.1%-ը՝ Գերմանիայի կառավարության տրամադրած վարկերը՝ նախորդ տարվա համապատասխանաբար՝ 94.2 % և 5.7 %-ի փոխարեն:


Տարվա ընթացքում պետական հատվածի վարկերի արտահոսքը (վարկերի մարումը) կազմել է 13.7 մլն դոլար՝ նախորդ տարվա 49.3 մլն դոլարի փոխարեն:

### *Առևտրային բանկեր*

Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվները[10] նվազել են 58.7 մլն դոլարով: Ընդ որում, արտաքին ակտիվները նվազել են 34.6 մլն դոլարով, իսկ պարտավորություններն աճել 24.2 մլն դոլարով: Ակտիվների նման նվազումը պայմանավորված էր 2005 թվականի հունվարի 1-ից արտարժույթով ավանդների դիմաց արտարժույթով պարտադիր պահուստավորման նոր կարգի կիրառմամբ, ինչի արդյունքում տեղի ունեցավ ՀՀ առևտրային բանկերի արտերկրյա բանկերում ներդրված արտարժութային միջոցների տեղափոխում ՀՀ կենտրոնական բանկ: Նշված փոփոխության արդյունքում արտաքին ակտիվների նվազումը կազմել է մոտ 49.5 մլն դոլար: Հետևաբար, կարելի է ասել, որ առանց նշված փոփոխության՝ ակտիվների մոտ 15 մլն դոլարի աճ է գրանցվել:

Պարտավորությունների աճը առավելապես պայմանավորված էր ՀՀ առևտրային բանկերի կողմից ոչ ռեզիդենտ բանկերից ներգրաված վարկերի ծավալների աճով:

*Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվները 2000-2005 թվականներին*




*[9] ՀՀ 2005 թվականի արտաքին պետական պարտքի մանրամասն վերլուծությունը ներկայացված է ՀՀ կենտրոնական բանկի 2005 թվականի II եռամսյակի «Բանբերում» հրատարակված «ՀՀ արտաքին պարտքը 2005 թվականին» հոդվածում:*

*[10] Ի տարբերություն դրամավարկային վիճակագրության, վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության համաձայն, առևտրային բանկերի արտաքին ակտիվներ և պարտավորություններ ձևավորող գործառնությունների փոփոխությունը հաշվարկվում է առանց վերագնահատման և ներառում է ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները:*

Նախկին ԽՍՀՄ երկրներում առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների դինամիկան ցույց է տալիս, որ երկրներում, կախված տարբեր հանգամանքներից, զուտ արտաքին ակտիվների միտումները տարբեր են: Զուտ արտաքին ակտիվների աճ է նկատվում Ադրբեջանում, Ղազախստանում, իսկ մնացած երկրներում հակառակը՝ գրանցվել է զուտ արտաքին ակտիվների նվազում: Վերջին խումբ երկրների, օրինակ Մերձբալթյան երկրների, բանկերը զգալի միջոցներ են ներգրավում արտերկրից: Ռուսաստանի պարագայում առևտրային բանկերի արտաքին պարտավորությունների աճը շարունակվում է արդեն մի քանի տարի:

*Աղյուսակ 14. Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվները (մլն դոլար)11*

| Երկիր | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|
| Ադրբեջան | 289.3 | 98.1 | 100.8 | 115.6 | 116.1 | 112 |
| Էստոնիա | -360.8 | -115.0 | -477.7 | -1432.8 | -2750.0 | -2736.7 |
| Լատվիա | -5.9 | -378.3 | -716.7 | -1383.7 | -2461.8 | -4604.7 |
| Լիտվա | 190.2 | 152.0 | -103.5 | -889.7 | -876.3 | -2420.0 |
| Հայաստան | -25.8 | -15.0 | 28.7 | 70.6 | 112.2 | 52.9 |
| Ղազախստան | 3.8 | -426.2 | -470.4 | -1902.7 | -3690.4 | -6176.5 |
| Ռուսաստան | 7617.6 | 8732.2 | 4959.7 | 1291.9 | -4947.5 | -11997.9 |

### *Մասնավոր հատված (առանց առևտրային բանկերի)*

Տարվա ընթացքում մասնավոր հատվածի այլ ներդրումներն ավելացել են մոտ 29 մլն դոլարով. ակտիվներն ավելացել են՝ 22.2 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 51 մլն դոլարով: Ակտիվների աճը հիմնականում պայմանավորված էր առևտրային վարկերի 24.4 մլն դոլար աճով: Հետագա վճարման պայմանով իրականացված արտահանումը կազմել է ապրանքների արտահանման 2.4%-ը՝ նախորդ տարվա 3.0%-ի փոխարեն:

Պարտավորությունների մասով զգալի է եղել առևտրային վարկերի նվազումը, ինչը կազմել է -0.6 մլն դոլար (նախորդ տարի՝ մոտ 24 մլն դոլար): Հարկ է նշել, որ մինչև 2005 թվականը հետագա վճարման պայմանով ներմուծման ցուցանիշը բավականին մեծ էր և, օրինակ, վերջին երեք տարիներին միջինը կազմում էր ապրանքների ներմուծման մոտ 3%-ը: Հիմնական պատճառը հավանաբար նախկինում կուտակված պարտավորությունների մարումներն են, ինչի արդյունքում զուտ ցուցանիշը բավականին փոքր է գրանցվում: Պարտավորություններում զգալիորեն աճել են մասնավոր հատվածի կողմից ներգրավված վարկերը և կազմել 66.6 մլն դոլար՝ նախորդ տարվա 1.7 մլն դոլար զուտ մարման փոխարեն:

### *Համախառն արտաքին պահուստներ*

Վճարային հաշվեկշռի վերոնշյալ գործառնությունների արդյունքում գրանցված դրական մնացորդի շնորհիվ 162.1 մլն դոլարով ավելացել են ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստները և կազմել 673.7 մլն դոլար[12]: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկը արտարժույթի շուկայից գնել է 102.4 մլն դոլարի արտարժույթ:

Ներմուծման ծածկույթի ցուցանիշը տարվա ընթացքում կազմել է 4.1՝ մի փոքր նվազելով նախորդ տարվա մակարդակից: Նվազման պատճառը ապրանքների ու ծառայությունների ներմուծման աճի տեմպերի գերազանցումն է համախառն արտաքին պահուստների աճի տեմպերից: Թեև 2005 թվականին նշված ցուցանիշի նվազմանը, այնուամենայնիվ այն դեռևս մնում է բարձր միջազգային պրակտիկայում զարգացող երկրների համար որպես այդ ցուցանիշի ընդունելի սահման համարվող 3 ամսվա նշագծից:


Նախկին ԽՍՀՄ անդամ երկրներում 2005 թվականին ամենաբարձր ներմուծման ծածկույթի ցուցանիշը գրանցվել է Ռուսաստանում: Ընդ որում, ցուցանիշի կտրուկ աճը պայմանավորված էր նավթի միջազգային գների բարձրացման արդյունքում Ռուսաստան ներհոսող արտարժութային ակտիվների զգալի ծավալների շնորհիվ համալրվող պահուստների բավականին բարձր մակարդակով:

---


*11 Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների ցուցանիշների աղբյուրը դրամավարկային վիճակագրությունն է, որտեղ ներառված են հաշիվների վերագնահատումը, սակայն ներառված չեն ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները:*

*12 Առանց սեփականաշնորհման հաշվի մնացորդի:*

*Համախառն արտաքին պահուստները և ներմուծման ծածկույթը*




*Ներմուծման ծածկույթի ցուցանիշը 2005 թվականին*




Համախառն արտաքին պահուստների բավարարության գնահատման մյուս կարևորագույն ցուցանիշը դրամային զանգված/համախառն արտաքին պահուստներ ցուցանիշն է, որը ցույց է տալիս, թե ինչպիսին է ամբողջ դրամային զանգվածը արտարժույթով փոխարկելու հնարավորությունը: Նշված ցուցանիշը 2005 թվականին կազմել է 74.0%՝ նախորդ տարվա 54.7%-ի փոխարեն:

*Աղյուսակ 15. Դրամային զանգված / համախառն արտաքին պահուստներ (%)*

| Ցուցանիշ | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|
| Դրամային զանգված/համախառն արտաքին պահուստներ | 44.2 | 45.1 | 49.1 | 46.9 | 54.7 | 74.0 |

*Աղյուսակ 16. Ֆինանսական հաշվի կառուցվածքը (ծավալը՝ մլն ԱՄՆ դոլար)*

| | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|
| Ուղղակի ներդրումներ (զուտ) | 110.7 | 120.5 | 216.5 | 251.5 |
| Պորտֆելային ներդրումներ (զուտ) | 1.5 | 0.3 | -2.9 | -1.6 |
| Այլ ներդրումներ (զուտ) | 53.4 | 27.7 | -59 | 50 |
| Պահուստային ակտիվների փոփոխություն | -81.7 | -46.4 | -26.3 | -162.1 |
| **Ընդամենը** | **84** | **102.2** | **128.3** | **137.8** |

Վճարային հաշվեկշռի «Սխալներ և բացթողումներ» հոդվածի ցուցանիշը 2005 թվականին դրական էր՝ 4.5 մլն դոլար (նախորդ տարի բացասական էր՝ 1.0 մլն դոլարով):

### *Միջազգային ներդրումային դիրք*

2005 թվականի վերջի դրությամբ Հայաստանի զուտ ներդրումային դիրքը, ինչպես նախորդ տարիներին, բացասական էր և կազմել է 1759.4 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 67.8 մլն դոլարով: Ընդ որում, ակտիվներն ավելացել են 152.2 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 220 մլն դոլարով:

Ըստ ներդրումային դիրքի՝ Կառավարության կողմից ներգրավված վարկերի գծով պարտքը 2005 թվականի վերջի դրությամբ կազմել է 903.2 մլն դոլար, իսկ ԿԲ վարկերի գծով պարտավորությունները՝ 196.2 մլն դոլար: Արդյունքում՝ ընդհանուր պարտավորությունների շուրջ 1100.38 մլն դոլարը (38.1%) կազմել են պետության պարտավորությունները, իսկ մնացած 1789.48 մլն ԱՄՆ դոլարը (61.9%)՝ մասնավոր հատվածինը, որի մեջ զգալի են ուղղակի ներդրումներն (71.5%) ու առևտրային վարկերը (9.6%):

ՀՀ ռեզիդենտների կողմից տնօրինվող կանխիկ դրամական միջոցները, ըստ ՀՀ միջազգային ներդրումային դիրքի, կազմել են ընդամենը 25.0 մլն դոլար, մինչդեռ 2005 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից բնակչության կանխիկ արտարժույթի գնահատման նպատակով իրականացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ բնակչության կանխիկ արտարժութային միջոցները կազմում են մոտ 913-1045 մլն դոլար, այսինքն՝ ՀՀ միջազգային ներդրումային դիրքում նշված ցուցանիշը մի քանի տասնյակ անգամ թերագնահատված է: Եթե նշված ցուցանիշը ճշգրտվի հարցումների արդյունքում ստացված ցուցանիշի հիման վրա, ապա որոշակի ճշգրտումների կարիք կունենան նաև վճարային հաշվեկշռի որոշ հոդվածներ, որոնք, ինչպես նշվել է, նույնպես թերհաշվառված են:

*Աղյուսակ 17. Հայաստանի ներդրումային դիրքը 2004-2005 թվականներին (մլն դոլար)*

| Ցուցանիշ | Ներդրումային դիրքը 2004թ. վերջին | Ներդրումային դիրքը 2005թ. վերջին |
|---|---|---|
| **Զուտ ներդրումային դիրքը** | **-1691.5** | **-1759.4** |
| **Ակտիվներ** | **978.3** | **1130.5** |
| Ուղղակի ներդրումներ արտերկրում | 2.7 | 10.3 |
| Պորտֆելային ներդրումներ | 4.6 | 5.9 |
| Այլ ներդրումներ | 421.0 | 440.4 |
| Առևտրային վարկ | 73.1 | 85.1 |
| Վարկեր | 60.1 | 59.1 |
| Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ | 282.5 | 288.6 |
| Այլ ակտիվներ | 5.4 | 7.6 |
| Պահուստային ակտիվներ | 550.0 | 673.9 |
| **Պարտավորություններ** | **2669.9** | **2889.9** |
| Ուղղակի ներդրումներ ՀՀ-ում | 1005.1 | 1279.4 |
| Պորտֆելային ներդրումներ | 4.3 | 4.5 |
| Այլ ներդրումներ | 1660.5 | 1606.0 |
| Առևտրային վարկ | 208.6 | 171.9 |
| Վարկեր | 1294.3 | 1290.2 |
| Դրամավարկային կարգավորման մարմիններ | 240.5 | 196.2 |
| Պետական կառավարման մարմիններ | 942.5 | 903.2 |
| Բանկեր | 22.2 | 37.9 |
| Այլ հատվածներ | 89.1 | 152.9 |
| Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ | 98.3 | 109.5 |
| Այլ պարտավորություններ | 59.4 | 34.4 |

Ամփոփելով 2005 թվականի ընթացքում Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում ձևավորված վճարային հաշվեկշռի առանձին հոդվածների դրսևորած վարքագիծն ու դրանց միտումները՝ կարելի է նշել, որ տարվա ընթացքում որոշ չափով բարելավվել են արտաքին առևտրի՝

նախորդ տարվա ընթացքում գրանցված բացասական միտումները: Մասնավորապես՝ կրկին սկսել են ավելանալ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները: Այս ապրանքախմբի ցուցանիշի նվազումը նախորդ տարի զգալի չափով ազդել էր արտահանման տեմպերի նվազման վրա: Դեռևս բարձր է մնում ապրանքների արտահանման բևեռացման մակարդակը: Որպես դրական երևույթ կարելի է դիտարկել նաև վերջին տարիներին գործընկեր երկրների կազմի փոփոխությունը (հակվածությունը դեպի եվրոպական երկրներ): Դեռևս մեծ են մասնավոր տրանսֆերտների ու սեզոնային աշխատողների աշխատանքի դիմաց ստացվող միջոցների ծավալները (որոնք, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, որոշ չափով թերհաշվառված են) և չնայած զգալիորեն նպաստում են ապրանքների ու ծառայությունների բացասական ճեղքվածքի ֆինանսավորմանը, սակայն, միևնույն ժամանակ, մեծացնում են երկրի խոցելիությունն արտաքին աշխարհի անբարենպաստ միտումների նկատմամբ:

Կապիտալի ու ֆինանսական հաշվում առկա միտումներից կարելի նշել, որ ուղղակի ներդրումներում դեռևս զգալի են պետական հատվածի գործառնությունները: Այլ հատվածների վարքագծից կարելի է եզրահանգել, որ առկա են օտարերկրյա ուղղակի ներդրումների հագեցման միտումներ, և նոր ներդրումների զգալի մասը իրականացվում է վերաներդրման հաշվին:

Ինչպես վճարային հաշվեկշռում, այնպես էլ միջազգային ներդրումային դիրքում բարդություններ է առաջացնում ֆինանսական հոսքերի թերհաշվառման խնդիրը, ինչը խեղաթյուրում է տնտեսության իրական պատկերը և, հետևաբար, նվազեցնում պաշտոնական վիճակագրության հիման վրա կառուցվող դատողությունների կիրառելիությունը և իրականացվող քաղաքականության ազդեցությունը: